



21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

3 (79)

ԵՐԵՎԱՆ

2018

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

3 (79), 2018

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի

Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետհամալսարանի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Արա Մարջանյան

«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ՄԱԿ ԶԾ էներգետիկայի ազգային փորձագետ, տ.գ.թ.

Արամ Սաֆարյան

«Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ նախագահ, ք.գ.թ.

Բաբկեն Վարդանյան

«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն

Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Զավեն Եկավյան

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

Կարեն Վ. Կարապետյան

Տնտեսագիտության դոկտոր

Հրանուշ Հակոբյան

Իրավաբանության դոկտոր

Միհրան Դաբաղ

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Միլյուրքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

Մուշեղ Լալայան

ՀՀԿ փոխնախագահ

Ջորջ Կոստոպուլոս

Կիրենականությունից պրոֆեսոր (Աթենք, Հունաստան)

Սամվել Սանուկյան

«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ս.գ.թ.

Մերգեյ Գրինյան

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)

Վահագն Ազյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան

Տնտեսագիտության թեկնածու

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 3 (79), 2018թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒՆ
Գլխավոր խմբագիր Գագիկ Հարությունյան	Գագիկ Հարությունյան, Արա Մարջանյան Հոգևոր-տեխնոլոգիական ռեսուրսները և դաշնակցային հարաբերությունների հարցերը հիբրիդային իրողություններում 4
Գլխավոր խմբագրի տեղակալ Արա Մարջանյան	Արա Մարջանյան Գլոբալ տարածաշրջաններ, սերնդային ալիքներ և պատմական քաղաքականություն 17
Պատասխանատու խմբագիր Խոնարհիկ Քարառլյանյան	Քրիստինե Մելքոնյան Թուրքիան Երկրորդ աշխարհամարտի տարիներին. դաշնակիցներ և հակառակորդներ 36
Պատասխանատու քարտուղար Լուսինե Բաղրամյան	Տարոն Մարոյան Հայկական գործունը ռուս-թուրքական հարաբերություններում. պատմական ակնարկ 49
Արեստակես Միմավորյան Դիանա Գալստյան Կարեն Վերանյան Սամվել Սանուկյան Վահագն Ազյան Վահրամ Հովյան	Նավիթ Սաֆարյան Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում 59
	Ռոման Կարապետյան Ղարաբաղյան հիմնախնդիր. ստատուս քվոյի ամրապնդում, թե՞ պատերազմի նախապատրաստություն 67
	Գայանե Չոբանյան Իսլամի դերն «ադրբեջանական» ազգային ինքնության կերտման գործընթացում 79
	Հայկ Մարգարյան Փափուկ ուժի բաղադրիչը Հայաստան-Իրան փոխհարաբերություններում 96
	Վահրամ Հովյան Համեմատական սփյուռքագիտություն. հունական փորձ 107

**ՀՈԳԵՎՈՐ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ
ԵՎ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԸ
ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Գազիկ Հարությունյան, Արա Մարջանյան

Բանալի բառեր՝ հոգևոր և տեխնոլոգիական ռեսուրսներ, ԳՀՓԿՄ ծախսեր, հիբրիդային պատերազմներ, դաշնակիցներ:

Կասկած չի հարուցում, որ հասարակության զարգացումը մեծ մասամբ, եթե ոչ՝ հիմնականում, պայմանավորված է ձեռք բերված գիտելիքներով և այդ գիտելիքներն օգտակար տեխնոլոգիաների վերածելու կարողությամբ: Մրա հետ մեկտեղ՝ հասարակության և գիտատեխնոլոգիական ոլորտի կառուցողական զարգացումը հնարավոր է միայն համապատասխան հոգևոր, մշակութաքաղաքակրթական հենքի առկայության պարագայում: Դրա օրինակն է եվրոպական եկեղեցա-համալսարանական համակարգի ձևավորումը Կառլոս Մեծի հրամանով, որի կապիտուլյարիայով (կարգադրությամբ)՝ դեռևս 800թ. զանգվածաբար ստեղծվեցին վանական դպրոցներ. այս նախաձեռնությունը հետո արդեն անվանեցին «եվրոպական քաղաքակրթության մեծ խարտիա»: Այդ դպրոցների հիման վրա հետագայում ստեղծվեցին բազմաթիվ համալսարաններ, որոնք դարձան եվրոպական հոգևոր և գիտատեխնոլոգիական առաջընթացի լոկոմոտիվը:

Այդ նույն եվրոպական պատմությունից երևում է, որ հոգևոր արժեքների ձևախեղման ընթացքում «գիտելիքն անխուսափելիորեն ուժի վերածելու» գործելակերպը հաճախ հանգեցնում է ողբերգական վախճանի ինչպես սեփական պետության և հասարակության, այնպես էլ այլ երկրների ժողովուրդների համար: Իհարկե, կրոնական-հոգևոր պատկերացումների հետ գիտելիքների փոխհարաբերությունները միշտ չէ, որ հարթ են ընթացել

* «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

** «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., ՄԱԿ ազգային փորձագետ էներգետիկայի գծով:

(հիշենք թեկուզ ինկվիզիցիայի դարաշրջանը կամ էլ շարունակական միջդավանաբանական պատերազմները), սակայն գաղափարախոսական հակադրությունն այդ երկու կատեգորիաների միջև կարող է հանգեցնել լայնածավալ ողբերգության: Նման սցենար տեղի է ունեցել, օրինակ, Գերմանիայում, որը մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը առաջատար դիրք էր զբաղեցնում գիտատեխնոլոգիական ոլորտում¹, սակայն նացիստական գաղափարախոսությունը համաշխարհային մասշտաբի արհավիրքի հանգեցրեց: Այս դեպքն, ի դեպ, մեկ անգամ ևս ցայտուն ցույց է տալիս, որ լուրջ մեկ գաղափարախոսության մոնոպոլ գերիշխանությունը՝ անկախ աշխարհայացքային ուղղվածությունից, կարող է հանգեցնել ծանր փորձությունների ինչպես տվյալ երկրի, այնպես էլ առհասարակ համաշխարհային հանրության համար [1]: Սակայն ակնհայտ է և այն, որ հասարակության գիտատեխնոլոգիական, մտավոր աղքատացումը բերում է հոգևոր դեգրադացման, ինչն էապես արգելակում, եթե չասենք՝ անհնար է դարձնում տվյալ հասարակության որևէ զարգացում: Կարելի է փաստել, որ մտավոր և հոգևոր ոլորտների միջև գործում է կարծր հակադարձ կապ, և հասարակության կառուցողական զարգացման համատեքստում դրանք հանդես են գալիս որպես մեկ ամբողջություն: Ուստի, այս կատեգորիաների միջև անհրաժեշտ ռեսուրսային համամասնությունների պահպանումը հարկ է ընդունել որպես ազգային անվտանգության կարևորագույն խնդիր:

Վերը ներկայացված նկատառումների համատեքստում արդի իրողություններին պետք է վերաբերվել առանձնակի ուշադրությամբ: Երկրենտ աշխարհակարգի փլուզումից հետո «ազատ աշխարհի» գաղափարախոսները «հաջողությունից զլիսապտույտի մեջ ընկան». նրանք զգալիորեն արագացրին սեփական երկրներում «զարգացած», իսկ այլախոհների կարծիքով՝ «տոտալիտար» կամ «իմպերիալիստական» լիբերալիզմի կառուցման տեմպերը, ինչն ուղեկցվում էր այդ ունիվերսալ աշխարհայացքի գաղափարական հիմքերի բացարձակացմամբ և գոեհկացմամբ (նշենք, որ այս զբաղմունքը *post factum* նեոլիբերալներին հարազատացրեց տապալված «սոցճամբարի» բյուրոկրատացված նոմենկլատուրայի ներկայացուցիչների հետ): Ավելին, այդ նույն գաղափարախոսները (որոնց երկրները գիտության և ամեն տեսակ տեխնոլոգիաների բնագավառում առաջինն էին աշխարհում և դրա համար էլ հաղթեցին Սառը պատերազմում) սկսեցին արդեն

¹ Մրա ցայտուն դրսևորում կարող է ծառայել թեկուզև այն փաստը, որ Գերմանիայում 1930-ականների սկզբին ապրում էր նորեյան 32 մրցանակակիր՝ ավելի, քան աշխարհի ցանկացած այլ երկրում:

ձևախեղված գաղափարախոսական դոգմաներ սերմանել այն հասարակություններում, որոնք քաղաքակրթական կողմ միշտ չէ, որ համատեղվում էր ներդրվող մոդելի հետ: Միննույն ժամանակ, կիրառվում էր գիտելիքները ոչ կառուցողական ուժի վերածելու ողջ զինանոցը, մանավանդ այն դեպքում, երբ հին ձևերով չէին գործում (սովորական՝ ռազմական ներխուժման միջոցով), այլ՝ երբ կիրառում էին նոր տեխնոլոգիաներ՝ «գունավոր հեղափոխությունների» տիպի, որոնք պահանջում էին այն հասարակության բոլոր բնութագրերի հիմնավոր իմացություն, որտեղ կիրառվում էր այդ մեթոդը: Հատկապես նշենք, որ նման գաղափարախոսական ներխուժման ենթարկվող երկրներում երբեմն բավական զգալի գիտատեխնոլոգիական և կրթական ռեսուրսներ կային, որոնք կամ նպատակաուղղված ձևով ոչնչացվում էին, կամ էլ «փափուկ ռեֆորմացվում» էին՝ այդ նույն վերջնարդյունքով¹: Նման քաղաքականությունը թույլ է տալիս զուգահեռ անցկացնել այս գործընթացների և Երրորդ ռեյխի տխրահռչակ «Օստ» պլանի միջև, որը, մասնավորապես, նախատեսում էր գիտատեխնոլոգիական կառույցների վերացում օկուպացված արևելատերակայական երկրներում² [2, 3]: Զարմանալի չէ նաև այն, որ մտավոր հենքի վերացումը Մեծ Մերձավոր Արևելքի երկրներում նպաստել է իսլամական արժեքների ձևախեղմանն ու ռադիկալացմանը և դրանով իսկ հավելյալ ծանրակշիռ ազդակ է հանդիսացել ԻԼԻՊ ձևավորման գործում:

Գաղափարախոսական առումով իրականացվող ուլտրալիբերալ քաղաքականությունը կարող էր համեմատվել նաև կոմինտերնականի հետ: Մակայն, շնորհիվ այսպես կոչված «փափուկ ուժի», այսօր հասարակությունում գաղափարախոսական պատկերացումների ներդրման գործընթացը տեղի է ունենում շատ ավելի կոշտ ձևով, իսկ երբեմն էլ հանգեցնում է այն երկրների բնակչության զանգվածային ոչնչացման, որոնցում ներդրվում էին «առաջավոր գաղափարները»³, ինչը հիշեցնում է Պոլ Պոտի հայտնի արարքները Կամբոջայում: «Ներքին գաղափարական թշնամու» դեմ պայ-

¹ Ըստ չինացի ստրատեգների՝ երկրի նվաճման համար առավել արդյունավետ միջոց է հանդիսանում այնտեղ կրթության սեփական համակարգի ներդրումը:

² Багдасарян В., Либералы атакуют образование, <http://rusrand.ru/tv/globalnyy-process/liberaly-atakuyut-obrazovanie>.

³ Арутюнян Г., Мультиполярные реалии, Ближний Восток и геноцид в режиме бегущей строки, http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=12307&sphrase_id=63648. Նշենք նաև, որ այս համատեքստում կարելի է փոքր-ինչ ներողամտաբար վերաբերվել ԿԺԴ նիջուկային քաղաքականությանը, որն ինքնատիպ պաշտպանական մեխանիզմ է այլ երկրների միջամտության դեմ, չէ՛ որ դժվար չէ պատկերացնել այդ բնավ ոչ կատարյալ պետության հասարակության վիճակը հնարավոր ագրեսիայից հետո:

քարն այսօր նույնպես ավելի հմուտ է վարվում, քան անցյալի տոտալիտար ռեժիմներում. տեղեկատվա-լրատվական և տնտեսական ազդեցության «փափուկ» տեխնոլոգիաները թույլ են տալիս «լուծել ընդդիմախոսների հարցերը»՝ նրանց չուղարկելով (կախված ռեժիմի առանձնահատկությունից) գազախցիկներ կամ «եռյակի» տրիբունալ՝ «գնդակահարել» պարտադիր դատավճռով:

Մակայն, ինչպես և բոլոր ժամանակներում, հոգևոր և գիտական ոլորտների ներկայացուցիչները գտնում էին իրենց այլախոհական մտքերը հասարակությանը հասցնելու ձևերը: Եվ եթե առաջինները վախճանաբանական (էսխատոլոգիական) ժանրում վկայակոչում էին ավետարանական ճշմարտությունները (այն ոգով, որ ավելի շատ պետք է վախենալ նրանցից, ովքեր հոգին են սպանում, և ոչ թե նրանցից, ովքեր սպանում են մարմինը), ապա երկրորդները հրապարակում էին փաստարկված աշխատություններ «կուսակցության ու կառավարության» ուղեգծի կործանարարության մասին (տե՛ս, օրինակ, [4, 5]): «Հաղթանակած լիբերալիզմի» հասարակություններում այլախոհությանը զուգահեռ՝ գլոբալ հարթությունում խռովություն հասունացավ պարտադրվող դոգմաների դեմ, որոնք հանգեցնում էին ոչ միայն ինքնության կորստի, այլև ուղեկցվում էին քաղաքական թելադրանքով, սոցիալական ոլորտի և տնտեսության այլասերմամբ: Արդյունքում՝ գաղափարախոսական բողոքը ձեռք է բերել նաև աշխարհաքաղաքական չափում, և սկսվել է երկրորդ, այս անգամ՝ բազմաբևեռ «Մառը պատերազմը» [6]:

Այս դիմակայության արդյունքում գերիշխող համակարգը ցավոտ հարվածներ ստացավ և մի փոքր ընկրկեց իր դիրքերից՝ տեղը զիջելով բազմաբևեռ իրողություններին: Միևնույն ժամանակ, «հիբրիդային» բնույթ ընդունած առձակատուրը տարբեր աշխարհագրափարախոսական կենտրոնների միջև առայժմ լուրջ սկսել է բորբոքվել: Բնական է, որ այս պայքարում առաջնագիծ են դուրս գալիս գիտելիքներն ու տեխնոլոգիաները. իզուր չէ, որ ամերիկյան ստրատեգները կարծում են, թե նոր տիպի պատերազմներում գլխավոր գեները լինելու են դիմակայող կողմերի բանականությունն ու իմացական կարողությունները: Այսօր կան բոլոր հիմքերը կարծելու, որ նմանատիպ «հիբրիդային պատերազմները» բազմաբևեռ համակարգում ձեռք են բերում շարունակական բնույթ: Ավելին, հետևելով ռազմաքաղաքական մոդային՝ արդիական «հիբրիդային» հարաբերություններ են հաստատվում նաև առօրյա կյանքի շատ ոլորտներում, դրա համար էլ կարծես թե խաղաղ իրողությունները նույնպես ձեռք են բերում «հիբրիդային» ուրվագծեր: Դա թույլ է տալիս Ջորջ Օրուելի «պատերազմը խաղա-

դությունն է» հայտնի մարգարեությանը հավելել այն արտահայտությունը, որ «խաղաղությունը դա պատերազմն է»:

Բնական է, որ այսօրինակ խաղաղության ու պատերազմի պայմաններում հատուկ կարևորություն է ստանում դաշնակիցների հարցը, որոնց, իհարկե, ցանկալի է ընտրել գաղափարաքաղաքակրթական չափանիշներով: Հարկ է փաստել, որ այս գործում ամենաառաջավորն անգլոսաքսոնական հանրությունն է: Այնինչ, «Սլավոնական աշխարհը» փափուկ տեխնոլոգիաների ազդեցության արդյունքում գրեթե լիովին մասնագատված է, այսինքն՝ «հիբրիդային» իրողություններում շատ բան թելադրվում է քաղաքական կոնյունկտուրայով, և դաշնակիցները գոյանում են ոչ միայն գաղափարական հատկանիշներով (տե՛ս, օրինակ, [6]): Դրա համար էլ օրինաչափությունների և միտումների վերհանումն այս հարցում բավական հրատապ խնդիր է թվում և արժանի է ավելի հանգամանալի դիտարկման: Այս նպատակով օգտակար է դիմել տարբեր երկրների հանրային կարծիքին՝ դաշնակցային հարաբերությունների ձևավորման հարցում:

Այս համատեքստում մեծ հետաքրքրություն են ներկայացնում *WIN/Gallup International* ընկերության 2016թ. նոյեմբեր-դեկտեմբերին անցկացրած գլոբալ հարցման արդյունքները: Հարցումն իրականացվել է «Տարվա վերջը» (*End of the Year*)¹ ամենամյա նախագծի շրջանակներում, որի ընթացքում աշխարհի 68 երկրներում հարցման ենթարկվածներին տրվել է հետևյալ հարցը. «Աշխարհի ռազմական առավել մեծ պոտենցիալ ունեցող 6 երկրներից ԱՄՆ, Չինաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա և Հնդկաստան, ո՞րը կնախընտրեիք որպես դաշնակից Ձեր երկիր ռազմական ներխուժման պարագայում»²: Հարցման արդյունքներն ավելի վաղ վերլուծվել և ընդհանրացվել են մեր աշխատանքներում [7, 8]: Այստեղ կանգ կառնենք այն ասպեկտների վրա, որոնք չեն շոշափվել նշված հետազոտություններում:

Հիմնվելով հարցման արդյունքների վրա՝ *Աղյուսակ 1*-ում ներկայացված են առաջին 8 երկրների ցանկերը, որոնք որպես ռազմավարական դաշնակից ընտրել են ԱՄՆ-ը, ՌԴ-ն և Չինաստանը համապատասխանա-

¹ WIN/Gallup International. End of year 2016. Gallup International/Ромир, 02.05.2017, http://romir.ru/studies/904_1493672400/.

² Հարցման է ենթարկվել ավելի քան 66.5 հազ. մարդ: Յուրաքանչյուր երկրում հարցումն իրականացվել է ազգային ռեպրեզենտատիվ ընտրանքով: Ռուսաստանում դաշտային աշխատանքներն իրականացվել են Romir հետազոտական հոլդինգի կողմից՝ քաղաքային ռեպրեզենտատիվ ընտրանքով (1000 հարցվող), Հայաստանում՝ *Marketing Professional Group LLC* ընկերության կողմից, անձնական հարցման ճանապարհով, քաղաքային ռեպրեզենտատիվ ընտրանքով (1104 հարցվող): Միջինասիական հանրապետություններում և Վրաստանում հարցումներ չեն իրականացվել:

բար: Երկրների հերթականությունը բերվում է ըստ հարցվողների նախընտրությունների նվազման աստիճանի՝ արտահայտված տոկոսներով: Աղյուսակում նշված է նաև երկրների ընդհանուր թիվը, որտեղ հարցվողները նախընտրությունը տվել են այս կամ այն երկրին: Օրինակ, ԱՄՆ-ը ընտրվել է աշխարհի 44 երկրում, ՌԴ-ն և Չինաստանը՝ 22 երկրում (Մեծ Բրիտանիան՝ 21, Ֆրանսիան՝ 19, Հնդկաստանը՝ 7 երկրներում): «Ընտրվել են»-ն այստեղ նշանակում է, որ այս կամ այն երկրին նախապատվության աստիճանը շատ ավելի բարձր է, քան նախապատվության այն մեծությունը, որը ստացվել է հարցվողներից «նշվածներից և ոչ մեկը» տարբերակի համար, և ավելի բարձր է, քան հարցման արդյունքների վրիպման ընդգրկումը (3%): Ինչպես երևում է *Աղյուսակ 1*-ից, 68 երկրներից (որոնցում իրականացվել է հարցումը) միայն 10-ում է այս կամ այն տերությունը ընտրելը կրել վառ արտահայտված բնույթ՝ նախապատվության ավելի քան 65% աստիճանով: Այնպիսի երկրներ, որոնք ակնհայտ կնախընտրելին Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան կամ Հնդկաստանը, չեն եղել:

Աղյուսակ 1

ԱՄՆ-ը, ՌԴ-ն կամ Չինաստանը համապատասխանաբար որպես ռազմական դաշնակից ընտրած առաջին 8 երկրները, 2016թ., WIN/Gallup Int. Հարցվողների նախընտրության աստիճանը՝ ներկայացված է տոկոսներով, երկրների հերթականությունը՝ ըստ նախընտրությունների նվազման աստիճանի

No	ԱՄՆ, ընդամենը 44 երկիր		ՌԴ, ընդամենը 22 երկիր		Չինաստան, ընդամենը 22 երկիր	
41	Կոսովո	92%	Մոնղոլիա	71%	Պակիստան	772%
42	Հվ.Կորեա	81%	Հայաստան	67%	ՌԴ	444%
43	Պապուա Նոր Գվինեա	70%	Սերբիա	56%	Թաիլանդ	229%
44	Իսրայել	68%	Հունաստան	48%	Աֆղանստան	222%
45	Ֆիլիպիններ	67%	Չինաստան	47%	Նիգերիա	221%
46	Ալբանիա	66%	Բուլղարիա	42%	Պաղեստին	117%
47	Վիետնամ	66%	Ուկրաինա	33%	Սերբիա	116%
48	Ճապոնիա	64%	Սլովենիա	30%	Պարագվայ	116%

Հատկանշական է, որ յոթ երկիր ընտրել է ԱՄՆ-ը (Կոսովո, Հվ.Կորեա, Պապուա Նոր Գվինեա, Իսրայել, Ֆիլիպիններ, Ալբանիա, Վիետնամ), ինչը վկայում է դեպի ԱՄՆ այդ երկրների հասարակությունների կողմնորոշման և նրա հանդեպ վստահության բարձր աստիճանի մասին: Երկու երկրների հասարակությունները նման բարձր վստահությամբ վերաբերվում են

Ռուսաստանին՝ Մոնղոլիան և Հայաստանը, և միայն Պակիստանի հասարակությունն է, որ բավական միանշանակորեն ընտրել է Չինաստանը (հարցվողների 72%-ը): Հասկանալի է, որ այսպիսի ընտրությունն արդյունք է հնդկա-պակիստանյան երկարատև դիմակայության, որում Պակիստանը ռազմավարական առումով կողմնորոշված է համագործակցելու Չինաստանի հետ: Նման համագործակցությունը, որը հաստատված է ոչ միայն հանրային կարծիքով, այլ նաև երկարատև ռազմատեխնիկական և տնտեսական գործակցությամբ, պետք է դասել իսկական դաշնակցային հարաբերությունների կարգին:

Երկրորդ երկիրը, որտեղ Չինաստանը մեծ նախապատվություն է վայելում, Ռուսաստանն է (44%), ընդ որում՝ Ռուսաստանն ընտրել է Չինաստանում հարցվողների 47%-ը (Չինաստանը հինգերորդ երկիրն է, որն ընտրել է Ռուսաստանը): Այսինքն՝ այս երկու միջուկային երկրների՝ ՄԱԿ Անվտանգության խորհրդի անդամների փոխադարձ ձգողականությունը կազմում է միջինը 46%: Այսքան էական փոխադարձ ձգողականությունն էլ հենց հիմք է հանդիսանում ուժի՝ նշանակությամբ երկրորդ գլոբալ աշխարհաքաղաքական բևեռի ձևավորման համար (ավելի մանրամասն տե՛ս [8]): Թաիլանդը (3-րդ երկիր, 29%)¹ և Աֆղանստանը (4-րդ երկիր, 22%) գտնվում են Չինաստանի ձգողականության ոլորտում հիմնականում տնտեսական, ռազմատեխնիկական և հաղորդակցային գործոնների գծով²: Այդ ձգողականությանը հավելյալ նպաստում է զգալի (օրինակ՝ տարածքային) որևէ հակասության բացակայությունը նրանց միջև: Իսկ Աֆղանստանի պարագայում այն ուժեղանում է Աֆղանստանի, Չինաստանի, Տաջիկստանի և Պակիստանի միջև համագործակցության համակարգի ստեղծման իրողություններով, որը, մասնավորապես, կոչված է դիմակայելու հնարավոր ուղղորակական սպառնալիքին և ահաբեկչությանը:

Սերբիայի առկայությունն այն երկրների շարքում, որոնք ընտրել են Չինաստանը, ըստ մեզ, բացատրվում է ոչ այնքան տնտեսական կամ ռազմատեխնիկական գործոններով, որքան Ռուսաստանի հետ սերբական հասարակության ինքնատիպ համերաշխությամբ և ՌԴ-Չինաստան ռազմա-

¹ Թաիլանդում հարցվողների 38%-ն ընտրել է ԱՄՆ-ը (ԱՄՆ-ն ընտրած 34-րդ երկիր 44-ից):

² Համաձայն հեղինակավոր *janes.com*-ի, Չինաստանը և Թաիլանդը պայմանավորվել են ակտիվացնել պաշտպանական-արդյունաբերական համագործակցությունը դեռևս 2014թ., երբ Չինաստանի վարչապետ Լի Վեցյանն այցելել էր Թաիլանդ: 2017թ. փետրվարին Թաիլանդում առաջին անգամ ցուցադրվեցին չինական *KS-ICM* զենիթահրթիռային համակարգի տարրերը: Իսկ ավելի վաղ Թաիլանդը պաշտոնապես հաստատել էր չինական *VT-4* տանկեր գնելու մասին տեղեկատվությունը:

վարական դաշինքին աջակցությամբ՝ ի հակակշիռ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի [9]: Այսպիսով, Չինաստանի հետ դաշնակցային հարաբերությունների առումով Սերբիայի դիրքորոշումն ավելի շատ պայմանավորված է Չինաստանի հետ Ռուսաստանի ռազմավարական մերձությամբ, քան քաղաքակրթական ընդհանրության և հոգևոր մերձության վրա հիմնված իրական դաշնակցային հարաբերություններով:

Բոլորովին այլ է վիճակը Ռուսաստանի հետ Սերբիայի դաշնակցային համագործակցության պարագայում, որի օգտին արտահայտվել է սերբ հարցվողների 56%-ը (3-րդ երկիրն է, որ ընտրել է ՌԴ-ն): Այստեղ վճռորոշ դեր են խաղում, ըստ մեզ, պատմական գործոնն ու սլավոնական ժողովուրդների ընդհանրությունը: Ռուսաստանն ընտրած երկրների առաջին ութնյակում սլավոնական աշխարհի ևս երեք ներկայացուցիչների՝ Բուլղարիայի (42%, 6-րդ երկիր), Ուկրաինայի (33%, 7-րդ երկիր)¹ և Սլովենիայի (30%, 8-րդ երկիր)² առկայությունը հաստատում է այս տեսակետը: Հատկանշական է, որ 2016թ. վերջին Ռուսաստանը նախընտրել էր ուկրաինացի հարցվողների 33%-ը, չնայած այդ երկրների միջև գործնականում ռազմական դիմակայության³ առկայությանը: Այսինքն՝ այստեղ ևս կարևոր տեղ է զբաղեցնում այդ երկու ժողովուրդների քաղաքակրթական մերձությունը, թեև մենք հակված չենք չափազանցել «սլավոնական եղբայրության» դերը հայտնի քաղաքական իրադարձությունների համատեքստում: Օրինակ, հարցվողների 49%-ը Լեհաստանում ընտրել է ԱՄՆ-ը (24-րդ երկիր), ևս 10%-ը՝ Մեծ Բրիտանիան (21-րդ երկիր), իսկ Ռուսաստանը և մյուս տերությունները ստացել են 3%-ից պակաս⁴:

Միննույն ժամանակ, հատկանշական է, որ որպես դաշնակից Ռուսաստանն ընտրել են ինչպես Հայաստանը (67%, 2-րդ երկիր)՝ իբրև ՀԱՊԿ անդամ, այնպես էլ ՆԱՏՕ անդամ Հունաստանը (48%, 4-րդ երկիր): Մեր կարծիքով, դա հետևանք է ոչ միայն Օսմանյան կայսրության դեմ այդ երկրների ընդհանուր պայքարի, այլև ընդհանուր բյուզանդական արժեքներին և ավանդույթներին պատկանելության, որոնք այժմ այդ ժողովուրդները

¹ Հարցվողների 35%-ն Ուկրաինայում ընտրել է ԱՄՆ-ը (38-րդ երկիր), 11%-ը՝ Մեծ Բրիտանիան (11-րդ երկիր):

² Սլովենիայում հարցվողների 8%-ն ընտրել էր Մեծ Բրիտանիան (11-րդ երկիր):

³ Նշենք, որ ուկրաինացի հարցվողների 35%-ն ընտրել էր ԱՄՆ-ը: Այսպիսով, Ուկրաինան 44 երկրից 38-րդն է, որոնք ընտրել են ԱՄՆ-ը և 7-րդը, որ ընտրել է Ռուսաստանը:

⁴ Ավելացնենք, որ Չեխիայում հարցվողների 32%-ն ընտրել է ԱՄՆ-ը (41-րդ երկիր), 15%-ը՝ Մեծ Բրիտանիան (12-րդ երկիր), 6%-ը՝ Ֆրանսիան (19-րդ երկիր) և միայն 3%-ից պակասն է ընտրել Ռուսաստանը:

փորձում են վերածնել: Վերջապես, Ռուսաստանն ընտրած առաջին երկիրը Մոնդոլիան է (71%), իսկ հինգերորդը՝ միջուկային Չինաստանը (47%), ինչն ամենայն ակնհայտությամբ ընդգծում է ուժի երկրորդ գլոբալ աշխարհաքաղաքական բևեռի ասիա-խաղաղովկիանոսյան չափումը և մատնանշում Եվրասիական ինտեգրացիոն գործընթացի վեկտորը¹:

Ռուսաստանին նախապատվություն տվել է նաև ՆԱՏՕ անդամ ևս մեկ երկրի՝ Թուրքիայի հարցվողների 23%-ը (11-րդ երկիր, որն ընտրել է ՌԴ-ն), այն դեպքում, երբ աշխարհի մյուս առաջատար ռազմական տերությունները, ներառյալ ԱՄՆ-ը, այստեղ 3%-ից քիչ են հավաքել: Այս հանգամանքը, մեր կարծիքով, հետևանք է ոչ միայն ԱՄՆ-ի հանդեպ վերաբերմունքի նկատելի սառեցման՝ Թուրքիայում 2016թ. պետական հեղաշրջման փորձից հետո, կամ էլ Եվրոպայից ընդհանուր հիասթափության՝ կապված Թուրքիայի մուտքը ԵՄ չթույլատրելու հետ: Նման արդյունքը պայմանավորված է նաև Թուրքիայի բնակչության ազգային կազմով, թուրքական հասարակությունում տարբեր էթնիկական և կրիպտոազգային խմբերի (հայկական, հունական և այլն) բազմավեկտոր կողմնորոշմամբ: Այս եզրահանգումը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ *WIN/Gallup Int*-ի հարցումը Թուրքիայում իրականացվել է ազգային ռեպրեզենտատիվ ընտրանքի հիման վրա: Հասկանալի է, որ Թուրքիայում հարցվողների 31%-ը առաջադրված հարցի համար ընտրել է պատասխանի «նշված 6 առաջատար տերություններից և ոչ մեկը» տարբերակը²:

ԱՄՆ-ը որպես դաշնակից նախընտրելու ամենաբարձր աստիճանն ըստ հարցման տվյալների նշվել է Կոսովոյում (92%, ԱՄՆ-ն ընտրած 44 երկրից 1-ինը), ինչը զարմանալի չէ, քանի որ հենց ԱՄՆ-ին է (և ՆԱՏՕ-ին) Կոսովոն պարտական իր գոյության փաստով: ԱՄՆ-ն ընտրել է Ալբանիայի հարցվողների 66%-ը (ԱՄՆ-ն ընտրած 6-րդ երկիր, և մոտիվացիան այստեղ նույնպես պայմանավորված է Կոսովոյի հարցում ԱՄՆ դիրքորոշմամբ): Բավական բարձր է ԱՄՆ-ին նախընտրելու աստիճանը Հվ. Կորեայում (81%, 2-րդ երկիր) և Ճապոնիայում (64%, 8-րդ երկիր), ինչը, հասկանալի է, արդյունք է տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրողությունների, որոնք պատմականորեն ստեղծվել են Ասիա-խաղաղովկիանոսյան տարածաշրջանում Երկրորդ համաշխարհային և Կորեական պատերազմներից

¹ Հիշեցնենք, որ միջինասիական հանրապետություններում հարցում չի իրականացվել: Կարելի է մեծ համոզվածությամբ ենթադրել, որ հակառակ պարագայում այստեղ ևս Ռուսաստանն ու Չինաստանը կգրադեցնեին առաջատար դիրքեր:

² Իրավիճակը նույնն է նաև Իրանում՝ հարցվողների 30%-ը նույն պատասխանն է տվել:

հետո, ինչպես նաև այն ընդհանուր մտահոգության արդյունքն է, որ ստեղծվել է այդ երկրներում Չինաստանի վերելքի և Հս. Կորեայի աճող ռազմական հզորության պատճառով: ԱՄՆ-ի հետ դաշնակցային հարաբերությունների հանրային աջակցության աստիճանը բարձր է նաև Իսրայելում, որտեղ հարցվողների 68%-ը նախընտրել է ԱՄՆ-ը (4-րդ երկիր): Այս երկրում հարցման ենթարկվածների պրագմատիկության մասին է վկայում այն, որ լորդ Բալֆուրի՝ «Պաղեստինում հրեա ժողովրդի համար ազգային օջախ ստեղծելու» մասին հռչակագրի 100-ամյակի տոնակատարության նախօրեին Մեծ Բրիտանիային իր նախապատվությունն է տվել հարցվողների ոչ ավելի, քան 3%-ը: Այս համատեքստում ուշագրավ է թվում նաև հետևյալ հանգամանքը:

ԱՄՆ-ն ընտրած առաջին 8 երկրների շարքում չկա և ոչ մի երկիր «Անգլոսաքսոնական աշխարհից»¹: Ընդհակառակը, այստեղ կան երկու նորմալիզատոր-երկրներ² «Հիերոգլիֆների աշխարհից»՝ Հվ. Կորեան և Ճապոնիան, և էլի երկու երկիր, որոնք հարում են այդ աշխարհին՝ Ֆիլիպինները և Վիետնամը: Եվ սա՝ չնայած այն բանին, որ թե՛ Վիետնամի, թե՛ Ճապոնիայի հասարակություններն ԱՄՆ-ին հիշեցնելու բան ունեն: Նման իրավիճակը, ըստ մեզ, վկայում է այն արդյունավետ մեխանիզմի մասին, որը մշակել է ԱՄՆ-ը և ուղղել պատմական վիրավորվածությունը հաղթահարելու, իր հետ դաշնակցային հարաբերություններ պարտադրելու գործին: Այդ մեխանիզմն առաջին հերթին ուղղված է այլ աշխարհների՝ «Հիերոգլիֆների աշխարհի», «Կիսալուսնի աշխարհի», «Սլավոնական աշխարհի» և «Մայրցամաքային Եվրոպայի» նորմալիզատոր-երկրներին (ավելի մանրամասն տե՛ս [10]): Հատկանշական է, որ ս.թ. նոյեմբերին Խաղաղօվկիանոսյան Ասիա կատարած իր մեծ շրջագայության ժամանակ ԱՄՆ նախագահ Դ.Թրամփն այցելեց Ճապոնիա, Հվ. Կորեա, Վիետնամ և Ֆիլիպիններ: Իսկ ավելի վաղ (2017թ. մայիսին) նա այցելել էր նաև Իսրայել: Եվ սա բացատրվում է ոչ միայն Հս. Կորեայի հրթիռամիջուկային պոտենցիալի մեծացման հետ կապված ընդհանուր մտահոգությամբ կամ արաբա-իսրայելական կարգավորման վայրիվերումներով: Կարծում ենք, որ ավելի հիմնարար մակարդակում այս երթուղին թելադրված էր գլոբալ դաշնակցային հարաբերությունների ամրապնդման խնդրով: Չէ՞ որ նշված երկրները կազմում են ԱՄՆ-ը որպես ռազմավարական դաշնակից ընտրած առաջին 8 երկրների կեսից ավելին:

¹ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Կանադա, Նոր Զելանդիա [10]:

² Հիշեցնենք, որ երկրների այս խմբի նորմալիզատոր-երկիր մենք անվանում ենք սույն խմբի ԳՀՓԿՄ ամենամեծ պոտենցիալն ունեցող երկիրը: Ավելի մանրամասն տե՛ս [10].

Ինչպես արդեն նշեցինք, ԱՄՆ-ն ընտրած առաջին 8 երկրների մեջ չկա «Անգլոսաքսոնական աշխարհի» և ոչ մի երկիր՝ Կանադա (9-րդ), Մեծ Բրիտանիա (11-րդ), Ավստրալիա (23-րդ): Հատկանշական է նաև, որ Չինաստանն ընտրած առաջին 8 երկրների մեջ չկա «Հիերոգլիֆների աշխարհի» և ոչ մի երկիր: Փոխարենը նրանք կան ԱՄՆ-ն ընտրած երկրների շարքում, ընդ որում՝ բավական բարձր դիրքերում (տե՛ս *Աղյուսակ 1*): Իսկ ահա Ռուսաստանն ընտրած առաջին 8 երկրների մեջ կան «Սլավոնական աշխարհի» որոշ երկրներ, բայց այդ խմբի նորմալիզատոր-երկրների՝ Չեխիայի և Սլովենիայի հարցվողները (տե՛ս [7]), այնուամենայնիվ, նախընտրել են ԱՄՆ-ը: Մեր կարծիքով, սա հաստատում է մեր եզրահանգումն [7, 8] առ այն, որ երկրների միակ կոնֆիգուրացիան, որն ի գորու կլինի մրցակցել կոնսոլիդացված «Անգլոսաքսոնական աշխարհի» հետ, կարող է լինել երկրների «Մայրցամաքային դաշինքը», որը կներառի ՌԴ-ն, Չինաստանը, Գերմանիան և Իրանը:

Նոյեմբեր, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Арутюнян Г.А.*, Критические инфраструктуры и идеология, «21-й ВЕК» #2 (43), с. 5, 2017.
2. *Арутюнян Г.А.*, Информационные и деиндустриализованные общества, «21-й ВЕК», #4 (41), с. 5, 2016.
3. Տեղեկատվական անվտանգություն (խմբ.՝ Հարությունյան Գ.Ա.), Երևան, «Նորավանք», 2017, 316 էջ:
4. *Крауч К.*, Постдемократия, М., Изд. дом Гос. ун-та – Высшей школы экономики, 2010.
5. *Adrian Pabst*, A post-liberal World? Constructive alternatives to liberal globalization amid the threat of neo-fascism. *Special report*, DOC Reasearch Institute, 2017.
6. *Тер-Арутюнянц Г.А.*, Многополярная и ассиметричная Холодная война // Вестник Академии военных наук, М., #4(21), с. 23. 2007.
7. *Марджанян А.А., Арутюнян Г.А.*, Союзники на фоне научно-технологического пейзажа. Материалы Третьей международной конференции «Экспорт демократии» и сетевые технологии. Фонд исторической перспективы / РГГУ, Москва, 18 мая, 2017.
8. *Марджанян А.А.*, Научно-информационная политика и гибридные войны, «21-й ВЕК», #4 (45), с. 18-33, 2017.
9. Four NATO Nations Would Pick Russia to Defend Them If Threatened: Poll. *Bloomberg News*, February 17, 2017 <https://www.bloomberg.com/politics/articles/2017-02-17/melania-trump-s-slovenia-would-pick-russian-over-u-s-protection>.

10. Հարությունյան Գ. Ա., Մարջանյան Ա. Հ., Բազմակենսորոն աշխարհակարգի գիտատեխնոլոգիական բնապատկերը, *Արտյոնյան Գ. Ա., Մարջանյան Ա. Ա., Научный ландшафт в полицентричном мире // «21-րդ դար», 3 (73), 2017, http://noravank.am/arm/journals/details.php?ELEMENT_ID=15741*

**ՀՈԳԵՎՈՐ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԸ ՀԻՔՐԻԴԱՅԻՆ
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Գագիկ Հարությունյան, Արա Մարջանյան

Ամփոփագիր

Հոդվածում ցույց է տրված, որ հասարակությունների կառուցողական զարգացումը հնարավոր է միայն մշակութա-քաղաքակրթական և գիտելիքային ռեսուրսների միջև դրական հակադարձ կապի առկայության պարագայում, և այս նախապայմանը առավել կարևորվում է ներկայիս գլոբալ ու բազմաբևեռ հիբրիդային հակամարտությունների պարագայում: Ստեղծված իրողությունը իր հերթին ակտուալացնում է տարբեր երկրներում դաշնակիցների ընտրության խնդիրը: Այդ վերջինի համատեքստում վերլուծվել է 2016թ. *WIN/Gallup Int.*-ի կողմից իրականացված ծավալուն հարցումը, որի նպատակն էր պարզել աշխարհի 68 երկրների հասարակությունների նախապատվությունները ռազմական դաշնակից ընտրելու խնդրում: Կատարված վերլուծության արդյունքում վերհանվել են որոշ երկրների հասարակությունների քաղաքակրթական – մշակութային և քաղաքական-տնտեսական բնույթի այն դրոշմապատճառները և պատկերացումները, համաձայն որոնց նրանք որպես ռազմական դաշնակից նախընտրել են, մասնավորապես, ՌԴ-ն, ԱՄՆ-ը կամ Չինաստանը:

**ДУХОВНО-ТЕХНОЛОГИЧЕСКИЕ РЕСУРСЫ И ВОПРОСЫ
СОЮЗНИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ ПРИ ГИБРИДНЫХ РЕАЛИЯХ**

Гагик Арутюнян, Ара Марджанян

Резюме

В статье показано, что конструктивное развитие обществ возможно только при наличии обратной положительной связи между культурно-цивилизационными и знаниевыми ресурсами, и это условие особенно важно в контексте современ-

ных глобальных и мультиполярных гибридных конфликтов. Создавшееся положение в свою очередь актуализирует в разных странах задачу выбора своих союзников. В этом контексте проанализирован масштабный опрос *WIN/Gallup Int.* за 2016г., призванный уточнить предпочтения обществ 68 стран относительно выбора стратегического союзника. В результате анализа были выявлены те цивилизационно-культурные и политико-экономические причины и представления обществ рассматриваемых стран, которые предопределили выбор в качестве стратегического союзника, в частности, РФ, США или Китая.

SPIRITUAL AND TECHNOLOGICAL RESOURCES AND ISSUES OF ALLIANCE MAKING IN HYBRID REALITIES

Gagik Harutyunyan, Ara Marjanyan

Resume

The article shows that the constructive development of societies is possible only if there is a positive interconnection between the cultural/civilizational and knowledge resources. This precondition is especially important in the current conditions of global and multi-polar hybrid confrontations. This reality, in turn, makes the issue of choosing alliances among different countries an exceptionally relevant matter. In this context, the article analyzes the results of a large-scale survey conducted by WIN/Gallup Int. in 2016 in 68 countries of the world to find out public preferences in selecting military allies. As a result of the analysis, the politico-cultural and politico-economic motives and perceptions have been uncovered, prompted by which the societies in some countries choose military allies, particularly when such choice falls on Russia, USA or China.

**ԳԼՈՒԲԱԼ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ,
ՍԵՐՆԴԱՅԻՆ ԱԼԻՔՆԵՐ ԵՎ
ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Արա Մարջանյան*

Բանալի բառեր՝ «Հյուսիս» և «Հարավ» գլոբալ տարածաշրջաններ, Բրանդի հանձնաժողով, Բրանդի գիծ, Բրանդի նոր գիծ, սեռատարիքային դիագրամ, սերնդային ալիք, «քաղաքակրթական խզում»:

*Գեղեճ Միսակի Մարջանյանի
(1907-1977թթ.) հիշատակին*

1. Աշխարհի աշխարհները

Լեզվաքաղաքակրթական, աշխարհաքաղաքական և տնտեսական հատկանիշներով մոլորակի տարածաշրջանների վերաձևավորումն արդի ժամանակների գուցե ոչ այնքան նկատելի, սակայն իրապես գլոբալ մասշտաբի երևույթ է, համադրելի, թերևս, կլիմայի մարդածին փոփոխության հետ: Այն արտահայտվում է այնպիսի գործընթացներում, ինչպիսիք են բազմաբևեռ աշխարհակարգի գոյացումը, ուժային կենտրոնների կողմից բնական պաշարների հանդեպ վերահսկման վերաբաշխումը, հիբրիդային հակամարտությունների գոյացումը, ժողովրդագրական փոփոխություններն ու զանգվածային միգրացիան, սոցիալական բևեռացումը, անհավասարության խորացումը, քաղաքական դաշտի «աջականացումը», մարդկության ռացիոնալ մտածելակերպի անկումը, կղերականության և սնահավատության մեր օրերի «գարթոնքը»:

Այս երևույթների ուսումնասիրությանն են նվիրված մի շարք ծավալուն և համալիր հետազոտություններ [1, 2]: Բսկ դրանց մասնավոր ասպեկտներին նվիրված գրականությունն արդեն անհամբերելի է: Մինչդեռ հայրենական մասնագիտական գրականությունն այս առումով զարմանալիորեն աղքատիկ է, ինչն ինքնին մտահոգիչ է և դառնում է էլ ավելի մտահո-

* «Նորավանք» ԳԿՀ գիտության գծով փոխտնօրեն, տ.գ.թ.:

գիշ, քանի որ մասնագիտական լուսաբանման բացակայության հետևանքով գոյացած «պարապ դաշտը» լցվում է անհամարժեք ինֆոգաղափարախոսական կարծրատիպերով և «մեմերով»¹: Ուրախալի է, որ վերջերս «Նորավանք» ԳԿՀ նախաձեռնությամբ այս ուղղությամբ կատարվել են մի շարք ուսումնասիրություններ: Մասնավորապես, «Աշխարհի աշխարհների» գոյացման արդի միտումները դիտարկվել են գիտահետազոտական և փորձարար-կոնստրուկտորական (*R&D, НИИОКР*) աշխատանքների վրա ազգային ծախսերի մակարդակի տեսանկյունից [7]: Քննվել է տարածաշրջանների և դրանց *կենտրոնարար* երկրների միջև «ռազմավարական ձգողականության» ուժը՝ դաշնային հարաբերությունների կազմման գործում [8]: Դիտարկվել են «Աշխարհի աշխարհների» գոյացման սահմաններին հիբրիդային պատերազմների որոշ ասպեկտները [9, 11]: Վեր է հանվել այս գործընթացներում գաղափարախոսական ներդաշնակ *տրիադայի* առկայության կարևորությունը [10] և այլն: Սակայն իրավիճակն այստեղ դժվար է գոհացուցիչ համարել [12]: Սույն հոդվածը շարունակում է այս ուսումնասիրությունների ուղղվածությունը՝ դիտարկումների մեջ ներառելով ժողովրդագրական դինամիկայի որոշ հատկանիշներ:

2. «Հյուսիս» և «Հարավ» գլոբալ տարածաշրջաններ

Մկսենք գլոբալ «Հյուսիս» և «Հարավ» տարածաշրջաններից: Ոչ միայն նրա համար, որ դրանք խնդրո առարկա դիտարկումների դասական դարձած հասկացություններն են, այլև նրա համար, որ մեզանում դրանք զարմանալիորեն քիչ են դիտարկվել²: Այս տարածաշրջանների սահմանումը և դրանց միջև տնտեսական խզման փաստումը սկիզբ են առնում անցած դարի 70-ականների վերջից, Ռոբերտ Մակնամարայի³ 1977թ. նախաձեռնությամբ

¹ Հունարեն *mimeme* (կրկնօրինակել, միմոսել) բառից: Լայն իմաստով՝ մշակութային ինֆորմացիայի միավոր, որը, գենետիկայում գենի օրինակով, կրկնօրինակվում և փոխանցվում է մեկ կրիչից (անհատ, մարդկային խումբ, հանրություն, սերունդ) մյուսին և ենթակա է մուտացիաների, բնական ընտրության և սելեկցիայի: Ներմուծվել է Ռ.Դոկինզի կողմից 1976-ին, «Եսասեր գեն» գրքի վերջում, մանրամասնվել նրա ավելի ուշ՝ «Ընդլայնված ֆենոտիպ» աշխատությունում [4]: *Մեմի* որպես օտարածին վիրուսի կամ վնասակար ինֆորմացիոն կողի ընկալմանը հանդիպում ենք արդեն Դոկինզի մոտ: Հետագայում այս ընկալումը խորանում և ընդլայնվում է՝ ներմուծվելով գաղափարախոսական և ռազմագիտական դաշտ [5], տե՛ս նաև [6]:

² Այս առնչությամբ մեր ավելի վաղ հոդվածում [8] առիթ ունեցել էինք անդրադառնալ Ա.Ազիմովի 1949թ. գրած «*The Evitable Conflict*» մարգարեական պատմվածքին:

³ *Robert S. McNamara*, Հենրի Ֆորդ 2-րդի այսպես կոչված «հրաշք պատանիների տասնյակի» անդամ (1946-1960թթ.), «Ֆորդ» ընկերության առաջին, ոչ այս ազգանունը կրող, ղեկավար (1960-1961թթ.), ԱՄՆ պաշտպանության նախարար (1961-1968թթ.), Համաշխարհային բանկի (ՀԲ) ղեկավար (1968-1981թթ.):

ստեղծված և ՄԱԿ հովանու ներքո գործող Միջազգային զարգացման խնդիրների անկախ հանձնաժողովի (*UN ICIDI*) աշխատանքներից [13]: Այն գլխավորեց Վիլի Բրանդը¹, իսկ հանձնաժողովի ոչ պաշտոնական անվանումը այդուհետ մնաց «Բրանդի հանձնաժողով» (1977-79թթ.):

Հանձնաժողովի առաջին զեկույցում (1980թ.) ներմուծվել էր այսպես կոչված «Բրանդի գիծ» հասկացությունը՝ հիմնված երկրների տեսակարար ՀՆԱ ցուցանիշի (ԱՄՆ \$/մարդ, ընթացիկ գներ) վրա, որն աշխարհը բաժանում էր, այսպես ասած, «զարգացած և հարուստ» Հյուսիսի և «զարգացող ու աղքատ» Հարավի: Քարտեզ 1-ում բերում ենք Բրանդի «1-ին հանձնաժողովի» դասական քարտեզը, ուր պատկերված է նաև «Բրանդի գիծը»: Ինչպես տեսնում ենք, այն անցնում է մոլորակի հյուսիսային կիսագնդի մոտավորապես -30° լայնության երկայնքով՝ ԽՍՀՄ արևելյան վերջնամասում կտրուկ շրջվելով դեպի հարավ, ներառելով Ճապոնիան ու Ավստրալիան և դուրս թողնելով «Հյուսիս» տարածաշրջանից Հր.Կորեան ու ողջ Հարավարևելյան Ասիան: Բրանդի «1-ին հանձնաժողովի» եզրակացությունները խորացվեցին 1983թ. հանձնաժողովի 2-րդ հաշվետվությունում և նորացվեցին Ջ.Քվիլիգանի կողմից 2001-ին [13]:

Կառուցողական քննադատության հետևանքով անհրաժեշտ համարվեց ընդլայնել «Բրանդի գիծ» մոնոտոնտեսական սահմանումը և տեսակարար ՀՆԱ ցուցանիշից բացի դիտարկումների մեջ ներառել երկրների սոցիալական և ժողովրդագրական դինամիկայի որոշ ցուցանիշներ: Հատկանշական քննարկումներից հետո, որոնց վրա այստեղ կանգ չենք առնի, «Հյուսիս» և «Հարավ» տարածաշրջանների ավելի համարժեք սահմանման համար նպատակահարմար համարվեց դիտարկել երկրների ևս երեք ցուցանիշ.

- բնակչության կառուցվածքը՝ ըստ քաղաքային և գյուղական բնակչության,
- բարձրագույն կրթություն ստացած բնակչության մասնաբաժինը,
- բնակչության սեռատարիքային դիագրամը՝ ըստ *կոհորտների* (տարիքային խմբերի):

«Հյուսիս» տարածաշրջանի երկրների համար հատկանշական համարվեց ոչ միայն տեսակարար ՀՆԱ մեծ արժեքը (ավելի քան \$10.7 հազ./մարդ,

¹ Վիլի Բրանդ (*Willy Brandt*) - Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ԳՖՀ) կանցլեր (1969-74թթ.), Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր (1971թ.), Եվրախորհրդարանի անդամ (1979-1983թթ.), *Սոցիալիստների* նախագահ (1976-92թթ.), «Եվրոպական մեծ տրիումվիրատի» (Վ.Բրանդ, Բ.Կրայսկի, Ու.Պալմե) անդամ: ԳՖՀ կանցլերի պաշտոնը լքեց այն բանից հետո, երբ իր օգնականի (*Günter Guillaume*) կողմից մեղադրվեց ԳԴՀ գործակալ լինելու մեջ:

2010թ. հաստատուն ԱՄՆ\$)¹, այլև քաղաքային բնակչության գերակայումը, բարձրագույն կրթությամբ բնակչության հատվածի շոշափելի մասնաբաժինը և բնակչության այսպես կոչված «շրջված» սեռատարիքային դիագրամը:

Քարտեզ 1

Գլոբալ «Հարավ» և «Հյուսիս» տարածաշրջանները և «Բրանդի գիծ», 1980թ.



Խիստ բնութագրական է այն հանգամանքը, որ այս կերպ ընդլայնված «Բրանդի գիծ» հասկացությունը գրեթե չփոխեց «Հյուսիս» և «Հարավ» տարածաշրջանների գլոբալ կոնֆիգուրացիան, և այս կերպ սահմանված աշխարհի քարտեզը գրեթե չտարբերվեց Քարտեզ 1-ի վերևում բերվածից: Նկատենք, որ Հայաստանը (ավելի ճիշտ՝ ՀԽՍՀ-ն) ներառված էր «գարգացած և հարուստ» Հյուսիս տարածաշրջանում՝ թե՛ Բրանդի գծի դասական (1977-80թթ.), թե՛ դրա ընդլայնված (1983-85թթ.) սահմանման պարագայում [13]: Այս փաստերը շարադրեցինք հաջորդ չորս դիտարկումները կատարելու համար:

3. Որտե՞ղ է գտնվում Հայաստանը

Այսօր, իմաստնացած վերջին երեք տասնամյակների փորձով, նայելով դեպի անցած դարի 80-ականներ, կարելի է հստակ նշմարել այն հանգամանքը, որ Ռ.Մակնամարայի նախաձեռնությունը և Բրանդի հանձնաժողովի աշխատանքները գալիք տեկտոնական մասշտաբի աշխարհաքաղաքական վերափոխումների կանխագագումն էին՝ ծլարձակված *դետանտի* և ԱՄՆ-ԽՍՀՄ

¹ Երկրների տեսակարար ՀՆԱ ցուցանիշները բերվում են 2010թ. հաստատուն ԱՄՆ դոլարի, ԱՄՆ Աշխատանքի բյուրոյի կողմից սահմանված գործակիցներով [3]:

1973-75թթ. մերձեցման իրողություններում, հասունացած 1975թ. Հելսինկիի եզրափակիչ ակտի ստորագրմամբ ստեղծված նպաստավոր պայմաններում: Յուրօրինակ մի փորձ՝ դուրս գալ XX դարի 2-րդ կեսի երկրներ աշխարհի գաղափարախոսական նեղ կաղապարներից և գալիք գլոբալ ձևափոխումների հետևում փորձել նշմարել իրական պատկերը: Շատ ավելի բարդ ու բազմակողմանի, քան ենթադրում էին «ազատ աշխարհ» և «սոցիալիստական երկրների բլոկ» գաղափարախոսական շարժումները: Այս առումով Բրանդի հանձնաժողովը, ըստ էության, շարունակում էր 1968թ. Ա.Պեչիի «Հռոմի ակումբի» ռացիոնալիստական ինտելեկտուալ ձեռնարկումը [14]՝ գիտական և անալիտիկ տիրույթից հասցնելով այն պրակտիկ միջազգային քաղաքականություն և աշխարհաքաղաքականություն:

Եվ ճիշտ ինչպես Արևմուտքում ժամանակի ընթացքում մարեց «Հռոմի ակումբի» ռացիոնալիստական հոգին, իսկ ուշ 1980-ականների և վաղ 90-ականների «Ակումբի» արդեն լուսանցքային դարձած աշխատանքներում կորավ ինտելեկտուալ խորությունը, այդպես էլ ԽՍՀՄ փլուզումից հետո արագ այլասերվեց ու մոռացության մատնվեց Բրանդի հանձնաժողովի և Ա.Պեչիի ժառանգությունը¹՝ գաղափարախոսական վակուումի և չամրացած ռացիոնալիստական ավանդույթների պարագայում տեղի տալով նոր պարզունակ գաղափարախոսական կարծրատիպերի հաստատմանը: Հետխորհրդային տարածքում «Հյուսիս» գլոբալ տարածաշրջանն արագ սկսեց հոմանիշվել «ոսկյա միլիարդ»² շարժնի հետ՝ այդքան տարածված ռուսալեզու (և, ավաղ՝ հայալեզու) հրապարակախոսական, անզամ մասնագիտական գրականությունում:

Արևմտյան, հիմնականում՝ անգլերեն մասնագիտական գրականությունում այստեղ առկա է երկու մոտեցում, որոնք կարելի է բխեցնել համապատասխանաբար Մակնամարայի և Բրանդի ժառանգությունից: Այսպես, ԱՄՀ/ՀԲ (*IMF/WB*) մոտեցմամբ աշխարհի երկրները դասակարգվում են երեք խմբի՝ ըստ համախառն ազգային եկամտի (ՀԱԵ, *GNI*) տեսակարար մեծության՝ ցածր (*LIC*, \$1005/մարդ և ցածր), միջին (*MIC*) և բարձր (*HIC*,

¹ Այդ թվում ԽՍՀՄ ԳԱ կազմում 1968թ. հիմնադրված Կոնկրետ սոցիալական հետազոտությունների ինստիտուտի (*ИКСИ АН СССР*, ներկայում՝ *Институт социологии РАН*, դրա ստեղծման մասին տե՛ս [15]), ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի կողմից 1972թ. Լաքսենբուրգում համատեղ հիմնադրված Կիրառական համակարգային հետազոտությունների միջազգային ինստիտուտի (*IASA*), ԽՍՀՄ ՄԻ Գիտության պետական կոմիտեին կից գործող Համակարգային հետազոտությունների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի (*ВНИИСИ*, 1976թ.) աշխատանքները:

² Ռուսալեզու հրապարակախոսական դաշտ այս եզրը մտցվե՞ծ 1990-ին Ա.Ցիկունովի կողմից (*А.К. Цикунев*, կեղծանունը՝ «*А. Кузьмич*») [17]:

\$12236/մարդ և ավելի) եկամուտով երկրներ [3]: Սկսած 1983-ից՝ *MIC* երկրների խումբն իր հերթին դասակարգվում է երկու ենթախմբի՝ միջին-ցածր (*LMIC*) և միջին-բարձր (*UMIC*) եկամուտով երկրներ¹: Հայաստանը և Վրաստանն այս մոտեցմամբ դիտարկվում են *LMIC* խմբում 2002-ից և 2003-ից համապատասխանաբար, իսկ Ադրբեջանը՝ *UMIC* խմբում, սկսած 2009-ից: Աշխարհագրական տեսանկյունից՝ ըստ ԱՄՆ/ՀՖ դասակարգման, Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը գտնվում են «Եվրոպա և Կենտրոնական Ասիա» (*Europe and Central Asia*) տարածաշրջանում: Այս մոտեցումը, Մակնամարայի նման, պրագմատիկ է, որոշակի առումով՝ մոնոտոնտեսական և խուսափում է ընդհանուր բնույթի գնահատականներից («գարգացած», «հարուստ» և այլն):

ՄԱԿ-ն, իր հերթին, աշխարհի երկրները դասակարգում է երկու գլոբալ՝ «գարգացած» (*developed*) և «գարգացող» (*developing*) խմբերի՝ հիմք ընդունելով հիմնականում մարդկային զարգացման ինտեգրալ ցուցիչ (*HDI*) և մի շարք այլ ցուցիչների արժեքները, խուսափելով տարածական կապակցվածություն ենթադրող «տարածաշրջան» եզրի օգտագործումից²: Հատկանշական է, որ ՄԱԿ-ը նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետությունները (բացի Բալթյան հանրապետություններից) տեղակայում է հատուկ սահմանված «Անցումային տնտեսությամբ երկրներ» (*Economies in transition*) խմբի «ԱՊՀ» ենթախմբում [3]: Այս խմբի մյուս՝ «Հարավարևելյան Եվրոպա» (*South-Eastern Europe*) ենթախումբը ներառում է Ալբանիան և նախկին Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության երկրները: Հատկանշականն այստեղ այն է, որ անգամ 2009-ին ԱՊՀ կազմից Վրաստանի դուրս գալու փաստը չփոխեց այս մոտեցումը, ինչպես, հավանաբար, ակնկալում էին այդ երկրի արևմտամետ ուժերը: ՄԱԿ-ը պարզապես ընդլայնեց «ԱՊՀ» ենթախմբի անվանումը՝ դրան կրկին կցելով Վրաստանը: Այժմ այն կոչվում է «ԱՊՀ և Վրաստան» (*Commonwealth of Independent States and Georgia*)³: Այսպիսով, ՄԱԿ մոտեցումը կոմպրոմիսային է, ինչպես որ մեծ հաշվով կոմպրոմիսային էին և Վ.Բրանդի ֆիզուրն ու գործունեությունը: Իսկապես, այս մոտեցմամբ թեև օգտագործվում են գնահատողական բնույթի սահմանումներ («գարգացած», «գարգացող» երկրներ), բայց նաև խուսա-

¹Ներկայում՝ \$1006-\$3955/մարդ միջին-ցածր (*LMIC*) և \$3956-\$12235/մարդ միջին-բարձր (*UMIC*):

²Տոպոլոգիական առումով խումբը (կամ բազմությունը) կարող է լինել դիսկրետ և ոչ կապակցված (*connected, связанная*): Իսկ «տարածաշրջանը» ենթադրում է տարածական կապակցվածություն:

³Հավելենք, որ ՄԱԿ-ը Իսրայելը և Թուրքիան դիտարկում է Չարգացող երկրների գլոբալ խմբի «Արևմտյան Ասիա» (*Western Asia*) տարածաշրջանում, Իրանը՝ նույն գլոբալ խմբի «Հարավային Ասիա» (*South Asia*) տարածաշրջանում [3]:

փում են տեղակայել աշխարհաքաղաքական փլուզում ապրած տերությունների տարածքում (ԽՍՀՄ և Հարավսլավիա) գոյացած երկրները դրանցից որևէ մեկում՝ հարցը թողնելով, ինչպես ասում են, «կապրենք, կտեսնենք» զգուշավոր տրամաբանությամբ:

Միջանկյալ դիրք է զբաղեցնում Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ, *ITU*) մեթոդաբանությունը, ըստ որի՝ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Իսրայելը, Իրանը և Թուրքիան դիտարկվում են «զարգացող», իսկ ՌԴ-ն, Բելառուսը, Ուկրաինան, Մոլդովան և Բալթյան հանրապետությունները՝ «զարգացած» երկրների շարքում¹:

Սա ասում ենք՝ ընդգծելու համար կարծես թե ակնհայտ, բայց մեզանում մակերեսայնորեն գիտակցվող փաստը: Մեր պատմության վերջին դարերի ընթացքում հայկական պետական մարմինը՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, առաջին անգամ դարձավ, ընկալվեց և ընդունվեց որպես զարգացած երկիր: Եվ խոսքն ամենևին էլ ՀԽՍՀ նյութատնտեսական ցուցանիշների մասին չէր միայն: Այսպիսի դասակարգումը բխում էր նաև երկրի ժողովրդագրական և սոցիալական ցուցանիշներից, քաղաքաշինության և ճարտարապետության հաջողություններից, հիմնարար գիտության ծավալուն դպրոցների առկայությունից, գոյացած տեխնոլոգիական ներուժից [23-26], ինչպես նաև մշակութային դաշտի զարգացումից, նորի ընկալումն ապահովող, բարդ և ստեղծագործ աշխատանքով զբաղված մի քանի հարյուր հազար մարդ բանակի առկայությունից [7, 16], գործուն կրթական համակարգից, գիտության և մշակույթի ասպարեզների բարձր հասարակական վարկանիշից [8, 11, 27]:

Այսօր, սակայն, Հայաստանի 3-րդ Հանրապետությունը, համաձայն «Բրանդի գծի» ընդլայնված սահմանման («Բրանդի նոր գիծը», տե՛ս [18]), ուր հաշվի են առնվում ինֆորմացիայի և կապի տեխնոլոգիաների (ԻՎՏ) ոլորտի ինտեգրալ ցուցանիշները (օրինակ՝ ինտերնետ օգտատերերի թիվը, ԻՎՏ արբանյակային բաղադրիչը և այլն)², դուրս է գտնվում զարգացած «Հյուսիս» տարածաշրջանից. տե՛ս Քարտեզ 2-ը, ուր հիմնվելով երկրների ի.օ. թվի վրա՝ ՀՄՄ-ի կողմից կառուցված աշխարհի քարտեզի վրա բերում ենք «Բրանդի նոր գիծը» (նշված է կարմիրով): Ինչպես տեսնում ենք, Հայաս-


¹ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը և Ուկրաինան ՀՄՄ-ն դիտարկում է ԱՊՀ տարածաշրջանում, ՌԴ, Բելառուսի և միջինասիական հանրապետությունների հետ միասին: Իսրայելը, Թուրքիան և Բալթյան հանրապետությունները «Եվրոպա», իսկ Իրանը՝ «Ասիա-խաղաղօվկիանոսյան» տարածաշրջանում [3]:

² «Բրանդի նոր գիծը» զարգացած երկրների խմբում ՀՄՄ սահմանմամբ ներառում է այն երկրները, որոնցում ի.օ. ցուցանիշը կազմում է բնակչության 75-100%-ը, կամ որտեղ «անկապ» (*offline*) բնակչության տոկոսը կազմում է 0-25% [18]:

տանը Վրաստանի, Իրանի և Թուրքիայի հետ միասին դուրս է գտնվում այս կերպ սահմանված զարգացած «Հյուսիս» տարածաշրջանից, մինչդեռ ՌԴ-ն և Ադրբեջանը գտնվում են այդտեղ: Հատկանշական է նաև Արևելաեվրոպական երկրների «անկապ ելուստի» (Ուկրաինա, Մոլդովա, Լեհաստան, Բուլղարիա, Ռումինիա և այլն) գոյացումը, որը տարանջատում է զարգացած «Հյուսիս» տարածաշրջանին պատկանող ՌԴ-ն Արևմտյան Եվրոպայից, տե՛ս Քարտեզ 2:

Քարտեզ 2

2016թ. վերջի դրությամբ աշխարհի «անկապ» (offline) բնակչությունը, %, ITU [18]: «Բրանդի նոր գիծը» նշված է կարմիրով



Այսպիսով, այսօր խախտված է երբեմնի կուռ զարգացած «Հյուսիս» տարածաշրջանի տարածական կապակցվածությունը: Եվ ամեննին էլ պատահական չէ, որ ԻԿՏ ոլորտի ներառմամբ ի հայտ եկած այս երկատվածությունը հաղորդակցվում է ՌԴ - Արևմտյան Եվրոպա (կամ ընհանրացված «Արևմուտք») աշխարհաքաղաքական երկատվածության հետ հենց այս երկրների տարածքով:

Մյուս կարևոր փաստն այն է, որ «Հարավ» տարածաշրջանի համար այդպես էլ չհաջողվեց գտնել միասնական խոսույն և ինքնաբավ անվանում, որն ունակ լիներ միավորել «չմիացած երկրների» աշխարհաքաղաքական պատգամը «ցածր եկամուտով երկրների» տնտեսական բնութագրերին՝ միաժամանակ չընկնելով բացառապես կրոնաքաղաքակրթական (Մահմե-

դական աշխարհ, Չինական աշխարհ), գնահատողական (գարգացած, փլուզված, փխրուն), թվաբանական (Պ.Հաննայի «2-րդ աշխարհը»¹, դասական «3-րդ աշխարհ») կամ կենսաբանա-ուտոպիստական² սահմանումների թակարդը:

Տպավորություն է ստեղծվում, որ պայմանականորեն ասած՝ «Հարավ» տարածաշրջանն այսօր դարձել է արատավոր դասակարգումների այն «այլ» կատեգորիան, ուր հավաքում են այն ամենը, ինչի հետ չգիտեն ինչ անել: Ինչը չեն կարողանում տեղավորել տվյալ դասակարգման որևէ խմբում: Ճիշտ այնպես, ինչպես չգիտեին, թե ուր «խցկեն» Հայաստանը *NIC* 2020-ի բարձրաճակատ փորձագետները՝ զարգացած, թե՛ զարգացող երկրների խմբում, Եվրոպայո՞ւմ, թե՛ Միջին Արևելքում, Միջին Արևելքո՞ւմ, թե՛ Մեծ Միջին Արևելքում, Անդրկովկասո՞ւմ, թե՛ Հարավային Կովկասում, Հարավային Կովկասո՞ւմ, թե՛ «Սև ծով - Հարավային Կովկաս» տարածաշրջանում³: Մինչդեռ, «Աշխարհի աշխարհների» գոյացման ներկայիս բարդ և տուրբուլենտ գործընթացն ընթանում է հենց «Հարավ» տարածաշրջանում, վարվում է հենց այս գլոբալ տարածաշրջանի ժողովուրդների «հոգին ու սիրտը» շահելու համար⁴: Այլ խոսքերով՝ «Հարավ» տարածաշրջանի բնական պաշարների և մարդկային ռեսուրսների վրա վերահսկման հաստատման համար: Այս ամենը բազմանշանակ հանգամանք է, որը ցայտուն ընդգծում է արդի ժամանակների խոր գաղափարախոսական ճգնաժամը:

Վերջապես, հատկանշական է նաև այն զարմանքն ու հիասթափությունը, որը ԽՍՀՄ փլուզումից և երկրենտ գաղափարախոսական հակա-

¹ <https://www.paragkhanna.com/home/second-world-reviews>

² Օրինակ, «*Մորթկների* աշխարհը» Հ.Ուելչի 1895թ. «*The Time Machine*» վեպից: Չգիտեմ, կա՞րպոք մեր ինքնասիրության համար ոչ այնքան վիրավորական որևէ բացատրություն, թե ինչու մարդկության նորագույն պատմության համար կարևոր այս վեպը մինչ օրս, տպագրումից 123 տարի անց, չի թարգմանվել հայերեն: Առավել ևս, որ համաձայն «Հայոց աշխարհ»-ի գրականագիտության բաժնի «55 մեծագույն գրական ստեղծագործությունները մարդկության պատմության մեջ» ցանկի, այն, ճիշտ է, զգալիորեն զիջում է Վ.Միրադեղյանի ստեղծագործություններին, բայց և այնպես, զբաղեցնում է պատվավոր 39-րդ տեղը, <http://www.armworld.am/detail.php?paperid=2261&pageid=73677&lang=>

³ Ի վերջո, Հայաստանի 3-րդ Հանրապետությունը տեղ գտավ «Սև ծով - Հարավային Կովկաս - Կասպիական - Միջինասիական» հրեշավոր կոնգլոմերատ տարածաշրջանում՝ սպասարկելու համար Ալիև-Նեթանյահու-Բիլինթոն աշխարհաքաղաքական դոկտրինը, տե՛ս մեր 2011թ. հոդվածը [1]:

⁴ «Շահել հոգին և սիրտը» արտահայտությունն ու ռազմավարությունը վերագրվում են ֆրանսիացի գեներալ, գաղութային ադմինիստրատոր Լուի Լիաուտիե (*Louis Hubert Lyau-zey*), Հնդկաստանում «Սև դրոշների» ապստամբությունը ճնշելու ժամանակ (1895թ.): Հետագայում այն բազմիցս կրկնօրինակվել է տարբեր գաղութային պատերազմների ընթացքում, Միացյալ Թագավորության գեներալների կողմից անգլո-մալայական ընդհարումների ժամանակ, ԱՄՆ գեներալների կողմից Վիետնամի, Իրաքի, Աֆղանստանի, Լիբիայի պատերազմների ընթացքում: Այսօր այն հայտնի է որպես «փափուկ ուժ»:

մարտության ավարտից 27 տարի անց շարունակում են ապրել հետխորհրդային տարածքի «արևմտամետ» և «լիբերալ» մտավորական շրջանակները՝ «Արևելքի» և «Արևմուտքի», «Հյուսիսի» և «Հարավի» միջև խոստացված, բայց այդպես էլ վրա չհասած *կոնվերգենցիայի* «ոսկե դարի» կապակցությամբ: Հիասթափություն, որից, թերևս, հնարավոր լիներ խուսափել, էթե ժամանակին սերտվեին Բրանդի հանձնաժողովի դասերը: Դե, իսկ այսօր մոլորակը նորից ակնատեսն է ՌԴ/Չինաստան-ԱՄՆ/Արևմուտք առճակատման և նոր, երկբևեռ համակարգի գոյացման [8, 9]: Իսկ ողջ Միջին Արևելքը նորից կանգնած է պայթյունի վտանգի առջև [12], ինչն էլ հրամայական է դարձնում վերջապես յուրացնել XX դարի 70-ականների դասերը հնարավոր աղետից խուսափելու համար:

4. Սեռատարիքային դիագրամներ

Մեր 2-րդ դիտարկումը վերաբերում է սեռատարիքային դիագրամներին (ս.տ.դ.): Հակված ենք կիսել այն հետազոտողների կարծիքը, որոնք համարում են, որ «Հյուսիս» և «Հարավ» գլոբալ տարածաշրջանների աղեկվատ սահմանման համար այս պարամետրի ներմուծումն էական առաջիադասում էր Բրանդի հանձնաժողովի դասական մոտեցման համեմատ: Ավելին, կարծում ենք, որ այն իրականում ունի առնվազն նույնքան հիմնարար նշանակություն, որքան տեսակարար ՀՆԱ կամ ՀԱԵ ցուցանիշը: Պարզաբանենք դա մեր տարածաշրջանի օրինակով:

Գծ. 1-ում բերում ենք մեր հարևան 4 երկրների բնակչության ս.տ.դ.-ները՝ կառուցված 2015թ. համար ՄԱԿ ԺԴ-ի կողմից [19]: Դիագրամներում բնակչության քանակը (%) խմբավորված է ըստ առանձին խմբերի՝ յուրաքանչյուրը 5 տարի քայլով: Դրանք անվանվում են տարիքային *կոհորտներ*: Այսինքն՝ մեկ տարիքային կոհորտը ներառում է 5 անընդմեջ տարիների ընթացքում ծնված մարդկանց թիվը (%-ը ընդհանուր բնակչության նկատմամբ): Տվյալները բերվում են արական և իգական սեռի համար առանձին-առանձին, դիագրամի ձախ և աջ մասերում համապատասխանաբար: Ինչպես տեսնում ենք, «Հարավ» տարածաշրջանին բնորոշ զուտ բրգաձև ս.տ.դ.-ն առկա է միայն Թուրքիայում (Գծ. 1, ներքևում՝ ձախից)¹: Իսկ Իրանի, Հայաստանի և Ադրբեջանի համար այն ունի, ինչպես ընդունված է ասել՝ «շրջված բուրգի» տեսք: Թեև այստեղ ավելի տեղին կլիներ «ալիքաձև բուրգ» անվանումը, քանի որ դրանց ծնորդները² ունեն ալիքաձև տեսք՝ պայմա-


¹ 2015-ին այն բնորոշ էր նաև Տաջիկստանին, Օմանին, Եմենին, Լիբիային և այլն:

² *Образующие, ruling.*

նավորված սերնդային ալիքների առկայությամբ: Այդ ալիքներում միշտ առկա է առավելագույն տարիքային կոհորտ, որն իր արժեքով գերազանցում է մոտակա երկու հարևան կոհորտները: Դրանք կանվանենք *դոմինանտ կոհորտներ*:

Գծապատկեր 1

Հայաստանի և Ադրբեջանի (վերևում, հազ. մարդ), Թուրքիայի և Իրանի (ներքևում, մլն մարդ) ժողովրդագրական սեռատարիքային դիագրամները, 2015թ.



Աղբյուրը՝ <https://esa.un.org/unpd/wpp/Graphs/DemographicProfiles/>, սեփական հաշվարկներ:

Դոմինանտ կոհորտների առկայության տեսանկյունից թե՛ քրիստոնյա Հայաստանը, թե՛ մահմեդական Ադրբեջանն ու Իրանը պատկանում են

«Հյուսիս» տարածաշրջանին: Ընդ որում, այս երեք երկրների դիագրամների համանմանությունն իրականում տարբեր գործոնների հետևանք է: Եթե անդրկովկասյան հանրապետությունների դեպքում դա ԽՍՀՄ մոդեռնիզացիոն ժառանգության արդյունք էր՝ արտահայտված այսպես կոչված «եվրոպական մոդելի» ընտանիքների հաստատմամբ ու կրոնական գործոնի զսպմամբ, ապա Իրանի դեպքում դա ամենևին էլ շահի ժամանակների (60-70-ականներ) արևմտամետ մոդեռնիզացիոն ժառանգության արգասիք չէր, ինչպես ինտուիտիվ և միանգամայն սխալ կարծում են որոշ վերլուծաբաններ: Այլ հակառակը՝ Իրանի իսլամական հեղափոխության կառավարության վաղ 90-ականներից վարած *կոնտրացեսիվ* և խորհրդատվական խիստ արդյունավետ պետական ծրագրերի իրականացման հետևանք: Ավելի արդյունավետ, քան չինական «մեկ ընտանիք-մեկ երեխա» ռազմավարությունը: ՄԱԿ ԺՂ փորձագետների գնահատականներով՝ ժողովրդագրության վիճակագրության պատմության մեջ ամենաարդյունավետն աշխարհում:

Արդյունքում, սկսած վաղ 90-ականներից՝ Իրանում ընդհանուր պտղաբերության մակարդակը (*TFR*) 20 տարվա ընթացքում նվազեց 5.5-ից մինչև պարզ վերարտադրման մակարդակ՝ մոտ 2.1 երեխա/կին [19]: Իսկապես, 1982-1987թթ. ծնված և 2017-ին 30-35 տարեկան դարձած բնակչության կոհորտը Իրանում հանդիսանում է դոմինանտ (Գծ. 1, ներքևում՝ աջից, Բ-ալիք): Մինչդեռ հիշյալ պետական ծրագրի վարման ամենահինտենսիվ ժամանակ՝ 1997-2002թթ. ծնվածների և 2017-ին 15-20 տարեկան դարձածների կոհորտը նվազագույնն է Իրանի դիագրամի ստորին հատվածի համար: Հենց այս գործոնի հետևանքով է ձևավորվել Իրանի դիագրամի (Բ) սերնդային ալիքը:

Ուշագրավն այն է, որ 2005-07թթ. անզլոսաքսոնյան աշխարհում և Իսրայելում սերնդային այս ալիքը դիտարկվում էր որպես Իրանում քաղաքական անկայունության գոյացման համար խոստումնալից «պատանյաց բողոք»¹: Այսօր ուսանելի է տեսնել որոշ արևմտյան կառույցների հիասթափությունն առ այն, որ Իրանում ժողովրդագրական մեկ տեմպորալ (ժամանակային) տակտից հետո այս «պատանյաց բողոք» այդպես էլ չբերեց երկար սպասված քաղաքական անկայունության, այլ դարձավ բանուկ և աշխատունակ (Բ)-սերնդային ալիք [21]: Կարծում ենք, որ դա տեղի ունեցավ առաջին հերթին այն բանի հետևանքով, որ սեփական երկրի պատմական,

¹ «*Youth bulge, молодежный пузырь*». Այս հասկացության համար «պատանյաց բողոք» եզրը ներմուծել էինք [20]-ում: Ուր և ընդգծել էինք այս պարամետրի մեծ կարևորությունը քաղաքական անկայունությունների գոյացման, դրանց մոդելավորման ու կանխատեսման համար:

մշակութային և քաղաքակրթական ժառանգության միասնական ընկալումը իրանական հասարակությունում ավելի գորեղ էր, քան ներքին էթնոսոցիալական հակասությունների կամ արտաքին ինֆորքադաքական ներագրումների ուժը (տե՛ս ստորև):

Հակառակը, Թուրքիայում ոչ քեմալիզմը, որը հայտարարված էր (ու ընկալվում էր) որպես մոդեռնիզացիա *par excellence*, ոչ դրան հաջորդած «մոդեռնիզացիոն» տարատեսակ ռեժիմներն իրականում այդպիսին չէին: Գոնե միայն այն բանի համար, որ Թուրքիայի բնակչության ս.տ.դ.-ն ուներ և ունի հստակ բրգաձև տեսք, առանց որևէ սերնդային ալիքների, ինչը հստակ տեղակայում է այդ երկիրը «Հարավ» տարածաշրջանում:

5. Մերնդային ալիքների քաղաքակրթական առանձնահատկությունը

Գանք մեր 3-րդ դիտարկմանը: Այն պահանջում է վերը բերված բառիս բուն իմաստով «ձևական» (այնտեղ մեզ հետաքրքրում էր առաջին հերթին ս.տ.դ.-ների *ձևը*) դիտարկումից անցում կատարել դրա բովանդակային վերլուծությանը: Ինչի համար, որպես իմացաբանական բանաձև, մենք կհենվենք Լ. դը Բրոյլի 1924թ. հետևյալ մտքի վրա. «Ոչ մի երևույթ իրապես հասկանալի չի դառնա, եթե այդտեղ չսահմանվի *ալիք* հասկացությունը, դրա կառուցվածքը և դրանում մասնիկի կողմից ստեղծված հատուկությունը¹, նկարագրելի բացառապես ալիքային տեսանկյունից» ([22], էջ 352): Այստեղ մենք կսահմանենք մի կողմից՝ «նյութական ալիք/մասնիկ» դուրս հասկացությունների, և մյուս կողմից՝ «սերնդային ալիք/դոմինանտ կոհորտ» զույգ հասկացությունների միջև մեր կարծիքով խոր, էվրիստիկ, համանմանությունը:

Ինչպես տեսնում ենք Գծ. 1-ում, Հայաստանի 2015թ. դիագրամին բնորոշ է քառալիք տեսքը՝ պայմանավորված 5-10 (Ա-ալիք), 25-30 (Բ-ալիք), 55-60 (Գ-ալիք) և թույլ արտահայտված 75-80 (Դ-ալիք) տարեկան դոմինանտ կոհորտներով: Մինչդեռ Ադրբեջանի դիագրամն ունի ընդամենը երկու այդպիսի ալիք՝ Բ և Գ ալիքներ, 25-30 և 50-55 տարեկան դոմինանտ կոհորտների համար համապատասխանաբար: Ընդ որում, Գ-ալիքը Ադրբեջանի համար (50-55 տարեկան) մեկ կոհորտով ավելի երիտասարդ է, քան Հայաստանի Գ-ալիքը (55-60 տարեկան), 4-րդ՝ Դ-ալիքը գրեթե արտահայտված չէ, իսկ առաջին՝ Ա-ալիքը, զեղված է, տե՛ս Գծ. 1:

¹ Այստեղ խոսքը ֆիզիկամաթեմատիկական հատուկության մասին է: Ինչպես որ խոսում են արտապատկերումների հատուկության կամ ալիքի հատուկության մասին (օրինակ՝ կանգնած ալիք, *standing wave*, *стоячая волна*):

Հայաստանում բնակչության 65-70 և 70-75 տարեկանների կոհորտները՝ ծնված 1942-52թթ., ինչպես ասում են՝ իրենց *ակվեն*¹ ապրել են 1965-75թթ.: Այսինքն՝ Հայաստանի 2-րդ Հանրապետության, թերևս, ամենաբեղուն տասնամյակին, երբ 80-ականների լճացման դրսևորումները դեռ արտահայտված չէին, իսկ գալիք համակարգային ճգնաժամի ախտանիշները գտնվում էին ընդհանուր սոցիալական ընկալումների շեմից ցածր: Նրանք Երկրորդ աշխարհամարտում և Հայրենական մեծ պատերազմում հաղթանակած սերնդի ժառանգներն էին և ՀԽՍՀ ծաղկման տարիների համակարգային ձեռքբերումների ակնատեսն ու (մասամբ) կերտողը [23-27]: Հետևաբար, սերնդային այս ալիքը «լիցքավորված» էր շատ ուրույն քաղաքակրթական ժառանգությամբ՝ եզակի հայ ժողովրդի պատմության վերջին մի քանի դարերի համար: Այսօրվա մեր հասարակությունում այդ կոհորտները հանդիսանում են մեծ երկրում ստեղծագործ, բարդ ու համակարգված աշխատանքի մասին պատմական անմիջական հիշողության վերջին կրողները: Յուրօրինակ «պիլոտային ալիք»², որն իր մեջ բյուրեղացնում է Հայաստանի XX դարի նվաճումները և սահմանում ոչ միայն ս.տ.դ. ժամանակային առանցքը, այլև մեր երկրի մոդեռնիզացիոն զարգացման վեկտորը:

Այս կոհորտները կազմում են Հայաստանի 3-րդ Հանրապետության բնակչության մոտ 5.8%-ը (Գծ. 1, վերևում՝ ձախից)³ և, ավաղ, կանգնած են ակտիվ մասնագիտական ու սոցիալական դերակատարումն ավարտելու շեմին: Ադրբեջանում 65-75 տարեկանների այս կոհորտները 2015-ին կազմում էին բնակչության ընդամենը մոտ 3.7%-ը, այսինքն՝ մոտ 40%-ով պակաս, քան Հայաստանում: Կարծում ենք, այստեղ է պետք փնտրել այն փաստի ժողովրդագրական ու քաղաքակրթական բացատրությունը⁴, որ վաղ 90-ականներին Հայաստանի 3-րդ Հանրապետությունը հռչակվեց որպես 2-րդ Հանրապետության՝ ՀԽՍՀ ժառանգ և իրավահաջորդ: Մինչդեռ Ադրբեջանն ընտրեց այլ ուղի:

Տարիքային հաջորդ 2 կոհորտները (55-60 և 60-65 տարեկաններ)՝ ծնված 1952-62թթ., նույնպես ապրել և ձևավորվել են ՀԽՍՀ զարթոնքի տարիներին: Բայց նրանց *ակվեն* արդեն ներառում է թե՛ 80-ականների ստագնացիոն երևույթները, թե՛ վաղ 90-ականների համակարգային ճգնաժամը: Հայաստանում այս կոհորտները կազմում են բնակչության մոտ 13%-

¹ Մարդու ձևավորման, գործունեության և ինքնադրսևորման գագաթնային շրջան:

² Ալիքային մեխանիկայում դր Բրոյլ-Բոմի «պիլոտային ալիքի» (*pilot-wave, волна-пилот*) նման:

³ Հայաստան - 72.5 հազ. տղամարդ (2.5%) և 95.0 հազ. կին (3.3%), գումարայինը՝ 5.8%: Ադրբեջան - 161.7 հազ. տղամարդ (1.67%) և 192.2 հազ. կին (1.98%), գումարայինը՝ 3.65%:

⁴ Հասկանալի է այլ, առաջին հերթին՝ քաղաքական գործոնների հետ մեկտեղ:

ը, Ադրբեջանում՝ մոտ 10.0%-ը¹: Սակայն նրանցում առկա է էական տարբերություն. եթե Հայաստանում սերնդային այս ալիքի քաղաքակրթական լիցքը պայմանավորված էր Արցախի ազատագրական հերոսամարտում հաղթանակով ու նոր հանրապետության կերտման արարչագործ ինպուլսով, ապա Ադրբեջանի պարագայում այն կրում էր կորուստների զգացումը և ռևանշի տենչը: Ահա այս «քաղաքակրթական լիցքերն» են հանդիսանում այն «հատուկությունները», որոնք, տվյալ հասարակությունում միջսերնդային կապերի հետ մեկտեղ, և ձևավորում են հասարակությունների սոցիալական դինամիկայի որակական առանձնահատկությունները:

6. Սերնդային ալիքներ և պատմական հիշողություն

Հայաստանում 55-65 տարեկանների սերնդային ալիքը դեռ շարունակում է շոշափելի ազդեցություն թողնել երկրի սոցիալական, մասնագիտական, քաղաքական և հանրային կյանքի վրա, սակայն գտնվում է ակտիվ գործունեությունը լքելու ուղեծրում: 10-15 տարի անց այս ազդեցությունն էականորեն կփոքրանա, իսկ մինչ այդ գրեթե կվերանա ներկայիս 65-75 տարեկանների սերնդային ալիքի ազդեցությունը: Հետևաբար, 2027-2032թթ. հորիզոնին հիշյալ անմիջական պատմական հիշողության թելը կկտրվի: Եվ մենք ամբողջությամբ կհատենք այն խորհրդավոր շեմը, որից հետո *հիշողությունն* անդառնալիորեն վերածվում է *պատմության*: Այդ ժամանակ տեղի կունենա սերնդային պիլոտային ալիքի կողմից կրվող «քաղաքակրթական լիցքի» պարադիգմալ փոփոխություն, քանի որ առաջին պլան դուրս կգան Հայաստանի 2-րդ Հանրապետության մասին ոչ թե անմիջական, այլ այսպես կոչված «միջնորդված *նարատիվները*», *մեմերը*, որոնք փաստորեն և կդառնան կիրառական պատմական հիշողության հիմնական աղբյուր:

Սակայն, լինելով միջնորդված՝ դրանք իրենց վրա անխուսափելիորեն կկրեն վաղ 90-ականների միաբնեռ աշխարհակարգի դրոշմը՝ խարսխված ՀԽՍՀ-ի նկատմամբ 1-ին և 3-րդ Հանրապետությունների գաղափարախոսական հակադրության վրա: Արդեն այսօր ՀԽՍՀ քաղաքակրթական, քաղաքական, սոցիալական, գիտատեխնոլոգիական ձեռքբերումները և մշակութային ժառանգությունը հետևողականորեն մատնվում են եթե ոչ լիակատար մոռացության, ապա գոնե արտաքսվում են տեղեկատվական դաշտից, արտամղվում հանրային գիտակցության ու հիշողության լուսանցք: «Քաղաքակրթական լիցքի» այս պարադիգմալ փոփոխությունը հանրային անմիջական

¹ Հայաստան՝ 165 հազ. տղամարդ (5.7%) և 210 հազ. կին (7.2%), գումարայինը՝ 12.9%: Ադրբեջան՝ 477 հազ. տղամարդ (4.9%) և 523 հազ. կին (5.4%), գումարայինը՝ 10.3%:

հիշողության դաշտից վերջնականորեն կարտամղի ՀԽՍՀ մոդեռնիզացիոն զարգացման վեկտորի ազդեցությունը, և կկորչի նպատակաուղղված և համակարգված հանրագուտ աշխատանքի մասին անմիջական սերնդային հիշողությունը: Այս երևույթները, սաստվելով Հայաստանի ժողովրդագրական առանձնահատկություններից, գլոբալ ու տարածաշրջանային մակարդակներում արդի աշխարհաքաղաքական միտումներից, անհրաժեշտաբար կբերեն համակարգային, *քաղաքակրթական* խզման՝ խաթարելով Հայաստանի Հանրապետության պատմության միասնական ընկալումը, հանգեցնելով մեր ժառանգության էական մասի կորստի: Ու այս ամենի հետևանքով Հայաստանում վերջնականապես կհաստատվի «(ինքնա)կազմակերպված կրիտիկականություն» վիճակ, գերզգայունություն՝ արտաքին ներագրումների ու ներքին հակասությունների հանդեպ¹: Արդյունքում՝ կնվազի պետության սոցիալ-գաղափարախոսական ներքին կայունությունը, կբարձրանա Հայաստանի նյութական ու ոչ նյութական բնույթի կրիտիկական ենթակառուցվածքների խոցելիությունը [29]:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության պատմության միասնական ընկալման կորուստը հասարակությունում չափազանց վտանգավոր է, քանի որ հանգեցնում է քաղաքակրթական խզման: Այսպիսի խզման հանդեպ ներքին սոցիալ-գաղափարախոսական կայունության ամրապնդումը հրատապ խնդիր է: Դրա լուծման բանաձևն անհրաժեշտաբար ենթադրում է ՀԽՍՀ ժառանգության լիարժեք յուրացում, դրա ներգրավում Հայաստանի զարգացման միասնական, անընդհատ ու բազմապնակ համայնապատկերում՝ որպես դրա անքակտելի ու կարևոր բաղադրիչ:

Փետրվար-ապրիլ, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Global Trends 2010. Revised Edition. *National Intelligence Council* (NIC), November 1997. Global Trends 2015: A Dialogue About the Future with Nongovernment Experts. NIC, December 2000. Mapping the Global Future: NIC's 2020 Project. NIC, December 2004. Global Trends 2025: A Transformed World. NIC, November 2008. Global Trends 2030: Alternative Worlds. NIC, December 2012. Global Trends 2035: Paradox of progress, NIC, January 2017. "NIC Global Trends" ծրագրերի համեմատական վերլուծությունը տե՛ս *Մարջանյան Ա.Հ.*, Մեր ապագան՝ NIC աչքերով, 23.06.2011. http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=5869.
2. Речь президента Российской Федерации В.В.Путина на Мюнхенской конференции по вопросам политики безопасности. 10 февраля 2007; <http://kremlin.ru/>

¹ Այս վտանգավոր երևույթների մասին, 2016թ. ապրիլյան ռազմական գործողությունների և դրանց հետևանքների առնչությամբ, տես՝ [28]:

- events/president/transcripts/24034. *Россия в Глобальной Политике*. Спецвыпуск: консерватизм во внешней политике: XXI век. Май, 2017. *Малл, Steven, R.*, Chaos Theory and Strategic Thought. «Parameters», Autumn 1992. *Minc, Alain*, Le nouveau Moyen Âge. *Gallimard*, “Connaissance”. Paris, 1993. *Kissinger, Henry*, Diplomacy. Simon & Schuster, 1994. *Kennan, George, F.*, At a Century's Ending: Reflections 1982–1995. W. W. Norton & Company, New York, 1996.
3. The World Bank Atlas method - detailed methodology; <https://datahelp-desk.worldbank.org/knowledgebase/articles/378832-what-is-the-world-bank-atlas-method>. United Nations Secretariat, Department of Economic and Social Affairs. Country classification; http://www.un.org/en/development/desa/policy/wesp/wesp_current/2012country_class.pdf. ITU Regions, corresponding to the regional grouping of the ITU's Telecommunication Development Bureau; <http://www.itu.int/en/ITU-D/Statistics/Pages/definitions/regions.aspx>.
 4. *Dawkins, Richard*, The Selfish Gene. Oxford University Press, 1976. 224p. (*Докинз, Ричард*, Эгоистичный ген. Пер. Н.Фомин, М., “Мир”, 1993). *Dawkins, Richard* The Extended Phenotype. Oxford University Press, 1982. (*Докинз, Ричард*, Расширенный фенотип. М., Астрель, CORPUS, 2011).
 5. *Balkin, Jack*, Cultural Software: A Theory of Ideology. Yale University Press, 1998. 352p. *Henson, Keith*, Evolutionary Psychology, Memes and the Origin of War. *The mankind quarterly*, 46 (4) 2006, pp. 443–459.
 6. *Разумнее сценарий неизбежного мира*. Интервью «ГА» заместителя директора по науке НОФ «Нораванк», Ара Марджаняна, «Голос Армении», 2018-03-12; <http://www.golosarmenii.am/article/63634/razumnee-scenarij-neizbezhnogo-mira>.
 7. *Հարությունյան Գ.Ս., Մարջանյան Ա.Հ.*, Բազմակենսորն աշխարհակարգի գիտատեխնոլոգիական բնագավառները, «21-րդ ԴԱԸ», 3 (73), 2017, էջ 2-27:
 8. *Марджанян А.А., Арутюнян Г.А.*, Союзники на фоне нанотехнологического пейзажа. Тр. межд. конференции «Демократия и сетевые технологии в современном социально-политическом процессе», 18 мая, 2017, М., ФИП/РГГУ, 2017.
 9. *Марджанян А.А.*, Научно-информационная политика и гибридные войны, *Геополитика и безопасность*, № 4 (40), 2017, с. 26-34.
 10. *Հարությունյան Գ.Ս.*, Կրիտիկական ենթակառուցվածքներ և գաղափարախուսություն, «21-րդ ԴԱԸ», 4 (74), 2017, էջ 47-59:
 11. *Арутюнян Г.А., Марджанян А.А.*, Духовно-технологические ресурсы и вопросы союзничества в гибридных реалиях, «21-й ВЕК», 4 (45), 2017.
 12. *Марджанян А.А.*, Поразительная потеря адекватности в восприятии реальности, сб. «Итоги - 2016». Кавказский геополитический клуб, М., «Пушкино», 2017, с. 427-432; <http://www.kavkazgeoclub.ru/content/porazitelnaya-poterya-adekvatnosti-v-voSPIriyatii-realnosti>.
 13. *The Independent Commission on International Development Issues (Brandt Commission, 1-st Brandt Report)*. North – South: A Programme for Survival. Pan Books, 1980. *Common Crisis North-South: Cooperation for World Recovery. (2nd Brandt Report)*. An MIT Press Classic. April, 1983. Տե՛ս նաև *Quilligan, J.B.*, The Brandt Equation: 21st Century Blueprint for the New Global Economy. Brandt 21 Forum, 2002.
 14. *Մարջանյան Ա.Հ.*, Հարավային Կովկասի ժողովրդագրությունը XXI դարի վերջին, «21-րդ ԴԱԸ», 4 (44), 2012, էջ 20-44:

15. *Մարջանյան Ա.Հ.*, Ժան Բոդրիյարի «Միմոլյակրը» և Բարաք Օբամայի «Medz Yeghern»-ը: *Մաս Բ.* «le Mai 1968», «21-րդ դար», 3 (43), 2012; http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=6324.
16. *Մարջանյան Ա.Հ.*, Ժան Բոդրիյարի «Միմոլյակրը» և Բարաք Օբամայի «Medz Yeghern»-ը: *Մաս Ա.* «Հուլիսյան մոտորումներ», «21-րդ դար», 3 (43), 2012; http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=6296.
17. *Кузьмич А.*, Заговор «Мирового правительства»: Россия и «золотой миллиард», М., 1994.
18. *Մարջանյան Ա.Հ.*, Ինտերնետ օգտատերերի թիվը Հայաստանում և տարածաշրջանում. Փաստեր: «Գլոբուս», 3 (92), 2018:
19. *World Population Prospects. The 2017 Revision. Key Findings and Advance Tables.* UN DESA, Population Division. New York, 2017.
20. *Մարջանյան Ա.Հ.*, Ուժեղ պետություն է արդյոք Հայաստանի երրորդ Հանրապետությունը, «21-րդ դար», 3 (21), 2008, էջ 74-98:
21. *Cincotta, R., Sadjadpour, K.*, IRAN IN TRANSITION: The Implications of the Islamic Republic's Changing Demographics. Carnegie Endowment for International Peace. December, 2017.
22. *Де Бройль Луи*, По тропам науки, изд. Иностранной литературы, М., 1962.
23. Достижения Науки в Советской Армении. Под ред. акад. В.А. Амбарцумяна, Ереван, Изд. АН Армянской ССР, 1984.
24. *Мовсесян С.А.*, Промышленность Советской Армении за 50 лет, Ереван, изд. АН Армянской ССР, 1970.
25. Развитие энергетической базы Советской Армении за 50 лет. Документы и материалы, Ереван, изд. «Айастан», 1978.
26. *Մարջանյան Ա.Հ.*, Մեծամորը տարածաշրջանի էներգետիկ և աշխարհաքաղաքական համակարգում, «Re Think Metsamor» Project. *Urban-Lab*, Երևան, սեպտեմբեր, 2016:
27. *Ангаладян Р.С.*, Армянский авангард внутри тоталитаризма, Монреаль, 2006.
28. *Մարջանյան Ա.Հ.*, Պատերազմ և կրիտիկական ենթակառուցվածքներ: Նորավանքյան 2016թ. դեկտեմբերյան հարցաշարի արդյունքները և պատասխանների վերլուծություն, «Նորավանք» ԳԿՀ, մայիս, 2017:
29. *Մարջանյան Ա.Հ.*, Նյութական և ոչ նյութական կրիտիկական ենթակառուցվածքներ, «Նորավանք» ԳԿՀ սեմինար, 23.12.2016; http://www.noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT_ID=15305.

**ԳԼՈՒԲԱԼ ՏԱՐԱԾՄԱՇՐՋԱՆՆԵՐ, ՍԵՐՆԴԱՅԻՆ ԱԼԻՔՆԵՐ
ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Արա Հ. Մարջանյան

Ամփոփագիր

Ներկայացվում են «Հարավ» և «Հյուսիս» տարածաշրջանների սահմանման «Բրանդի հանձնաժողովի» դասական և արդի մոտեցումները: Դիտարկվում են բնակչության տիպական սեռատարիքային դիագրամները (ս.տ.դ.): Ներմուծ-

վում են սերնդի «դոմինանտ կոհորտ» և սերնդային «պիլոտային ալիք» հասկացությունները: Դիտարկվում է սերնդային ալիքների «քաղաքակրթական լիցքը»: Հայաստանի և Ադրբեջանի համար իրականացվում է ս.տ.դ. համեմատական վերլուծություն: Ձևակերպվում է «քաղաքակրթական խզում» հասկացությունը: Ընդգծվում է պատմական քաղաքականության համարժեք վարման անհրաժեշտությունը Հայաստանի էվոլյուցիոն և անընդհատ զարգացման ապահովման համար:

ГЛОБАЛЬНЫЕ РЕГИОНЫ, ПОКОЛЕНЧЕСКИЕ ВОЛНЫ И ИСТОРИЧЕСКАЯ ПОЛИТИКА

Արա Ա. Մարջանյան

Резюме

В статье представлены классический и современный подходы «комиссии Брандта» по определению глобальных регионов «Север» и «Юг». Рассматриваются типичные демографические пирамиды для стран этих регионов. Вводятся понятия «доминантная когорта» и «пилотная волна» поколения. Формулируется положение об эвристическом подобии пар понятий «поколенческая волна/доминантная когорта» и «материальная волна/частица». Рассматривается «цивилизационный заряд» поколенческой волны. Проводится сравнительный анализ половозрастных диаграмм населения Армении и Азербайджана. Формулируется понятие «цивилизационного разрыва». Подчеркнута важность проведения адекватной исторической политики для обеспечения непрерывного и эволюционного развития Армении.

GLOBAL REGIONS, GENERATIONAL WAVES AND HISTORIC POLICY

Արա Ա. Մարջանյան

Resume

The article presents the classical and new approaches in the Brandt Report in defining the South and North global regions. The typical “age-sex pyramids” of population are reviewed. The concepts of a generation’s “dominant cohort” and “pilot wave” are introduced. The “civilizational payload” of generation waves is reviewed. A comparative study of age-sex pyramid diagrams for Armenia and Azerbaijan is implemented. The concept of “civilizational fault” is formulated. The need of implementing an adequate historical policy is emphasized for ensuring evolutionary and uninterrupted development of Armenia.

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ. ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐ

*Քրիստինե Մելքոնյան**

Բանալի բառեր՝ պատերազմ, չեզոքություն, դիվանագիտական խաղ, պանթյուրքիզմ, դաշնակից երկրներ, առանցքի երկրներ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի որդեգրած արտաքին քաղաքականությունը բնութագրվում է որպես փոփոխական և անվստահելի: Ըստ ամերիկյան արխիվներում պահպանված վավերագրերի՝ թեև Թուրքիան պատերազմին չմասնակցեց, սակայն նրա դիվանագետների՝ «վարագույրի հետևում» իրականացրած խաղը բավական նկատելի էր [1, s. 27]: Այդ տարիների նրա արտաքին քաղաքականության մեջ առանձնանում է երեք ուղղություն. նախ՝ Թուրքիայի հարաբերություններն անգլո-ֆրանսիական կողմի հետ, այնուհետև թուրք-գերմանական և, ի վերջո՝ խորհրդա-թուրքական լարված հարաբերությունները:

Հոդվածի նպատակն է ներկայացնել Թուրքիայի արտաքին քաղաքականությունը պատերազմի տարիներին, հատկապես նրա ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպես նաև դրանք խախտելու պաշտոնական Անկարայի ավանդույթը, որը սուր արտահայտվեց նաև Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Դրա վառ ապացույցներից է այն, որ պատերազմի սկզբին Թուրքիան աջակցում էր Անգլիային, այնուհետև ոչ բացահայտ անցավ Գերմանիայի կողմը: Միաժամանակ, պատերազմի ողջ ընթացքում թե՛ Անգլիան, թե՛ Գերմանիան, թեպետ անհաջող, փորձում էին Թուրքիային ներքաշել պատերազմի մեջ: Պատերազմի տարիներին Անկարան նախընտրությունը տալիս էր հաղթող կողմին: Որոշ թուրք պատմաբաններ Թուրքիայի արտաքին այս քաղաքականությունն անվանում են «պաշտպանողական» [1, s. 27]: Անգլիան և ԱՄՆ-ը այն որակում էին որպես «հավատարմության վատ օրինակ» [2]: Իսկ եթե ավելի ստույգ՝ Թուրքիան այդ կերպ

* ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ.:

փորձում էր «բարձրացնել իր գինը», այսինքն՝ որքան հնարավոր է «թանկ վաճառել իր հավատարմությունը»: Պահանջներ ներկայացնելով թե՛ Գերմանիային, թե՛ Անգլիային՝ նա սպասում էր, թե որ կողմն ավելի շուտ կարձագանքի: Մինչդեռ երկու կողմերի համար դրանք անընդունելի էին:

Անգլիական և գերմանական արխիվային նյութերից պարզ է դառնում, որ 1938թ. Թուրքիան նախընտրությունը տալիս էր Գերմանիային: Սակայն վերջինիս արտգործնախարարությունն այդ տարիներին Թուրքիայի հետ դաշինք կնքելու անհրաժեշտություն չէր տեսնում [1, s. 28]: Միաժամանակ, մերձեցում էր նկատվում ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև. նախ Ի.Ռիբենտրոպն է այցելում Մոսկվա, ապա Վ.Մոլոտովը՝ Բեռլին: Գերմանիայի այս դիրքորոշումը հանգեցնում է 1939թ. թուրք-անգլիական համաձայնագրի ստորագրմանը: Ավելի ուշ Բեռլինը Թուրքիայի հետ այդ տարիներին վարած քաղաքականությունը կհամարի իր ամենամեծ սխալը [1, s. 28]: Թուրքիան հյուսիսից պաշտպանում էր Մեծ Բրիտանիայի մերձավորարևելյան տարածքները: Դա էլ ավելի էր բարձրացնում Թուրքիայի «արժեքը»: Որոշ փաստաթղթերի համաձայն՝ այդ տարիներին Թուրքիան ծրագրեր է ունեցել Հյուսիսային Իրաքի տարածքների հետ կապված. Անկարային հիմնականում հետաքրքրում էին նավթով հարուստ շրջանները:

Պատերազմի ընթացքում Թուրքիան քաջ գիտակցում էր իր որոշիչ դերը. եթե անցներ Գերմանիայի կողմը, ապա լուրջ հարված կհասցներ Անգլիային, և վերջինս կկորցներ Մերձավոր Արևելքի իր տարածքները: Իսկ եթե պաշտպաներ Անգլիային, ապա Գերմանիայի առջև կփակվեին սևծովյան նեղուցները, և վերջինս կկորցներ վերահսկողությունն այդ տարածաշրջանում: Այդ պատճառով Գերմանիայի օգնելու դիմաց Թուրքիան պահանջում է Մոսուլն իր շրջակայքով [1, s. 28]: Անգլո-ամերիկյան կողմում հանդես գալու համար առաջարկում էր վերադարձնել Օսմանյան կայսրության տարիներին իրեն պատկանող Էգեյան կղզիները, այդ թվում՝ Կիպրոսը: Բայց ո՛չ Բեռլինը, ո՛չ էլ Լոնդոնը չէին պատրաստվում զիջել այդ տարածքներն Անկարային: Ըստ այդ տարիների փաստաթղթերի՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու.Չերչիլը Թուրքիայի այս ցանկությանը պատասխանել է հետևյալ կերպ. հնարավոր է՝ իրենք համակերպվեն այն մտքի հետ, որ նա իրենց դաշնակիցը չէ, սակայն երբեք «անգլիական թագի զմրուխտ» համարվող Կիպրոսը չեն հանձնի նրան՝ վստահեցնելով, որ Անգլիայի և ոչ մի կառավարություն նման նախապայմաններով Թուրքիայի հետ համաձայնության չի գա [3]: Լոնդոնը կարող էր բավարարվել միայն Անկարայի չեզոքությամբ, ինչը մեծացնում էր թուրք-գերմանական դաշինքի ձևավորման

հավանականությունը: Պատերազմի ավարտից հետո ամերիկացի պատմաբանները, գնահատելով այդ տարիների իրադարձությունները, գրում են, թե կարևորն այն էր, որ իրենք թույլ չտվեցին, որ Գերմանիան Թուրքիային ներքաշի պատերազմի մեջ, քանզի դա կկանխորոշեր հակաֆաշիստական կռաւիցիայի պարտությունը [4]:

Վերլուծելով պատերազմի սկզբնական շրջանում Թուրքիայի վարած քաղաքականությունը՝ այդ երկրում ԱՄՆ դեսպան Ջոն Վան Ա. Մաջմուրայը 1939թ. Վաշինգտոն ուղարկած իր զեկուցագրում նշում էր, որ Թուրքիային ձեռնտու չէ պատերազմի մեջ մտնելը, քանզի հնարավոր է, որ կորցնի իր տարածքների մեծ մասը, այդ պատճառով էլ ընտրել է չեզոքությունը: Դեսպանը հետևյալ եզրակացություններն էր անում. պատերազմի հարցում Թուրքիայի կառավարությունը շատ «իրատես» է՝ զիտակցելով իր դերը տարածաշրջանում, թուրքերն Անգլիային չեն համակրում, սակայն նախընտրությունը տալիս են վերջինիս, քանի որ պատերազմում նրա ռազմական և քաղաքական հեղինակությունը մեծ է, Թուրքիան հիմնվում է պատմական դասերի և փորձի վրա. պարտվողների կողքին չհայտնվելու համար, հաշվի չառնելով ստորագրված համաձայնագրերը, ապագայում նախընտրությունը կտա հաղթող կողմին [5, p. 858]:

1939թ. նոյեմբերին դեսպան Մաջմուրայը նախագահ Ֆ.Ռուզվելտին հղած զեկուցագրում, ներկայացնելով այդ տարիների խորհրդա-թուրքական հարաբերությունները, շեշտում էր, որ ներկայում Թուրքիան դաշնակցում է Անգլիայի ու Ֆրանսիայի հետ և փորձում է իր հարաբերությունները պարզել Խորհրդային Միության հետ, քանզի դրանցում սատնություն է նկատվել: Դեսպանի բնորոշմամբ՝ 1939թ. ամռանը պաշտոնական այցով Մոսկվա մեկնած Թուրքիայի արտգործնախարար Շ.Սարաջողլուն հյուրընկալվել էր «գրոսաշրջիկի» կարգավիճակով, մինչդեռ նա հույս ուներ ԽՍՀՄ-ի հետ համաձայնագիր ստորագրել: Գերմանիայի հետ բանակցություններ սկսած ԽՍՀՄ-ը, սակայն, չի ընդունել Սարաջողլուի ներկայացրած պահանջները: ԱՄՆ դեսպանը հաղորդում է, որ Թուրքիան անհանգստացած է խորհրդա-գերմանական մերձեցմամբ՝ ընդգծելով, որ «երկու բարեկամ, բայց և թշնամի պետություններ» միանալով օկուպացրել են Լեհաստանը: Մոսկվայից վերադարձած Սարաջողլուի կարծիքով՝ ռուսներն օգտագործել են նոր տարածքներ գրավելու հարմար պահը: Չի բացառվում, որ ԽՍՀՄ ծրագրերում սևծովյան նեղուցների վերահսկումն էլ կա, հայտնում էր դեսպանը [5, p. 858]: Այս ենթադրությունը հաստատում էր նաև Մոսկվայում Վաշինգտոնի դեսպան Ջոն Ա. Սթենհարդը [5, p. 859]:

1941թ. փետրվարի 14-ին ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր շտաբի՝ Թուրքիային վերաբերող զեկուցագրերում նշվում էր, թե ենթադրվում է, որ Անկարան պատերազմի մեջ մտնելու նպատակով է գորահավաք սկսել, սակայն միաժամանակ հույս էր հայտնում, որ վերջինս հավատարիմ կմնա իր պարտավորություններին և չի խախտի 1925թ. խորհրդա-թուրքական պայմանագիրը: Նկատենք, որ 1941թ. մայիսի 2-ին Ճապոնիայում գործող խորհրդային հետախույզ Ռ.Զորզեն կենտրոն ուղարկած իր տեղեկատվության մեջ Մոսկվայի ուշադրությունն էր հրավիրում գերմանա-թուրքական ընթացող բանակցությունների վրա: Նա գրում էր, որ «այդ երկու երկրների համաձայնության գալու դեպքում ԽՍՀՄ-ի շուրջ իրավիճակն էլ ավելի կբարդանա և պատերազմից խուսափելն անհնար կլինի: Գերմանիան պատրաստ է միաժամանակ պատերազմել և՛ ԽՍՀՄ-ի, և՛ Անգլիայի դեմ» [6]: Հետախույզն իր գնահատականում չէր սխալվում. Խորհրդային Միության վրա Գերմանիայի հարձակումից մի քանի օր առաջ՝ հունիսի 18-ին, Թուրքիայի և Գերմանիայի միջև բարեկամության ու չհարձակման գաղտնի պայմանագիր է կնքվում: Գերմանիայի արտգործնախարար Ի.Ռիբենտրոպի կարծիքով՝ այս փաստաթուղթը պետք է Թուրքիային ազատեր այն հարաբերություններից, որոնք նրան կապում էին Անգլիայի հետ, ավելին, նպաստելու էր, որ Անկարան, ի վերջո, ընդգրկվեր առանցքի երկրների շարքում [7, c. 193]: Պայմանագիրն ապահովում էր նաև գերմանական բանակի հարավային թիկունքն անակնկալներից. Գերմանիան այլևս կախվածության մեջ չէր լինելու Իրանից և կարող էր ԽՍՀՄ-ի վրա հարձակվել Թուրքիայի տարածքով: Բացի այդ, փաստաթուղթը Գերմանիային իրավունք էր վերապահում Թուրքիայի տարածքով զենք ու զինամթերք տեղափոխել, ավելին, վերջինս պետք է նպաստեր Մերձավոր Արևելքում Գերմանիայի ազդեցության մեծացմանը:

Ինչպես ասվեց, Թուրքիան պայմանագիր ուներ ոչ միայն Գերմանիայի, այլև ԽՍՀՄ-ի հետ: 1925թ. դեկտեմբերի 17-ին Փարիզում ստորագրված խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության մասին պայմանագիրը երեք անգամ երկարաձգվել էր տարբեր ժամկետներով: Միաժամանակ ավելացվել էին նոր հավելվածներ, որոնք լուծում էին երկու պետությունների միջև այդ տարիներին ծագած խնդիրները: Վերջին անգամ՝ 1935թ., այն երկարացվել էր 10 տարով, այսինքն՝ մինչև 1945թ. նոյեմբերի 7-ը: Անկարայում 1929թ. ստորագրված արձանագրության Բ հոդվածի համաձայն՝ կողմերը պարտավորվել էին միմյանց տեղյակ պահել երրորդ պետության հետ քաղաքական պայմանագիր կնքելու մասին և առանց մյուս կողմի համա-

ձայնության՝ այն չստորագրել [8, c. 35]: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, Թուրքիան 1941թ. հունիսի 18-ին պայմանագիր էր ստորագրել Գերմանիայի հետ՝ դրանով իսկ խախտելով խորհրդա-թուրքական պայմանագիրը: Այս փաստաթղթի ստորագրումից չորս օր անց՝ 1941թ. հունիսի 22-ին, Գերմանիան հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա, որից անմիջապես հետո՝ հունիսի 25-ին, Մոսկվայում Թուրքիայի դեսպան Հ.Աքթայը ԽՍՀՄ արտգործնախարարությանը պաշտոնապես հայտարարեց իր երկրի «չեզոքության» մասին [9, c. 129]: Չնայած չեզոքությանը՝ պատերազմի տարիներին Թուրքիան չէր թաքցնում բացասական վերաբերմունքը ԽՍՀՄ-ի նկատմամբ:

Պատերազմի տարիներին հակախորհրդային քաղաքականություն վարելով՝ Թուրքիան նախնառաջ փորձում էր իրականացնել իր պանթուրքիստական ծրագրերը: Այդ ժամանակաշրջանում թուրքական մամուլը լեցուն էր հակախորհրդային հոդվածներով: 1941թ. օգոստոսի 5-ին Թուրքիայում Գերմանիայի դեսպան Ֆրանց Ֆոն Պապենը Բեռլին ուղարկած իր մի գրությամբ տեղեկացրել է. «Գերմանիայի հաղթանակները Ռուսաստանում հանգեցրել են նրան, որ Թուրքիայի քաղաքական շրջանակները հետաքրքրություն են ցուցաբերում խորհրդա-թուրքական սահմանից այն կողմ ապրող իրենց հայրենակիցների, հատկապես Ադրբեջանի թուրքերի ճակատագրով: Այս շրջանակները ցանկանում են իրականացնել իրենց 1918թ. ծրագրերը և Անդրկովկասը, այդ թվում՝ Բաքվի հարուստ նավթային պաշարները միացնել Թուրքիային» [10, c. 34]: Նույն օրը Բեռլինում Թուրքիայի դեսպանն առաջարկել է Գերմանիային հակախորհրդային քարոզչություն ծավալել թուրք բնակչության շրջանում, ինչը թույլ կտա միավորել կովկասյան բոլոր ժողովուրդներին մեկ «բուֆերային» պետության մեջ և նման կերպ ստեղծել թուրքական մեկ այլ պետություն [10, c. 34]:

Նկատենք, որ Աթաթյուրքի մահից հետո (1938թ.) Թուրքիայում վերստին զարթոնք է ապրում պանթուրքիստական գաղափարախոսությունը: 1941թ. նոյեմբերին Ստամբուլում նշանավոր պանթուրքիստներ Հ.Էրկիլետի, Նուրի փաշայի (Էնվեր փաշայի եղբայրը), զեներալ Իսհան Սաֆիսի և այլոց նախաձեռնությամբ կազմակերպվում է հատուկ կենտրոն՝ հակախորհրդային գործունեություն ծավալելու նպատակով: Անկարայում և Ստամբուլում հրատարակվում են պանթուրքիստական թերթեր ու ամսագրեր, որոնք ողողված էին հակախորհրդային և պանթուրքիստական հոդվածներով [11]: Այս ամենը կատարվում էր կառավարության գիտությամբ: Ավելին՝ նորից հրապարակ էր հանվում «Մեծ Թուրանի» ստեղծման գաղափարը: 1941թ. թուրքական «Բոզ քուրթ» («Գորշ գայլ») թերթը հրապարակում

է Մեծ Թուրքիայի քարտեզը, որի մեջ ընդգրկված էին Խորհրդային Միության անդրկասպյան և Անդրկովկասի տարածքները [12]:

Գերմանիան, տեսնելով Թուրքիայում տիրող այս տրամադրությունները, օգտվելով իրավիճակից՝ վերջինիս խոստացել է «չեզոք և չպատերազմելու» դիմաց նրան զիջել ԽՍՀՄ սահմանամերձ որոշ շրջաններ [13, c. 17]: Գերմանացի ֆելդմարշալ Էրիխ ֆոն Մանշտեյնը իր գրառումներում նշել է, որ հաստատելով Ղրիմի վրա հարձակման ծրագիրը՝ գերմանական հրամանատարությունը հաշվի է առել նաև այն, որ Գերմանիայի հաղթանակը որոշիչ դեր կխաղա Թուրքիայի կողմնորոշման վրա [14, s. 96]:

Ավելի ուշ՝ 1942թ. հունվարի 5-ին, ֆոն Պապենը հաղորդել է Բեռլին, որ օրեր առաջ նախագահ Ի.Բնյոնյուի հետ ունեցած հանդիպման ժամանակ վերջինս մի քանի անգամ կրկնել է, թե Թուրքիան մեծապես շահագրգռված է ԽՍՀՄ պարտությամբ, և որ անգլո-ամերիկյան կողմից ոչ մի քարոզչություն ու ոչ մի ճնշում չեն կարող ստիպել նրան այնպիսի քայլեր անել, որոնք կվնասեն Գերմանիայի շահերը: Ըստ Ի.Բնյոնյուի՝ ներկա պահին Թուրքիայի չեզոք դիրքորոշումն անհրաժեշտ է նախևառաջ առանցքի երկրներին, քան Անգլիային [10, c. 55-56]: Նման կերպ թուրքերը գերմանական կողմին հասկացնում էին, որ նախընտրում են իրենց, սակայն դեռևս պատրաստ չեն հրաժարվել չեզոքությունից: Այդ տարիներին Թուրքիայի կառավարությունը գտնվում էր Գերմանիայի ազդեցության տակ և անհամբեր սպասում էր վերջինիս հաղթանակին: Ինչպես վկայում են փաստերը, 1941–1942թթ. Թուրքիան բարելավել է քաղաքական և տնտեսական հարաբերություններն առանցքի երկրների հետ: Նա ոչ միայն տնտեսական աջակցություն է ցույց տվել վերջիններիս՝ նրանց մատակարարելով քրոմ, բամբակ, պղինձ և ռազմավարական այլ հումք, այլև, խախտելով սևծովյան նեղուցների վերահսկման հարցում ստանձնած պարտավորությունը, 1941թ. հուլիսից թույլատրել է գերմանական և իտալական նավերի անցումը նեղուցներով: Մինչև 1941թ. դեկտեմբերը պաշտոնական Անկարան ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունները կառուցում էր՝ վստահ լինելով վերջինիս պարտության վրա, ինչպես նաև կանխատեսում էր Անգլիայի և Գերմանիայի միջև դաշինքի կնքման հավանականությունը: Երկու կարևոր իրադարձություն, սակայն, ստիպեց Թուրքիայի կառավարությանը վերանայել իր տեսակետը. առաջինը Մոսկվայի մատուցներում գերմանական զորքերի պարտությունն էր, երկրորդը՝ ԱՄՆ պատերազմի մեջ մտնելը: 1942թ. իրավիճակն էլ ավելի էր լարվել, քանի որ Թուրքիայի և ԽՍՀՄ-ի միջև ծագել էին նոր խնդիրներ: Նախ, փետրվարին Գերմանիայի կառավարությունն Անկարայում մահափորձ էր

կազմակերպել իր դեսպան ֆոն Պապենի դեմ ու դրանում մեղադրել ԽՍՀՄ քաղաքացիներ Պավլովին և Կորնիլովին [9, c. 445]: Փետրվարի 12-ին ՏԱՍՍ-ը հերքել էր այն լուրը, թե խորհրդա-թուրքական սահմանի մոտ, իբր, տեղի են ունեցել լուրջ բախումներ [15]: Մարտի 26-ին Գերմանիան ԽՍՀՄ-ին մեղադրել է նաև թուրքական «Չանքայա» նավի խորտակման մեջ [9, c. 445]: Հասկանալի է, որ այս բոլոր իրադարձությունները գործողություններ էին Խորհրդային Միության դեմ և մի նպատակ էին հետապնդում. Գերմանիային անհրաժեշտ էր իր կողքին տեսնել Թուրքիան: Դեռևս 1942թ. հունվարին Ի.Ինյոնյուի հետ հանդիպման ժամանակ ֆոն Պապենը ցանկություն էր հայտնել Գերմանիայի ծրագրած «Կովկասյան արշավանքի» ժամանակ խորհրդային սահմանի մոտ տեսնել թուրքական զինված ուժերին [10, c. 58]: Ավելի ուշ Պապենը հաղորդել է Բեռլին. «Թուրքիայի զինված ուժերի շտաբը քննարկել է այդ հարցը և նպատակ ունի դա դիտել մեզ համար բարենպաստ ուղղությամբ» [10, c. 58]: 1942թ. մարտին Ա.Հիտլերը Իտալիայի վարչապետ Բ.Մուսոլինիին տեղեկացրել է, որ Թուրքիան չնայած դանդաղ, սակայն մտտենում է առանցքի երկրներին: Դրան հիմնականում նպաստում է թուրքերի և ռուսների միջև եղած թշնամությունը: Ըստ նրա՝ Թուրքիան երբեք չի լինի առանցքի երկրների թշնամին [14, s. 102]:

Գերմանիայի քաղաքական շրջանակների կանխատեսումները մոտ էին իրականությանը: 1942թ. ամռանը, երբ խորհրդային բանակը բոլոր ռազմաճակատներում պարտություն էր կրում, Թուրքիայում ձևավորվում էր բոլշևիզմի դեմ «խաչակրաց արշավանք» կազմակերպելու գաղափարը: Գերմանական փաստաթղթերից հայտնի է դառնում, որ Թուրքիան ծրագրել էր ԽՍՀՄ-ի վրա հարձակվել Կովկասի ուղղությամբ (Բաքուն գրավելու նպատակով) [16]: 1942թ. աշնանը թուրքական 26 դիվիզիաներ էին կենտրոնացված խորհրդա-թուրքական սահմանի մոտ: Ըստ պաշտոնական տվյալների՝ 1942թ. թուրքական բանակի թիվը հասնում էր 1 միլիոնի, որից 750 հազ. զինվոր տեղակայված էր խորհրդային սահմանի մոտ: Նրանք սպասում էին Ստալինգրադի անկմանը՝ Անդրկովկաս ներխուժելու համար [14, s. 101]: Որոշ աղբյուրներ նույնիսկ հաղորդում էին, որ Թուրքիան ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու է 1942թ. հոկտեմբերի 17-ին [13, c. 17]: Հայության համար դա մի նոր ցեղասպանություն էր նշանակում:

1942թ. օգոստոսին Անկարայում սկսել էին քննարկել խորհրդա-գերմանական ռազմաճակատում ընթացող ռազմական գործողությունների արդյունքները: Պաշտոնական Անկարան հատկապես անհամբերությամբ սպասում էր, թե ինչ արդյունք են ունենալու Վոլգայի և Կովկասի ուղղությամբ

գերմանացիների հարձակումները: Ինչպես տեղեկացնում էին գերմանական աղբյուրները, Թուրքիան առաջվա պես հետաքրքրված էր Խորհրդային Միության որոշ տարածքներով: Այդ պատճառով Թուրքիայի և Գերմանիայի միջև շարունակվում էին քննարկումները Ղրիմում և Կովկասում բուֆերային պետությունների ստեղծման ծրագրերի շուրջ [10, с. 67-68]:

Դաշնակից երկրները՝ Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը, հասկանում էին ստեղծված իրավիճակի լրջությունը և ամեն կերպ ցանկանում էին կասեցնել Թուրքիայի միացումը գերմանական դաշինքին: Պաշտոնական Անկարային հասկացնում էին, որ դաշնակիցների հաղթանակի դեպքում Թուրքիան կկորցնի տարածքների մեծ մասը, նույնիսկ իր վրա դրված նեղուցների վերահսկողությունը: Արդյունքում՝ 1942թ. նոյեմբերի 1-ին Թուրքիայի նախագահ Ի.Ինյոնյուն, բացելով մեջլիսի նիստը, հայտարարեց, որ նախկինի պես Թուրքիան շարունակելու է վարել չեզոքության քաղաքականություն [17, s. 336]: Մինչդեռ Թուրքիան այդ կերպ փորձում էր ընդամենը ժամանակ շահել և իրադարձությունների ընթացքից որոշել հետագա գործողությունները:

1942թ. վերջին Թուրքիայում կասկածներ էին առաջացել, որ պատերազմը կավարտվի Գերմանիայի հաղթանակով: Ստամբուլում վերջինիս հյուպատոսը հեռագրել էր Բեռլին՝ հաղորդելով, որ Թուրքիան նախկինի պես ցանկանում է, որ Գերմանիան պարտության մատնի ԽՍՀՄ-ին, միայն թե Անկարային անհանգստացնում է, որ գերմանացիների ուժերը չեն բավարարի ռուսներին հաղթելու համար [18, p. 227]: Ավելի ուշ՝ 1943թ. սկզբներին, Ստալինգրադում գերմանական բանակի ջախջախիչ պարտությունը ստիպեց Թուրքիային փոխել իր քաղաքականությունը, չնայած, ինչպես և սպասվում էր, խորհրդա-թուրքական հարաբերություններում բարելավում չնկատվեց: Ընդհակառակը, Թուրքիայում աշխուժանում էին պանթյուրքիստական ուժերը, որոնց գործունեությունն ուղղված էր ԽՍՀՄ-ի դեմ: Արդի թուրք պատմաբաններն իրենց աշխատություններում փորձում են արդարացնել այդ տարիներին ազգայնականների ձեռնարկած քայլերը: Թ.Աթայովը գրում է. «...չի կարելի ասել, որ Թուրքիայում չկային մարդիկ, որոնք տարված չլինեին պանթյուրքիստական գաղափարներով: Միայն թե այդ մարդկանց մեծ մասը թուրք-թաթարական ծագում ուներ» [14, s. 197]: Մինչդեռ պատերազմի տարիներին ակնհայտ էր, որ նույնիսկ կառավարությունը չի թաքցնում իր պանթյուրքիստական ուղղվածությունը, քանի որ ոչինչ չէր ձեռնարկում վերջիններիս գործունեությունը կասեցնելու համար: Բեռլինում Թուրքիայի դեսպանը գերմանացի մի դիվանագետի հետ հան-

դիպման ժամանակ շեշտել էր, որ «Բաքուն այն քաղաքն է, որտեղ խոսում են թուրքերեն» [14, s. 197]: Թուրքիայի նման քաղաքականությունը, հասկանալի է, չէր կարող նպաստել խորհրդա-թուրքական հարաբերությունների բարելավմանը: Դրա փոխարեն Անկարան փորձում էր բարիդրացիական հարաբերություններ պահպանել Անգլիայի ու ԱՄՆ-ի հետ: 1943թ. հունվարին Թուրքիայի կառավարության ներկայացուցիչները մի քանի անգամ հանդիպել են դաշնակից երկրների ղեկավարներին: Հատկապես հատկանշական է հունվարի 30–31-ին Ադանայում Թուրքիայի նախագահ Ի.Ինյունյուի հանդիպումը Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու.Չերչիլի հետ, որտեղ կողմերը հիմնականում անդրադարձել են խորհրդա-թուրքական հարաբերություններում ստեղծված իրավիճակին [19, p. 635]: Բացի այդ, Անկարայի կառավարությունն աշխատում էր Անգլիային ու Գերմանիային նստեցնել բանակցությունների սեղանի շուրջ: Նույնիսկ առաջարկել էր իր միջնորդությունն այս գործընթացում [14, s. 197]: Մակայն հակակոմունիստական ուղղվածությամբ հայտնի Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու.Չերչիլը, որը 1946թ. իր ելույթով կազդարարի «Մառը պատերազմի» սկիզբը, պատերազմի տարիներին միայն մեկ նպատակ էր հետապնդում, այն է՝ պարտության մատնել առանցքի երկրներին: Իր այդ ծրագրերում, հատկապես բալկանյան հարցում, նա յուրահաստուկ տեղ էր հատկացրել Թուրքիային: Վերջինս ևս գիտակցում էր, որ բրիտանական կողմին անհրաժեշտ է, որ առաջինը Բալկանյան թերակղզի մտնի ոչ թե Կարմիր, այլ թուրքական բանակը:

Այդ պատճառով էլ Չերչիլը բոլոր հնարավոր միջոցները կիրառել է Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելու համար: Եվ չնայած 1943թ. առանցքի երկրները պարտություն էին կրում բոլոր ռազմաճակատներում՝ Անկարայի կառավարությունը խուսափում էր անցնել դաշնակիցների կողմը՝ նշելով, որ դեռ վաղ է խոսել առանցքի երկրների պարտության մասին: Այլ կերպ ասած՝ 1943թ. Թուրքիան դեռ պատրաստ չէր Գերմանիային պատերազմ հայտարարել:

1944թ. գարնանը, երբ խորհրդային բանակը մոտեցել էր Ռումինիայի սահմանին, Չերչիլը կրկին փորձում է Թուրքիան ներքաշել պատերազմի մեջ [8, c. 182]: Վերջինս, սակայն, չի շտապում նման քայլ կատարել և միայն 1944թ. օգոստոսի 2-ին, այն էլ՝ Հյուսիսային Ֆրանսիայում երկրորդ ճակատի բացումից երկու ամիս անց է հայտարարում, որ խզում է դիվանագիտական հարաբերությունները և տնտեսական կապերը Գերմանիայի ու նրա դաշնակիցների հետ [19, p. 647]: Չնայած դրան, Թուրքիան 1944թ. էլ իր մեջ ուժ չգտավ վերջիններիս պատերազմ հայտարարել:

Ստալինգրադի ճակատամարտից հետո, ինչպես ասվեց, Թուրքիան ստիպված էր վերանայել իր քաղաքական պահվածքը, բայց ԽՍՀՄ-ի հանդեպ վերաբերմունքը չի փոխում: Անկարան միայն 1944թ. է փորձում վերականգնել բարիդրացիական հարաբերությունները Մոսկվայի հետ, և այդ ուղղությամբ մի շարք քայլեր է ձեռնարկում: Նախնառաջ ամռանն աշխատանքից հեռացվում են քաղաքական և զինվորական այն գործիչները, ովքեր համագործակցում էին գերմանացիների հետ. վերջիններիս թվում էր նաև երկրի զինված ուժերի շտաբի պետ Ֆ.Չաքմաքը [8, c. 182]: Ձերբակալվում է ԽՍՀՄ-ի դեմ «խաչակրաց արշավանք» սկսելու կոչով հանդես եկած պանթյուրքիստական 23 գործիչ (1944թ. նրանք կանգնել են Ստամբուլի ռազմական դատարանի առաջ, սակայն ավելի ուշ արդարացվել են) [20]: Ազատ են արձակվում Գերմանիայի դեսպան ֆոն Պապենի դեմ մահափորձ կազմակերպելու մեղադրանքով դատապարտված ԽՍՀՄ քաղաքացիներ Պավլովը և Կորնիլովը [8, c. 182]: 1944թ. մայիսի 19-ի իր ելույթում Թուրքիայի նախագահ Ի.Ինյոնյուն դատապարտում է պանթյուրքիստներին և հիշեցնում, որ օտարերկրյա զավթիչների դեմ պատերազմում իրենց միակ դաշնակիցը եղել է խորհրդային պետությունը [14, s. 120]: Այդ հայտարարությունից երեք օր անց (մայիսի 22-ին) Թուրքիայի արտգործնախարար Ն.Մենեմենջօղլուն Անկարայում ԽՍՀՄ դեսպան Ս.Վինոգրադովի հետ հանդիպման ժամանակ կարևորում է երկու պետությունների հարաբերությունների ջերմացման անհրաժեշտությունը [21, s. 222-223]: Մայիսի 27-ին Խորհրդային Միությունում Թուրքիայի դեսպան Ջ.Աչըքալըն է իր կառավարության անունից Մոսկվային այս հարցի առնչությամբ բանավոր առաջարկ անում [21, s. 223-225]: Սակայն խորհրդային կառավարությունը չէր պատրաստվում ընդառաջ գնալ Անկարային, քանի դեռ վերջինս չէր խզել հարաբերությունները Գերմանիայի հետ: Անգլիայի ճնշման տակ, ինչպես ասվեց, 1944թ. օգոստոսի 2-ին Թուրքիան ստիպված էր գնալ այդ քայլին: Ամեն դեպքում նկատենք, որ դեսպան ֆոն Պապենի վկայությամբ, Ի.Ինյոնյուն 1944թ. ամռանը ԽՍՀՄ թիկունքում Գերմանիայի և Անգլիայի մերձեցման մի վերջին փորձն է արել [18, p. 527]:

Թուրքիան, չնայած դաշնակից պետությունների անընդմեջ պահանջին, 1945թ. հունվարին դեռևս պատերազմ չէր հայտարարել առանցքի երկրներին: Եվ երբ Ղրիմի խորհրդաժողովում (1945թ. փետրվարի 4–11) քննարկվում էր Միավորված Ազգերի Կազմակերպությանը (ՄԱԿ) երկրների անդամակցության հարցը, և որոշվել էր հիմնական անդամներ ընդունել Գերմանիայի դեմ պատերազմ հայտարարած երկրներին, Ու.Չերչիլի

պնդմամբ Ի.Ստալինը համաձայնել է Թուրքիան ևս ընդգրկել ՄԱԿ հիմնական անդամների կազմում՝ Անկարայից պահանջելով մինչև 1945թ. փետրվարի վերջը պատերազմ հայտարարել առանցքի երկրներին: Արդյունքում՝ Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ ճնշմամբ Թուրքիան 1945թ. փետրվարի 23-ին պատերազմ է հայտարարել Գերմանիային ու Ճապոնիային՝ ռազմաճակատ չուղարկելով և ոչ մի զինվոր: Թեպետ այս քայլով Թուրքիան հնարավորություն ստացավ դառնալ ՄԱԿ անդամ և օգտվել արևմտյան երկրների հովանավորությունից, սակայն այդպես էլ չկարողացավ մեղմել ԽՍՀՄ զայրույթը և բացասական վերաբերմունքը պատերազմի տարիներին վարած հակախորհրդային քաղաքականության համար:

Այսպիսով, Թուրքիան Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին խախտելով իր ստանձնած միջազգային պարտավորությունները և պայմանագրերը՝ չեզոքության քողի տակ վարեց երկակի խաղ: Հատկապես պաշտոնական Անկարան նախընտրություն էր տալիս Գերմանիային, քանի որ վերջինիս հաղթանակները հնարավորություն կտային թուրքերին իրականացնել իրենց պանթուրքիստական ծավալապաշտական ծրագրերը: Հիմնականում Թուրքիան հավակնություններ ուներ ԽՍՀՄ-ում թյուրքալեզու ժողովուրդներով բնակեցված տարածքների և Կովկասի նկատմամբ: Դա բացահայտ սպառնալիք էր Խորհրդային Հայաստանի համար, և միայն Ստալինգրադի ու Կուրսկի ճակատամարտերում խորհրդային բանակի հաղթանակները կանխեցին Թուրքիայի հայերի ցեղասպանությունը ավարտին հասցնելու ծրագիրը:

Հունիս, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Arcaş Ürek C.*, Şeytan Üçgeninde Türkiye, Ankara, 1987.
2. *Kirk G.*, A Short history of the Middle East, London, 1948, p. 198.
3. *Woodward L.*, British Foreign Policy in the Second World War, v. IV, London, 1975, p. 124.
4. *Печатнов В.*, От союза к холодной войне. Советско-американские отношения 1945–1947гг., М., 2006, с. 18.
5. Foreign relations of the United States diplomatic papers (FRUS), 1939. The Far East, The Near East and Africa, v. IV, Wasington, 1951.
6. *Лота В.*, Секретный фронт Генерального штаба, М., 2005, с. 166.
7. История Великой Отечественной войны Советского Союза 1941– 1945гг., т. II, М., 1961.

8. СССР и Турция, 1917-1979, М. 1981.
9. Внешняя политика Советского Союза в период Отечественной войны, т. I, М., 1946.
10. Документы министерства иностранных дел Германии, вып. II, Германская политика Турции (1941–1943), М., 1947.
11. История дипломатии, т. IV, М., 1975, с. 584.
12. Vere Hodge E., Turkish Foreign Policy During 1918–1948, Geneva, 1950, p. 143.
13. Исраелян В., Дипломатия в годы войны (1941–1945), М., 1985.
14. Ataöv T., Turkish Foreign Policy, Ankara, 1965.
15. «Правда» (Москва), 12. II. 1942.
16. «Правда», 27. III. 1947.
17. Öztürk K., Türkiye Cumhuriyeti hükümetleri ve programları, İstanbul, 1968, s. 336. 'Նույնի' Cumhurbaşkanlarının Türkiye Büyük Millet meclisinin açış nutukları, İstanbul, 1969, s. 336.
18. Papen F., Memoirs, p. 227.
19. Churchill W., The Second World War, London, 1951, p. 635.
20. Robinson R., The First Turkish Republic, Cambridge, 1963, p. 307.
21. Türkiye dış politikasında 50 yıl. İkinci dünya savaşı yılları (1939–1946).

ԹՈՒՐԹԻԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ. ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐ

Քրիստինե Մելքոնյան

Ամփոփագիր

Թուրքիան իր ռազմավարական աշխարհագրական դիրքի շնորհիվ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին և ընթացքում դարձավ երեք կենտրոնական ուժերի՝ Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի, ինչպես նաև ԽՍՀՄ մրցակցության առարկան:

Հավասարակշռություն պահպանելով «առանցքի» և դաշնակից երկրների միջև՝ Թուրքիան, հավատարիմ մնալով իր չեզոքությանը, բացահայտ չի աջակցել որևէ մեկին: Նա որդեգրել էր հակախորհրդային քաղաքականություն՝ հակամարտող երկու կողմից ստանալով ռազմատեխնիկական օժանդակություն: Միայն 1945թ. փետրվարի 23-ին է Թուրքիան հրաժարվում չեզոքությունից և մտնելով պատերազմի մեջ՝ հայտնվում է հաղթող կողմի շարքում:

ТУРЦИЯ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ: СОЮЗНИКИ И ПРОТИВНИКИ

Кристине Мелконян

Резюме

Благодаря своему стратегическому географическому положению, Турция накануне и в годы Второй мировой войны стала объектом соперничества трех центров силы – Германии, Великобритании и Франции, а также СССР.

Балансируя между странами «Оси» и союзниками, Турция показывала, что не склоняется на чью-либо сторону, придерживаясь нейтралитета. Она вела антисоветскую политику, получая военную техническую помощь от двух сторон конфликта. Только 23 февраля 1945 года Турция отказывается от позиции нейтралитета и вступает во Вторую мировую войну на стороне победителей.

TURKEY IN WORLD WAR II: ALLIES AND ENEMIES

Christine Melkonyan

Resume

Due to its strategic geographical position, before and during the World War II Turkey became an object of rivalry between the three centers of power — Germany, UK and France, as well as the USSR.

Balancing between the powers of the Axis and Allies, Turkey showed it was not inclined to openly support any of the sides, adhering to neutrality. Turkey led anti-Soviet policy, receiving military technical assistance from both sides of the conflict. Only on February 23, 1945 Turkey abandoned its position of neutrality and entered the World War II on the winning side.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՌՈՒՄ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

*Տարոն Մարոյան**

*Բանալի բառեր*¹ ռուս-թուրքական հարաբերություններ, հայկական գործոն, ռուս-թուրքական մերձեցումներ, պատմական նախադեպեր:

Համաշխարհային պատմության մեջ քիչ չեն այն պետությունները, որոնց փոխհարաբերություններն անմիջականորեն անդրադարձել են նրանց հարևան ու հարակից պետությունների և ժողովուրդների վրա: Մասնավորապես, այս առումով կարելի է առանձնացնել ռուս-թուրքական հարաբերությունները, որոնց պատմությունը հարուստ է ծայրահեղություններով՝ ռազմադիվանագիտական ճակատներում կատաղի բախումներից մինչև դաշնակցային հարաբերություններ, որոնք ուղղակիորեն ազդել են մասնավորապես հայերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի վրա: Սույն աշխատանքում վերհանվել և լուսաբանվել են պատմական այն իրադարձությունները, որոնք սրել կամ փոխգործակցության են մղել ռուսական և թուրքական (օսմանյան) կողմերին: Առանձնակի ուշագրավ և կարևոր է հիշյալ կողմերին փոխգործակցության մղած փաստերի, ինչպես նաև դրանց դրդապատճառների օբյեկտիվ լուսաբանումը, քանի որ, եթե ռուս-թուրքական պատերազմներին (12) քիչ թե շատ ծանոթ է ընթերցողը, ապա նույնը չենք կարող ասել ռուս-թուրքական դաշնակցային հարաբերությունների վերաբերյալ, որոնց իմացությունը նույնպես ունի սկզբունքային նշանակություն: Ռուս-թուրքական մերձեցումները, պատերազմների համեմատ, քանակով թեև զգալիորեն սակավ են, բայց պակաս ազդեցություն չեն թողել դրանցում ներգրավված պետությունների և ժողովուրդների միջազգային կարգավիճակի վրա:

Ռուս-թուրքական միջպետական շփումները հաստատվել են 15-րդ դարի վերջերին, որոնք առավելապես կրել են առևտրային բնույթ [1, c. 149-

* ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հայցորդ:

150]: Սակայն ռուսական և օսմանյան պետությունների հետագա հզորացումն ու տարածքային ընդարձակումները բերեցին նրան, որ հիշյալ տերություններն անմիջական շփման և առճակատման մեջ մտան միմյանց հետ: Հպանցիկ անդրադառնալով և ընդհանուր գծերով ներկայացնելով ռուս-թուրքական ընդհարումները՝ անդրադառնանք նաև ռուս-թուրքական մերձեցումներին ու դրանց դրդապատճառներին, որոնց ուսումնասիրությունը, ինչպես վերն ասվեց, կարևոր է, քանի որ ունի ուսուցողական նշանակություն, հատկապես արդի աշխարհաքաղաքական պայմանների համատեքստում [առավել մանրամասն տե՛ս 2]: Նշենք, որ դիվանագիտական հարաբերությունները Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև հաստատվել են միայն Կոստանդնուպոլսի 1700թ. հուլիսին կնքված ռուս-օսմանյան հաշտության պայմանագրից հետո [1, c. 154-155; 3, c. 131-132]: Մինչդեռ այդ պետություններն արդեն հասցրել էին երեք անգամ պատերազմել միմյանց հետ (1568-1570թթ., 1672-1681թթ., 1686-1700թթ.): Ռուսաստանն ու Թուրքիան այն պետություններն են, որոնք իրենց գաղափարական, էթնիկական, կրոնական, պատմամշակութային և աշխարհաքաղաքական կառուցվածքով և հակասություններով միմյանցից՝ որպես հակառակ բևեռներ, էականորեն առանձնանում են, ինչն էլ, բնականաբար, կանխորոշել է նրանց հարաբերությունների պատմական անհանգիստ ընթացքը: Թերևս, տեղին կլինի հիշատակել օսմանյան պետական գործիչ Մեհմեդ Էմին Ֆուադ փաշայի (1814-1869) 1869թ. նշած այն տեսակետը, որով Ռուսաստանը վերջինիս կողմից օբյեկտիվորեն որակվել էր որպես «մեր կայսրության բնական թշնամի» [4, էջ 33-34]:

Անդրադառնալով ռուս-թուրքական հարաբերություններում հայկական գործոնի ի հայտ գալուն, հարկ է նշել, որ այն սկսեց դեր խաղալ 18-րդ դարի սկզբից, երբ հայության ազատագրման և ինքնորոշման խնդիրներով տարված մի շարք նվիրյալներ, ի դեմս Իսրայել Օրու (1658-1711), Դավիթ Բեկի (1669-1728) և այլոց, դիվանագիտական և ռազմական ճանապարհով փորձում էին թոթափել պարսկական և թուրքական տիրապետությունները, որոնց ընթացքում շփումներ հաստատվեցին նաև ռուսական արքունիքի հետ [5, էջ 81-95]: Ռուսական պետության հզորացումն ու հետագա ընդարձակումները վերջինիս արևելյան հիմնահարցերում ակտիվորեն ներգրավվելու հնարավորություն ընձեռեց, որոնց ընթացքում հայ ժողովուրդը մշտապես եղավ ռուսական կողմին հուսալի աջակցողի դերում: Նշենք, որ եթե Պարսկաստանը ստիպված էր հաշտվել Հայաստանի՝ իրեն պատկանող արևելյան հատվածի կորստի հետ (1826-1828թթ. ռուս-պարսկական

պատերազմի արդյունքներով [6, էջ 427-428]), ապա նույնը չենք կարող ասել Օսմանյան կայսրության մասին: Վերջինս, ունենալով ռազմավարական նշանակության աշխարհագրական դիրք (առաջին հերթին՝ նեղուցների առկայությունը), բոլոր ժամանակներում էլ առավելագույնս օգտվել է այդ հանգամանքից, իսկ, մասնավորապես, թուրքական դիվանագիտությանը մշտապես բնորոշ են եղել ճկունությունն ու ծայրահեղ պրագմատիզմը, որոնք մեկ անգամ չէ, որ Թուրքիային դուրս են բերել բարդ իրավիճակներից: Այս ամենին առանձին դեպքերում գումարվել է նաև մի շարք տերությունների (Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի և... Ռուսաստանի) աջակցությունը, ինչից թուրքերն օգտվել են առավելագույնս արդյունավետ կերպով: Մնում է միայն արձանագրել, որ պատմությունն ապացուցել է նման քաղաքականության կենսունակությունը: Այսպիսով, պետք է փաստենք, որ, ի տարբերություն Պարսկաստանի, Թուրքիան երբեք չկամեցավ հրաժարվել առաջավորասիական հեգեմոնի նկրտումներից, նույնիսկ Օսմանյան կայսրության փլուզման իրական սպառնալիքի պայմաններում: Կարող ենք ասել, որ թուրքերը, այս առումով, պարսիկներից շատ ավելի համար գտնվեցին, ինչն էլ, անխոս, տվեց իր պտուղները: Բնականաբար, այս հանգամանքը նույնպես պետք է ենթադրեր ռուս-թուրքական գրեթե անդադար առձակատումներն ընդհուպ մինչև մեր օրերը: Չնայած այս ամենին, ռուս-թուրքական հարաբերություններին, ինչպես ասվեց վերը, բնորոշ են եղել նաև մերձեցումները:

Ռուս-թուրքական հարաբերություններում հայկական գործոնն առավել սուր արտահայտվեց 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքներով, երբ Սան Ստեֆանոյում, ապա Բեռլինի վեհաժողովում արժարծովեց, միջազգային հնչեղություն ու նաև իրավական կարգավիճակ ստացավ միանգամայն նոր՝ «Հայկական հարց» եզրույթը [7, էջ 5-6]: Սա հետագայում պետք է իսկական «դամոկլյան սուր» դառնար Օսմանյան կայսրության գլխին՝ դրդելով նրան աննախադեպ վայրագությունների արևմտահայության նկատմամբ: Այս առումով Թուրքիայի առջև լայն հեռանկարներ բացվեցին Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918թթ.) տարիներին, երբ օսմանյան կառավարության պարագլուխներ հանդիսացող երիտթուրքերը («Միություն և առաջադիմություն» կուսակցություն) մշակեցին, ապա և 1915թ. իրականացրին արևմտահայության տեղահանումներն ու կոտորածները, որոնք հետագայում պետք է բնորոշվեին որպես «ցեղասպանություն» [8, էջ 283-442]: Նշենք, որ երիտթուրքերը, արևմտահայությունը դիտելով որպես թշնամի Ռուսաստանին դաշնակից տարր, այս կերպ նաև

«Հայկական հարց»-ից ազատվելու փորձ կատարեցին, ինչն արդեն տասնամյակներ շարունակ տերությունների, այդ թվում՝ Ռուսաստանի ձեռքում վերածվել էր շահարկման արդյունավետ գործիքի: Այսպիսով, «Հայկական հարց»-ն ընդամենը պատրանք եղավ համայն հայության համար: Օսմանյան կայսրության առջև նպաստավոր հեռանկարներ բացեցին նաև 1917թ. հոկտեմբերին Ռուսաստանում ազգային պետության փլուզումն ու դրան հաջորդած քաղաքացիական պատերազմը (1917-1922թթ.): Արդյունքում՝ ներքին և արտաքին սպառնալիքների առջև հայտնված և արդեն բոլշևիկյան դարձած Ռուսաստանը Օսմանյան կայսրության հետ 1917թ. դեկտեմբերին կնքելով Երզնկայի զինադադարը, իսկ 1918թ. մարտին Քառյակ միության պետությունների հետ՝ Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը՝ դուրս եկավ Առաջին աշխարհամարտից և Անտանտի կազմից [9, c. 195, 230-232]: Օգտվելով ստեղծված պատեհ իրադրությունից՝ օսմանյան իշխանությունները խրախուսեցին Անդրկովկասի անջատումն ու անկախացումը (1918թ. ապրիլ) ներքին խնդիրներով տարված Ռուսաստանից, որին անմիջապես հետևեց թուրքական զորքերի ներխուժումը տարածաշրջան (1918թ. մայիս): Անհիրաժեշտ է արձանագրել, որ Ռուսաստանի թուլացումն անմիջականորեն բխում էր Թուրքիայի աշխարհաքաղաքական ծրագրերից, որոնք համակված էին պանթուրքիզմի ազգայնամոլ գաղափարներով [10, c. 87-95]: Սույն գաղափարախոսությունը ենթադրում է Թուրքիայի գլխավորությամբ Եվրասիայում բնակվող թուրքալեզու ժողովուրդների համախմբումը մեկ պետության՝ Մեծ Թուրանի կազմում: Այն, ըստ էության, Թուրքիայի շովինիստական և ծավալապաշտական նկրտումների հանրագումարն է, որը սպառնում է հայ ժողովրդի գոյությանը, ինչպես նաև ենթադրում Իրանի, Ռուսաստանի և Չինաստանի մասնատումը [11]: Թուրքական իշխանություններն այս ազգայնամոլ ծրագրերին այնքան արժեք են հաղորդել, որ դրանք փոխանցվել են սերնդեսերունդ: Եվ որքան էլ պաշտոնական Անկարան փորձի ներկայացնել հակառակը, ակնհայտ է, որ պանթուրքիզմի մոլուցքն այսօր էլ ստանում է լուրջ առարկայական դրսևորումներ նրա քաղաքական վարքագծում [12, 13]:

Այսպիսով, 1918թ. գարնանը ստեղծված իրադրությունը ենթադրում էր թուրքական բանակի սրընթաց առաջխաղացումը Կովկասյան ռազմաճակատում, ուր ռուսական զորքերի հեռանալուց հետո պաշտպանական գործառույթներն ստանձնել էին կամավորական ուժերը, որոնք առավելապես կազմված էին հայերից: Սակայն թուրքական բանակը, ի դեմս կովկասյան թաթարների, ուներ հուսալի դաշնակիցներ, որոնք ջանքեր չէին

խնայում իրենց «թուրք եղբայրներին» ամեն կերպ աջակցելու առումով [10, Ը. 15-16, 94-95]: Այս գործընթացների ընթացքում էր, որ ձևավորվեցին անդրկովկասյան հանրապետությունները՝ Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը: Մակայն վերջիններիս կարճատև գոյատևումը բոլշևիկյան էքսպանսիայի, իսկ Հայաստանի Հանրապետության (1918-1920) պարագայում՝ նաև 1920թ. օգոստոսին կնքված ռուս-թուրքական հակահայ դաշինքի արդյունք էր [առավել մանրամասն տե՛ս 14]:

Մինչ առաջին ռուս-թուրքական դաշինքներին անցնելը՝ նախ հարկ է ընդհանուր գծերով ներկայացնել զարգացման և քաղաքակրթական այն աստիճանը, ուր գտնվում էին Ռուսական և Օսմանյան կայսրությունները 18-19-րդ դարերում: Նման մոտեցումը հնարավորություն կտա իրապես ընկալելու մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող այն միանգամայն նոր իրավիճակային զարգացումները, որ գրանցվեցին հիշյալ տերությունների միջև փոխհարաբերություններում: Դրանք, ըստ էության, տնտեսապես հետամնաց միապետություններ էին, որոնք, մինգամայն օրինաչափ կերպով, հանդիսանում էին նաև հետադիմական արժեհամակարգի կրողներ: Մույն մոտեցումն ուղղակիորեն պետք է տարածվեր նաև այդ պետությունների ներքին և արտաքին քաղաքականության վրա: Նույնիսկ 18-19-րդ դարերում քաղաքակիրթ աշխարհին արդեն հայտնի էին ցարական և սուլթանական իշխանությունների կողմից սեփական բնակչության նկատմամբ տարաբնույթ բռնաճնշումները: Պետք է փաստենք նաև, որ օսմանյան հասարակության թուրքական հատվածի էլիտան իր կրթական աստիճանով անհամեմատ զիջում էր ռուսականին: Մինչդեռ, այս առումով, իրավիճակը միանգամայն այլ էր կայսրության այլազգի, առավելապես հույն, հայ և ասորի բնակչության առումով: Հետևաբար, սուլթանական վարչակարգի և նվաճած ու նվաճված կողմերի միջև կրթական ակնհայտ տարբերությունների առկայության պայմաններում, միանգամայն օրինաչափ էին այն վայրագությունները, որ սոցիալական և հատկապես էթնիկ ու կրոնական հիմքերի վրա պարբերաբար տեղի էին ունենում օսմանյան պետությունում [15, էջ 102-136]: Չնայած վերը թվարկված ընդհանրություններին՝ Ռուսական կայսրության հասարակական-քաղաքական կյանքում առկա էին որոշ առանցքային առանձնահատկություններ: Մասնավորապես, ռուսական հասարակությունը թեև նույնպես միատարր չէր, սակայն դրանում առկա ճնշումներն առավելապես կրում էին սոցիալական բնույթ՝ անկախ դրանց օբյեկտի ազգային պատկանելությունից [16, Ը. 107, 592]: Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքն ուղղակիորեն մարմնավորված էր ճորտատիրական կար-

գում, քանի որ տեղի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմված էր ճորտերից [17, c. 208-209, 292-293]: Սույն իրողությունը դարձել էր այդ ժամանակների ռուսական մտավորականության և առաջադեմ մարդկության ծաղրու ծանակի, ինչպես նաև սուր քննադատության առարկան [18, c. 30-31, 448-452, 508-510; 19, c. 56-58]: Ուստի, պատահական չէր, որ ռուսական ինքնակալությունը հանդես եկավ ընդդեմ Ֆրանսիայում ծավալվող հասարակական-քաղաքական առաջադիմական փոփոխությունների, որոնց ընթացքում ցարիզմը դաշնակցեց նույնիսկ իր ռիտերիմ հակառակորդ Օսմանյան կայսրության հետ [20, c. 95]՝ այդ կերպ նախապատվություն տալով իր արտաքին քաղաքականության գաղափարական կողմին: Այսպես, Ֆրանսիական մեծ հեղափոխության ընթացքում միահեծանության (1789թ.), ապա և միապետական կարգի տապալումը (1792թ.), ինչպես նաև Ֆրանսիական Հանրապետության հռչակումը (1792թ. սեպտեմբերի 22) թշնամանքով ընկալվեց Եվրոպայի ֆեոդալ-միապետական վարչակարգերի կողմից: Բացի այդ, Ֆրանսիայում տեղի ունեցած իրավական և սոցիալ-քաղաքական արմատական փոփոխությունները, մասնավորապես՝ 1789թ. օգոստոսին ընդունված Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրն իր առաջադիմական սկզբունքներով նույնպես անընդունելի եղան նրա հարևանների համար: Արդյունքում՝ 1792 թվականից Ֆրանսիայի դեմ ձևավորվեցին եվրոպական բացարձակ միապետությունների և Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական դաշինքները՝ հակաֆրանսիական խմբավորումները (1792-1815), որոնք հետապնդում էին ազդեսիվ նպատակներ [21]: Այն է՝ ներխուժում Ֆրանսիա և հին հասարակական հարաբերությունների ու բացարձակ միապետության վերականգնում: Նշենք, որ, ի տարբերություն իր դաշնակիցների, Մեծ Բրիտանիան հետապնդում էր միանգամայն այլ նպատակներ: Բանն այն է, որ դարեր շարունակ Ֆրանսիան Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական և տնտեսական գլխավոր մրցակիցն էր, և անկախ Ֆրանսիայում առկա պետական կարգից ու սոցիալ-քաղաքական կառուցվածքից, Լոնդոնն ամեն կերպ ձգտում էր թուլացնել ախտյանին: Նշված գործընթացներում Ռուսաստանին՝ որպես մարդկային ռեսուրսներով առավել հարուստ պետության, վիճակված էր դառնալ Մեծ Բրիտանիայի հակաֆրանսիական քաղաքականության գլխավոր գործիքը: Մասնավորապես, օգտվելով իր դաշնակիցների, այդ թվում՝ Ռուսաստանի տնտեսական հետամնացությունից՝ բրիտանացիները նրանց յուրաքանչյուր հարյուր հազար զինվորի դիմաց տարեկան վճարում էին 1.250.000 ֆունտ ստերլինգ [22, c. 87, 97]: Ռուս-օսմանյան դաշինքը գրանցվեց 1799թ. հունվարին երկրորդ հակաֆրանսիական խմբա-

վորման (1798-1801թթ.) շրջանակներում, երբ Մեծ Բրիտանիայի տնտեսական հզորությունը սասանելու նպատակով 1798թ. գարնանը ֆրանսիական իշխանությունները ձեռնարկեցին Արևելյան (Եգիպտական) արշավանքը (1798-1801թթ.) [23]: Սույն ձեռնարկման հաջող ելքը կզրկեր բրիտանացիներին Ֆրանսիայի դեմ երկարատև պատերազմներ վարելու, ինչպես նաև իրենց դաշնակից արքունիքներին առատ ֆինանսավորելու հնարավորությունից: Ռուս-օսմանյան այս դաշինքը նաև բրիտանական դիվանագիտության եռանդուն ջանքերի արդյունք էր [24, էջ 139-140]: Եվ չնայած այն հաջողություն չունեցավ, սակայն հիմք դրվեց պատմական այն նախադեպին, որը հետագայում ոչ մեկ անգամ պետք է կրկնվեր: Հարկ է նշել նաև այն, որ Արևելյան արշավանքի ընթացքում ֆրանսիական հրամանատարությունը դեպի Կոստանդնուպոլիս արշավելու և այդ նպատակով օսմանյան լծի տակ գտնվող հայության աջակցությունն ստանալու խնդիր էր դրել [25, էջ 9-10]: Նշվածը, սակայն, չիրագործվեց ֆրանսիական ուժերի դեպի Միրիա կատարած ռազմարշավի (1799թ.) անհաջող ելքի պատճառով:

Ուշագրավ է նաև 19-րդ դարի 30-ականների ռուս-օսմանյան դաշնակցությունը [26, էջ 431-452]: Այսպես, 1831թ. պատերազմ էր սկսվել օսմանյան սուլթան Մահմուդ II-ի և վերջինիս անհնազանդ վասալ, Եգիպտոսի կառավարիչ Մուհամեդ Ալիի միջև: Ռազմական գործողություններն ընթանում էին հոգուտ Եգիպտոսի, ինչը սուլթանին ստիպեց ընդունել ռուսական աջակցությունը, քանի որ սույն գործընթացների նկատմամբ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ընդունել էին կրավորական դիրքորոշում: Արդյունքը եղավ այն, որ ռուսները բառացիորեն փրկեցին սուլթանին՝ կանխելով Եգիպտոսի ուժերի առաջխաղացումը դեպի Կոստանդնուպոլիս: Պատերազմը դադարեց 1833թ. մայիսին, իսկ նույն թվականի հուլիսին կնքվեց ռուս-օսմանյան դաշինքը (Ունքյար-Իսքելեսի պայմանագիր), որն, ի հակակշիռ Մեծ Բրիտանիայի ռազմավարական շահերի, Ռուսաստանին տալիս էր լայն լիազորություններ Բոսֆորի և Դարդանելի նեղուցների վերահսկման առումով: Չնայած շուտով Ռուսաստանը զրկվեց այս առավելությունից, ինչն ամրագրվեց Մեծ Բրիտանիայի ջանքերով հրավիրված «Նեղուցների մասին» լոնդոնյան կոնվենցիայում (1841թ. հուլիս): Այսպիսով, օբյեկտիվ կլինի նշել, որ Օսմանյան կայսրությանը հաջողվեց օգտագործել իր աշխարհաքաղաքական հակառակորդ Ռուսաստանի ներուժը: Մինչդեռ, վերջինիս հետ նրա պատերազմն ավարտվել էր անհաջող ելքով և վերը հիշատակված իրադարձություններից ընդամենը մի քանի տարի առաջ՝ 1829թ.: Սա, թերևս, կարելի է դիտարկել որպես *Realpolitik*-ի դասական

օրինակ թուրքական դիվանագիտության կատարմամբ:

Ամփոփելով՝ անհրաժեշտ է մեկ անգամ ևս մատնացույց անել, որ ռուս-թուրքական հարաբերությունները հաճախ աչքի են ընկել իրենց կտրուկ շրջադարձերով (ինչպես, օրինակ, 2015-2017թթ.), ոչ միանշանակ, անկանխատեսելի ու ֆորսամաժորային ելքերով: Առհասարակ, սրանք այն հարաբերություններն են, որոնք իրենց եզակիությամբ էականորեն առանձնանում են այլ պետությունների միջպետական հարաբերություններից և, թերևս, չունեն իրենց համարժեք նախադեպը համաշխարհային պատմության մեջ: Չնայած այս առումով որպես քիչ թե շատ մոտ օրինակ կարելի է դիտարկել ռուս-գերմանական հարաբերությունները, որոնք նույնպես ունեցել են բազում հակասական փուլեր: Այս համատեքստում, թերևս, միանման կարելի է համարել նաև հայ և լեհ ժողովուրդների պատմական ճակատագրերը, որոնք, շրջապատված լինելով հզոր հարևաններով՝ թուլանալուն պես նրանց կողմից ենթարկվել են բաժանումների ու տարաբնույթ ճնշումների: Հատկանշական է այն, որ և՛ Լեհաստանի, և՛ Հայաստանի պարագայում կողմերից մեկը եղել է Ռուսաստանը, սակայն սրա հետ մեկտեղ առկա է նաև էական վերապահում: Մասնավորապես, Լեհաստանի դեպքում Ռուսաստանի՝ որպես հիշյալ կողմերից մեկի, առկայությունը կրել է մշտական բնույթ:

Մայիս, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Петросян Ю.А.*, Османская империя: могущество и гибель. Исторические очерки, М., 1990.
2. *Սարգսյան Տ.Ս.*, Սիրիական և ուկրաինական ճգնաժամերը Ռուսաստանի և Թուրքիայի շահերի տեսանկյունից // «Մխիթար Գոշ», Գիտական հոդվածներ, 2017, 2(47), էջ 296-299:
3. *Павленко Н.И.*, Птенцы гнезда Петрова, М., 1985.
4. *Միմոնյան Հր. Ռ.*, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991:
5. *Գալոյան Գ.Ա.*, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917թ.), Ե., 2004:
6. *Բայրուրդյան Վ.Ա.*, Իրանի պատմություն, Ե., 2006:
7. *Մահակյան Տ.Ղ.*, Ցավալի պայմանագրեր, Ե., 2007:
8. *Ղազարյան Հ.Ս.*, Հայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, հատոր երկրորդ, Ե., 2004:
9. *Киссинджер Г.*, Дипломатия, М., 1997.
10. *Зареванд*, Турция и пантуранизм / введ. А.Н. Мандельштама, М., 2015.

11. Մաքոյան S.Ս., Պանթյուրքիզմը որպես եվրասիական ժողովուրդների աշխարհաքաղաքական մարտահրավեր // «21-րդ ԴԱԸ», թիվ 1 (71), Ե., 2017, էջ 75-84:
12. Сафратян Р.А., Пантюркизм 2023: Турция нацелилась на Алеппо и Нахичевань, 06.03.2018թ., <https://ru.armeniasputnik.am/armenia/20180306/10810385/pantuyrkizm-2023-turkey-nacelilas-na-aleppo-i-nahichevan.html>
13. Հարությունյան Վ.Վ., Նախիջևանը Թուրքիայի համար պլացդարմ է արևելք անցնելու համար, 21.02.2017թ., http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15474
14. Մաքոյան S.Ս., Ռուս-թուրքական հարաբերությունները և Հայաստանը // «21-րդ ԴԱԸ», թիվ 5 (75), Ե., 2017, էջ 92-102:
15. Պողոսյան Ս.Կ., Գոյատևման պայքարի քառուղիներում, Ե., 1988:
16. Понасенков Е.Н., Первая научная история войны 1812 года, М., 2017.
17. Тарасов Б.Ю., Россия крепостная: история народного рабства, М., 2011.
18. Россия первой половины XIXв. глазами иностранцев, сост. Лимонов Ю.А., Л., 1991.
19. Радищев А.Н., Путешествие из Петербурга в Москву, М., 1982.
20. Капитонова Н.К., Романова Е.В., История внешней политики Великобритании, М., 2016.
21. Понасенков Е.Н., Сакоян Т.А., Характер и цели антифранцузских коалиций // «Մխիթար Գոշ», Գիտական հոդվածներ, 2015, 2(43), էջ 186-193:
22. Троицкий Н.А., Александр I и Наполеон, М., 1994.
23. Մաքոյան S.Ս., Նապոլեոն Բոնապարտի արևելյան արշավանքի շարժանիքները // ՀՀ ԳԱԱ ԱԻ «Մերձավոր Արևելք» XI-XII հոդվածների ժողովածու, Ե., 2017, էջ 150-155:
24. Բորիսով Յու.Վ., Շարլ-Մորիս Թալեյրան, Ե., 1989:
25. Բախչինյան Ա.Հ., Նապոլեոն Բոնապարտը և հայերը, Ե., 2003:
26. Բայրուրդյան Վ.Ս., Օսմանյան կայսրության պատմություն, Ե., 2011:

**ՀԱՅՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

Տարոն Մաքոյան

Ամփոփագիր

Հոդվածում դիտարկվել են ռուս-թուրքական հարաբերությունների պատմությունն ու դրանց առանձնահատկությունները, ուրույն տեղ է հատկացվել նաև հիշյալ կողմերի միջև մերձեցումների լուսաբանմանը, ինչպես նաև դրանց էության և դրդապատճառների վերլուծությանը: Ներկայացվել են նաև ռուս-թուրքական հարաբերություններում հայկական գործոնի ծագումն ու դրանցում նրա ունեցած նշանակության աստիճանը:

**АРМЯНСКИЙ ФАКТОР В РОССИЙСКО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЯХ:
ИСТОРИЧЕСКИЙ ОЧЕРК**

Taron Sakoyan

Резюме

В статье рассмотрены история и специфика российско-турецких отношений, особое место отводится освещению сближений вышеупомянутых сторон, анализу их сути и мотивов. Автор также рассматривает возникновение в этих отношениях армянского фактора и степень его значимости.

**THE ARMENIAN FACTOR IN RUSSIAN - TURKISH RELATIONS:
A HISTORICAL SKETCH**

Taron Sakoyan

Resume

The article reviews the history and specificity of Russian-Turkish relations, and particularly focuses on the rapprochement of the aforementioned countries, analyzing its essence and motives. Above all, the Armenian factor and its historical significance in the relationship between Russia and Turkey are presented.

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Դավիթ Սաֆարյան¹

*Բանալի բառեր*¹ հայ-թուրքական հարաբերություններ, թուրքական ՁԼՍ մոնիթորինգ, թուրքական հասարակական-քաղաքական դիսկուրս, դարաբաղյան հիմնախնդիր:

Ղարաբաղյան հիմնախնդրի ընկալումները թուրքական հասարակական-քաղաքական դիսկուրսում և դրանց կախվածությունն ադրբեջանական դիրքորոշումից, ինչպես նաև թուրք քաղաքական գործիչների, վերլուծաբանների, ՁԼՍ անդրադարձներն արցախյան թեմատիկային ավելի քան երկու տասնամյակ մշտադիտարկվում են հայ թուրքագետների կողմից: Ստորև կփորձենք հակիրճ ներկայացնել մեր մշտադիտարկման որոշ արդյունքները, որոնք ամփոփվել են նաև մեր մի շարք գիտական հրապարակումներում¹ և կոլեկտիվ մենագրության² մեջ:

Անկախացումից ի վեր Հայաստանը մշտապես հանդես է գալիս Թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու օգտին, ինչը միանգամայն համահունչ է միջազգային իրավունքի սկզբունքներին: Թուրքիան 1991թ. դեկտեմբերի 16-ին ճա-

¹ Պատմական գիտությունների թեկնածու:

¹ Տե՛ս *Սաֆարյան Դ.*, Հայ-թուրքական կարգավորման գործընթացի սառեցման հայկական փաստարկների շուրջ, Մերձավոր Արևելք, Հոդվածների ժողովածու, VIII, Երևան, 2012, էջ 313-321, *նույնի*՝ «Ֆուտբոլային դիվանագիտության» ծավալման արդյունքում հայ-թուրքական հարաբերությունների վիճակի գնահատման հարցի շուրջ, Արևելագիտության հարցեր, Երևան, 2012, էջ 219-228, *նույնի*՝ Հայ-թուրքական առևտրատնտեսական կապերը դիվանագիտական հարաբերությունների բացակայության և փակ սահմանների պայմաններում (2001-2011թթ.), «21-րդ դար», №4, Երևան, 2014, էջ 69-82, *նույնի*՝ Թուրքիայի հասարակական-քաղաքական կարծիքը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հիմնախնդրի մասին, «21-րդ դար», №1, Երևան, 2015, էջ 120-134, *Сафарян Д.*, К вопросу о позиции турецкой общественно-политической мысли по проблеме установления официальных отношений с Арменией (1991-1998гг.), «21-ый ВЕК», №2, Ереван, 2015, с. 119-134.

² *Սաֆարյան Դ., Մելիքյան Գ., Ոսկանյան Վ., Սաֆարյան Ալ.*, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում, Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 192 էջ:

նաչել է Հայաստանի անկախությունը, սակայն երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ չեն հաստատվել մինչև այսօր: Գիտակցելով, որ Հայաստանը կարող է իրականացնել սեփական ազգային շահերով առաջնորդվող քաղաքականություն, թուրքական քաղաքական վերնախավն ի սկզբանե որդեգրեց նախահարձակ դիրքորոշում՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար առաջադրելով Թուրքիայի ժամանակակից սահմանները ճանաչելու և Հայոց ցեղասպանության վերաբերյալ պնդումներից հրաժարվելու նախապայմանները: Թուրքիան (1993թ. ապրիլի 3-ին Արցախում հայկական ուժերի կողմից Քարվաճառի ազատագրումից հետո) առաջ քաշեց նաև ազատագրված տարածքներն Ադրբեջանին հանձնելու նախապայմանը: Այսպիսով, Թուրքիան, ի նշան Ադրբեջանի հետ համերաշխության և որդեգրելով բացահայտ ճնշման կամ հարկադրման քաղաքականություն, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը ևս ներառեց հայ-թուրքական հարաբերությունների թնջուկի մեջ: 1998թ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը հայաստանյան արտաքին քաղաքականության գերակա խնդիրների շարքը դասվելուն հետևեցին թուրքական հասարակական-քաղաքական դիսկուրսում Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականության իրականացման «մոդուսի» ճշգրտումը, նոր մեթոդների և հնարքների կիրառման փնտրտուքը¹:

Տարածաշրջանային քաղաքական և ռազմական առաջատարի հավակնություններ ունեցող Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության լրակազմում ընդգրկված «հայկական նախաձեռնությունն», անշուշտ, ևս մի «փորձաքար» էր հանդիսանալու իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության կողմից հռչակված և ի սկզբանե տապալման դատապարտված «զրո խնդիր հարևանների հետ» սկզբունքի կենսագործման համար²:

Թուրքիայի նախագահ Ա.Գյուլը պատմության մեջ առաջին անգամ այցելեց Հայաստան, ստորագրվեցին դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և քաղաքական հարաբերություններ զարգացնելու մասին

¹ Մասնավորապես տե՛ս ևս հմնտ. *Aktan G.*, Ermeni Sorununun Hukuksal Boyutu, http://www.eraren.org/bilgibankasi/tr/index2_1_1.htm, Gültaşlı S., Ermeni meselesinde Türk basınının büyük günahı, “Zaman”, 16.04.07, http://www.zaman.com.tr/selcuk-gultasli/bruksel-ermeni-meselesinde-turk-basininin-buyuk-gunahi_528123.html, *Laçiner S.*, Bir Ermeni Tasarısı Hiç Bu Kadar İşe Yaramamıştı, 10-03-2010, <http://www.usak.org.tr/print.php?id=1135&z=2>, *Laçiner S.*, Ermenistan-Türkiye İlişkilerinde Sınır Kapısı Sorunu ve Ekonomik Boyut, <http://www.eraren.org/index.php?Page=Dergilerik&IcerikNo=154>, *Lütem Ö.E.*, Ermenistan seçimlerinin sonuçları, <http://www.hurriyet.com.tr/strateji/6513799.asp>, *Özkoray E.*, “Ermeni soykırımı niçin hâlâ tabu?”, 10.03.2010, <http://www.kuyere.net/modules/AMS/index.php?storytopic=138&start=22>

² *Ռ.Մելքոնյան*, «Թուրքիան ձախողեց «զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականությունը», <https://armenpress.am/arm/news/665512/>, <http://www.aravot.am/2011/11/10/284125/>

արձանագրությունները, այսուհանդերձ (անշուշտ, նաև ադրբեջանական անթաքույց ճնշման հետևանքով), պաշտոնական Անկարան շեշտադրել է հայ-թուրքական սահմանը միակողմանիորեն փակելու պատճառ հանդիսացած դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում շոշափելի առաջընթացի նախապայմանը¹: Թուրքական ՁԼՄ մշտադիտարկումն արդեն «ֆուտբոլային դիվանագիտության»² ծավալման վաղ փուլում հուշում էր, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը բախվելու էր թուրքական խորհրդարանական անհաղթահարելի դիմադրությանը, քանի որ ընդդիմության առաջնորդները (մասնավորապես, Հանրապետական-ժողովրդական կուսակցության նախագահ Դենիզ Բայքալը), որդեգրելով առավել ընդգծված ադրբեջանամետ դիրքորոշում, իշխող ԱԶԿ-ին «ամբողջ թուրքական աշխարհի» անունից մեղադրելու էին «ադրբեջանցի եղբայրներին» դավաճանելու մեջ³: Թեև թուրքական դիրքորոշման պատճառով Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում առկա չէ էական տեղաշարժ, «հայկական թեմատիկան», բնականաբար, թուրքական «տեսադաշտում» է, իսկ դարաբաղյան հիմնահարցն (թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինքի հրամայականներով և անգամ «համաթուրքական» ռեսուրսի մոբիլիզացիայի նկրտումներով) արծարծվում է թուրքական հասարակական-քաղաքական քննույթում և ՁԼՄ-ում: Ակնհայտ են «Մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը կենսագործող Ադրբեջանին մերձավորագույն դաշնակից համարող Թուրքիայի մշտական, բայց և անիրա-

¹ Մասնավորապես տե՛ս *Давутоглу А.*, "Если вопрос Карабаха будет решен, армяно-турецкие отношения будут урегулированы", 07.07.2010, <http://az.salamnews.org/ru/news/read/11008/axmed-davutoglu-esli-vopros-karabaha-budet-reshen-armyano-tureckie-otnosheniya-budut-uregulirovani>, *Давутоглу А.*, Существовавшие проблемы помешали урегулированию армяно-турецких отношений, 01.25.2011, <http://ru.lin.am/2429.html>

² *Արշակյան Գ.*, Թուրք-հայկական հարաբերությունները Հարավային Կովկասում ստեղծված նոր իրավիճակի պայմաններում, ԵՊՀ Հայագիտության հարցեր հանդես, Երևան, 2(8), 2016, էջ 5-6:

³ Տե՛ս Տասը հարց, տասը պատասխան, Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրություններ (խմբ.՝ Ա.Միմոնյան), Երևան, ԵՊՀ հրատ., 2009, տե՛ս և հմմտ. նաև «Последствия «футбольной дипломатии» могут оказаться неожиданными», 03.09.08, www.echo-az.info, *Çelik M.*, Baykal'dan Gül'e Erivan tepkisi, 05.09.2008, <http://www.milliyet.com.tr/Siyaset/HaberDetay.aspx?aType=HaberDetay&Kategori=siyaset&KategoriID=&ArticleID=987062&Date=05.09.2008&b=Baykal,%20Gulu%20kizdirdi,MHP'den%20Gul'e%20Ma%27ci%20televizyondan%20izle> önerisi, 01.09.2008, <http://www.hurriyet.com.tr/gundem/9795769.asp>, *Kurt S.*, Gül'ün Erivan yolu Bakü'den geçecek, 30.07.2008, http://www.zaman.com.tr/dunya_gulun-erivan-yolu-bakuden-gececek_720081.html, *Ализаде З.*, «Парламент Турции будет оттягивать ратификацию», 13.10.2009, <http://news.day.az/politics/176402.html>, *Пашаева Г.*, «С визитом президента Турции в Армению не может согласиться ни один азербайджанец», 02.09.2008, <http://news.day.az/politics/129320.html>

կան նկրտումները՝ ավելի մեծ դերակատարում ստանձնել ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացում¹: Թուրքական և ադրբեջանական ՁԼՄ-ն մշտադիտարկողների համար ակնհայտ է նաև որ, «Մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը հակահայկական, հակաառուսական կամ հակաիրանական նպատակներով շահարկող ադրբեջանական և թուրքական շրջանակները պրագմատիկորեն գիտակցում են այն սահմանը, որը բաժանում է թուրքական և ադրբեջանական քաղաքական, տնտեսական, կրոնական, մշակութային էլիտաների իրական շահերը²:

Թուրքիայի կողմից միանշանակ ադրբեջանամետությամբ պայմանավորված նախապայմանի առաջքաշումն այսօր էլ անիրատեսական է դարձնում Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացը մեռյալ կետից առաջ տանելը: Ակնհայտ է, որ մեր երկրի հետ հարաբերությունների կարգավորումը թուրքական բոլոր կառավարությունները դիտարկել են նաև թուրք-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում, թուրքական նախապայմաններին ի պատասխան՝ Հայաստանի իշխանությունները մշտապես փորձել են կարգավորել հարաբերություններն առանց նախապայմանների՝ միաժամանակ փաստելով, որ դարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում գլխավոր խնդիրն անկախ և անվտանգ Արցախի Հանրապետության ճանաչումն է՝ ազգերի ինքնորոշման համապարփակ իրավունքի հիման վրա:

Թուրքական հասարակական-քաղաքական կարծիքում առկա է անհանգստություն մեծ տերությունների դավադրությունների արդյունքում Թուրքիայի հնարավոր մասնատման հարցում: Չնայած առարկությանը, թե Հայաստանը չի կարող իրական սպառնալիք լինել Թուրքիայի անվտանգության համար, «Սևրի սինդրոմը» մշտապես շահարկվել է ազգայնական ուժերի, ռազմական վերնախավի, «խորքային պետության», իրար հետևողականորեն ձայնակցող թուրքական և ադրբեջանական լրատվամիջոցների և «վերլուծաբանների» կողմից հասարակությանը «զգոն» պահելու և ուղղորդելու նպատակով³:

¹ Մանրամասն տե՛ս և հմմտ. *Հովհաննիսյան Ա.*, ԽՍՀՄ փլուզումը, «թուրք միասնության» գաղափարը և Ղարաբաղյան հարցը (1990-95-ականների թուրքական հրապարակումների լուսաբանմամբ), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XX, Երևան, 2001, էջ 74-81, *Бабаян Д.*, Арцахская проблема и идеология пантюркизма, “21-ый ВЕК” (информационно-аналитический журнал фонда «Нораванк»), N 4 (20), Ереван, 2011, стр. 67-99.

² Մասնավորապես տե՛ս և հմմտ. *Սաֆարյան Ա.*, Զիա Գյոքալփը և «թուրքականության հիմունքները», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 246-248:

³ *Искандарян А., Минасян С.*, Прагматичность политики сквозь реалии исторических ограничений: анализируя армяно-турецкий процесс, Аналитические доклады Института Кавказа, Но.1, Ереван, 2010, с. 26-28, *Հովսեփյան Լ.*, Թուրքիայի վախերը, Սևրի սինդրոմ, Երևան, 2012, էջ 76:

Փաստ է, որ 2008թ. Թուրքիայի նախագահ Ա.Գյուլի՝ Հայաստան այցից հետո թուրքական լրատվամիջոցները, առանձին փորձագետներ և հասարակական գործիչներ Հայաստանի, հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների համալիրի (այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության) մասին խոսել են ավելի շատ, քան երբևէ նախկինում, ընդ որում, «հայկական թեմատիկայի» մասին սկսել են գրել կամ խոսել նաև չեզոք, բացառիկ դեպքերում՝ նույնիսկ դրական նրբերանգներ պարունակող տոնայնությամբ: Թուրքական վերնախավում հրապարակային բանավեճ է ընթացել Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու կողմնակիցների և հակառակորդների միջև (մասնավորապես, հիշարժան են թուրք ազդեցիկ լրագրող Մեհմեդ Ալի Բիրանդի հրապարակումները)¹: Հակառակորդները, առաջնորդվելով թուրքականության գաղափարախոսության սկզբունքներով և առաջնային համարելով «եղբայրական» Ադրբեջանի հետ հարաբերությունները, չեն տեսել և չեն տեսնում Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու օգտին ծանրակշիռ փաստարկներ, առավել ակտիվ և համագործակցաբար հանդես են գալիս «փոխկապակցված» Հայոց ցեղասպանության և արցախահայության ազատ ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման դեմ թուրքական ու համաթուրքական քաղաքական ռեսուրսի մոբիլիզացիայի օգտին (հիշարժան են ԱԶԿ առաջնորդների հասցեին Հայաստանի նկատմամբ ճնշումներ կիրառելու քաղաքականությունից հրաժարվելու և «եղբայրական» Ադրբեջանին «հայկական ագրեսիայի» դեմ միայնակ թողնելու մեղադրանքները և նույնիսկ «դավաճան» որակումները՝ հնչած «դուլեթբահչելիական» կամ «քրլըչդարօղլուական» ընդդիմության և ադրբեջանական շահերի անթաքույց ջատագովությանը լծված վերլուծաբանների և լրագրողների ստվար զանգվածից): Թուրքիայում թուրք-հայկական երկկողմ հարաբերությունների կարգավորման փոքրամասնություն կազմող կողմնակիցների դատողություններն ավելի «ճկուն» են: Այս շրջանակները համոզված են. քանի որ Հայաստանը, մինևույն է, չի հրաժարվելու Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտման գործընթացից, Երևանի հետ պաշտոնական երկխոսության միջոցով կկարողանան մեղմել այդ գործընթացի հետևանքները Թուրքիայի համար:

¹ Տե՛ս *Birand M.A.*, Armenia has no land demand from Turkey, 02.01.2001, <http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=quotarmenia-has-no-land-demand-from-turkeyquot-2001-02-01>, *Birand M.A.*, Gül, bir tabu yıktı..., 09.09.2008, <http://www.hurriyet.com.tr/yazarlar/9851895.asp>, *Birand M.A.*, Gül, maça gitmekle doğru adım attı..., 05.09.2008, <http://www.hurriyet.com.tr/yazarlar/9824710.asp>

Երկու երկրների խորհրդարաններում Ցյուրիխյան արձանագրությունների վավերացման հարցն ընթացիկ օրակարգերից դուրս է բերվել: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությունը, որ մինչև 2018թ. գարուն հայ-թուրքական արձանագրությունները կարող են չեղարկվել, համահայկական կոնսենսուսի կամ լայն համաձայնության արդյունք է¹:

Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման բարդ գործընթացի նորանոր մարտահրավերները դիմագրավելու, ինչպես նաև համապատասխան «ադապտացիոն» մեխանիզմների մշակման նպատակով կարևորվում է Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության և Սփյուռքի քաղաքական մտքի հավաքական մոտեցումների բյուրեղացումը²: Մասնավորապես, կարծում ենք, կարևորվում է ՀՀ ազգային անվտանգության համադրությամբ Հայոց ցեղասպանության ճանաչմանը և դատապարտմանը նվիրված հատվածի վերաձևակերպում-վերաշարադրումը՝ այն հստակ սահմանումով, որ այդ ճանաչումն ու դատապարտումը անբարենպաստ և սպառնալիքներով լեցուն տարածաշրջանում գտնվող Հայաստանի Հանրապետության գոյության և զարգացման կարևորագույն երաշխիքներից են, իսկ Թուրքիայի և Ադրբեջանի ժխտողականությունը վտանգում է Հայաստանի և Արցախի հայության գոյությունը³: Այսօր ՀՀ քաղաքական շրջանակներում, իհարկե, հստակ գիտակցում են, որ հանուն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման զիջումների գնալը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում կամ միակողմանի զիջումները Լեռնային Ղարաբաղի կարգավորման գործընթացում կհակասեն մեր համազգային շահերին ու կհարվածեն Հայաստան-Արցախ-Սփյուռք միասնությանը: Մյուս կողմից՝ Հայաստանում կարծես տարածայնություն չկա այն հարցում, որ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը կարևոր և էական խնդիր է: Դրա համար էլ պաշտոնական այն ձևակերպումը, ըստ որի՝ Հայաստանը կողմ է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն առանց նախապայմանների, շարունակում է մնալ արդիական:

Հունիս, 2018թ.

¹ Հայաստանը մինչև գարուն առ ոչինչ կհայտարարի հայ-թուրքական արձանագրությունները. Սերժ Սարգսյանը՝ ԵՆԽՎ ամբիոնից, <https://armenpress.am/arm/news/920096/hayastany-minchev-garun-ar-ochinch-khaytarari-hay-turqakan.html>

² Տե՛ս նաև Սաֆարյան Դ., Մելիքյան Գ., Ոսկանյան Վ., Սաֆարյան Ա., Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում, էջ 149-152:

³ Սաֆարյան Ա., Ցեղասպանության ժխտողականության դեմ պայքարի հրեական փորձը և մեր խնդիրները, Հայոց ցեղասպանության ժխտողականությունը նոր օսմանականության գաղափարախոսության համատեքստում (ՀՀ Սփյուռքի նախարարություն), «Արտագետ», Երևան, 2016, էջ 34:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՐ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Դավիթ Սաֆարյան

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացվում են դարաբաղյան հիմնախնդրի ընկալումները թուրքական հասարակական-քաղաքական դիսկուրսում և դրանց կախվածությունն ադրբեջանական դիրքորոշումից, թուրք քաղաքական գործիչների և վերլուծաբանների անդրադարձներն արցախյան թեմատիկային, հեղինակի մասնակցությամբ իրականացված թուրքական ՋԼՄ բազմամյա մշտադիտարկման որոշ արդյունքները: Արդեն «ֆուտբոլային դիվանագիտության» ծավալման վաղ փուլում ակնհայտ էր, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը բախվելու էր թուրքական խորհրդարանական անհաղթահարելի դիմադրությանը, քանի որ ընդդիմության առաջնորդներն իշխող ԱԶԿ-ին ամբողջ «թուրքական աշխարհի» անունից մեղադրելու էին «ադրբեջանցի եղբայրներին» դավաճանելու մեջ: Թուրքիայի կողմից միանշանակ ադրբեջանամետությամբ պայմանավորված նախապայմանի առաջքաշումը տեսանելի հեռանկարում էլ անիրատեսական է դարձնում Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացը մեռյալ կետից առաջ շարժելը:

**ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В КОНТЕКСТЕ
АРМЯНО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЙ**

Давид Сафарян

Резюме

В статье представлены восприятия Нагорно-Карабахской проблемы в турецком общественно-политическом дискурсе и их зависимость от азербайджанской позиции, отклики турецких политических деятелей и аналитиков по арцахской тематике, некоторые результаты многолетнего мониторинга турецких СМИ при участии автора. Уже на ранней стадии развертывания «Футбольной дипломатии» было очевидно, что нормализация армяно-турецких отношений сталкивается с непреодолимым турецким парламентским барьером, так как лидеры оппозиции от имени всего «тюркского мира» обвиняют правящую партию в предательстве «азербайджанских братьев». Выдвинутое Турцией предварительное условие,

обусловленное однозначной проазербайджанской позицией в Нагорно-Карабахском конфликте, в обозримой перспективе делает нереальным продвижение с мертвой точки процесса нормализации отношений с Арменией.

THE PROBLEM OF NAGORNO-KARABAKH IN THE CONTEXT OF ARMENIAN-TURKISH RELATIONS

Davit Safaryan

Resume

The article presents the perceptions of the Nagorno-Karabakh problem in the Turkish socio-political discourse and its dependence on the Azerbaijani position, the response of the Turkish politicians and analysts to the Artsakh related matters, as well as certain results of Turkish media monitoring conducted over the years with the author's participation. Since the early stage of deploying the "Football Diplomacy" it was already obvious that normalization of the Armenian-Turkish relations would face an insurmountable Turkish parliamentary obstacle, as the opposition leaders on behalf of the entire "Turkic world" accused the ruling party of betraying the "Azerbaijani brothers". The precondition set forth by Turkey and based on the unequivocal pro-Azerbaijani position in the Nagorno-Karabakh conflict, in the foreseeable future makes it impossible to move the normalization of relations with Armenia beyond the deadlock.

**ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ.
ՍՏԱՏՈՒՍ ՔՎՈՅԻ ԱՄՐԱՊԵՆՈՒՄ,
ԹԵ՞ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ**

Ռոման Կարապետյան՝

Բանալի բառեր՝ Ղարաբաղյան հիմնախնդիր, անվտանգություն, խաղաղություն, Մինսկի խումբ, ապրիլյան քառօրյա պատերազմ, քարոզչություն:

Ղարաբաղյան հիմնախնդրի գլխավոր բարդություններից մեկն այն է, որ այստեղ ներգրավված արտաքին ակտորները որքան բազմազան, նույնքան էլ տարբերվող են իրենց շահերով և ակնկալիքներով: Հարցի մյուս բարդությունն այն է, որ բանակցող կողմերի՝ հակամարտության կարգավորման վերաբերյալ դիրքորոշումները հաստման կետեր գրեթե չունեն կամ դրանք այնքան աղոտ են, որ գրեթե անտեսանելի են:

Հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ Մինսկի խմբի միջնորդությամբ բանակցային գործընթացը շարունակվում է ավելի քան երկուսուկես տասնամյակ, իսկ հրադադարի ռեժիմի հաստատումից հետո անցել է ավելի քան 24 տարի: Կարող ենք փաստել, որ մինչև օրս բանակցային գործընթացում տեղ են գտել խնդրի կարգավորման վերաբերյալ երկու հիմնական մոտեցումներ՝ փաթեթային և փուլային: Առաջին դեպքում խոսքը միաժամանակյա և ամբողջական կարգավորման մասին է ինչպես Արցախի կարգավիճակի, այնպես էլ հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման մասով: Իսկ փուլային ձևաչափը ենթադրում է փուլ առ փուլ կարգավորում, որոնցում արդեն կարգավիճակի և հայ-ադրբեջանական հակամարտության առաջնայնության հարցը մնում է որպես քննարկման մեկ այլ հարց: Կարող ենք արձանագրել նաև, որ եթե բանակցային գործընթացի առաջին տասը տարիներին կողմերի միջև բանակցությունները հիմնականում ընթանում էին կոնկրետ տարբերակների շուրջ, որքան էլ այդ տարբերակներն անընդունելի լինեին կողմերի կամ նրանցից յուրաքան-

՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս, պ.գ.թ.:

չյուրի համար առանձին, ապա «Պրահայի գործընթացից» սկսած՝ քննարկման հիմնական թեման դարձել է սկզբունքների մշակման հարցը, որոնք պետք է դառնան հետագա խաղաղ կարգավորման անկյունաքարերը:

Ներկայում բանակցային գործընթացը հիմնականում ընթանում է 2007թ. կողմերին առաջադրված և հետագայում բազմափուլ մշակում անցած Մադրիդյան սկզբունքների շրջանակներում¹: Չխորանալով այս հայտնի փաստաթղթի մանրամասների մեջ՝ ուղղակի նշենք, որ դրանց վերաբերյալ կողմերն այնքան շատ դիտարկումներ են ներկայացրել, որ դրանք հեռու են կողմերի շահերն արտահայտելուց կամ հակամարտության լուծման բանալի լինելուց: 2011թ. Կազանում բանակցող կողմերին ներկայացվել է նոր փաստաթուղթ, սակայն այն չի ընդունվել Ադրբեջանի կողմից: Այս մասին փաստում է ինչպես ադրբեջանական կողմը, այնպես էլ ՀՀ արտաքին քաղաքական գերատեսչության այդ ժամանակվա ղեկավարը²: Այդ փաստաթղթի մասին մեր ունեցած տեղեկատվությունը բավական սահմանափակ է և հիմնականում հիմնվում է դրա վերաբերյալ ինֆորմացիոն արտահոսքի վրա³: Այս տարբերակի, ինչպես նաև Մադրիդյան սկզբունքների ուսումնասիրությունից հետո պարզ է դառնում, որ սրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ հիմնախնդրի կարգավորման փուլային տարբերակներ: Թեպետ պաշտոնական Երևանը կողմնակից է և տարիներ շարունակ խոսում է հակամարտության կարգավորման միայն փաթեթային տարբերակի մասին, բանակցային սեղանին եղած և քննարկման որոշակի օրակարգ անցած սկզբունքները մի փոքր այլ իրականության մասին են խոսում:

Կարող ենք փաստել, որ Կազանյան հանդիպումից հետո բանակցային գործընթացը բավական սառել է: Վերջին մի քանի տարիներին ադրբեջանական կողմը կատարել է նաև որոշակի ռազմավարա-տակտիկական փոփոխություններ՝ մեծացնելով դիվերսիոն գործողությունների և սահմանային շփման գծում ռազմական գործողությունների քանակը: Դրա վառ ապացույցը 2014թ. ամռանն իրականացված, իսկ հետո նաև շարունակաբար իրականացվող լայնամասշտաբ դիվերսիաներն են: Մեր կարծիքով, դրանք հիմնականում նպատակ ունեն հակառակորդի վրա հոգեբանական ճնշման գործադրման միջոցով ազդել զիջումների գնալու վերջինիս տրամադրությունների վրա:

¹ Մադրիդյան սկզբունքներ, ամբողջական տեքստ,

<http://www.aniarc.am/2017/11/01/madrid-principals-armenian-text/>

² Նալբանդյան. «Ադրբեջանը պատրաստ չէրավ ընդունել վերջին տարբերակը», <https://www.azatutyun.am/a/24246049.html>

³ Կազանի փաստաթուղթ (աշխատանքային տարբերակ), <http://www.aniarc.am/2016/06/23/kazan-document-23-june/>

2016թ. ապրիլի սկզբին Արցախի Հանրապետության և Ադրբեջանի միջև սահմանային շփման գծի երկայնքով ռազմական գործողություններն իրենց ծավալներով աննախադեպ էին 1994թ. մայիսին հրադադարի մասին եռակողմ համաձայնության ստորագրումից ի վեր: Նախ՝ անհրաժեշտ է նշել, որ վերջին տասը տարիների ընթացքում Ադրբեջանը, հենվելով նավթադուլարների վրա, բազմապատկում է ռազմական ուղղությամբ ծախսվող գումարի չափը, որն ուղղվում է ինչպես ռազմարդյունաբերության զարգացմանը, այնպես էլ բանակի տեխնիկական միջոցների բարելավմանն ու նոր սպառազինությունների ձեռքբերմանը: Մյուս կողմից էլ, պաշտոնական Բաքուն պետական քարոզչամեքենայում և Ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ հռետորաբանությունում ուժեղացրել է սպառնալիքների և ռազմական ճանապարհով խնդիրները լուծելու շեշտադրումները: Տարիներ շարունակ պաշտոնական Բաքուն խոսում էր հայկական կողմի նկատմամբ ունեցած հսկայական ռազմական առավելության մասին, որն արտահայտվում է ինչպես սպառազինություններում, այնպես էլ բանակի թվակազմով ու մարտունակությամբ: Մրան գումարվում է նաև ադրբեջանական հանրությանը տարիներ շարունակ հրամցվող այն թեզը, թե Հայաստանը պատմական Ադրբեջանն է, հայերը ագրեսոր են ու նվաճել են «պատմական ադրբեջանական» տարածքները: Այս պայմաններում շարքային ադրբեջանցու մեջ հարց է ծագում. իսկ ինչո՞ւ մենք չենք վերականգնում պատմական արդարությունը, եթե ունենք այդքան մեծ ռազմավարական առավելություն հակառակորդի նկատմամբ: Արդյո՞ք 2016թ. ապրիլը հասարակության պահանջը բավարարելու և նախկինում կատարած ռազմական ծախսերն արդարացնելու միտում ունենա՞նք՝ դժվար է ասել, սակայն մի բան պարզ է. 2016թ. ապրիլին Իլհամ Ալիևը թուլացրեց իշխանությունների նկատմամբ դժգոհությունների ալիքը և անժամկետ հետաձգեց իշխանության փոփոխության համար պայքարի գործընթացը:

Այսպիսով, 2016թ. ապրիլի 2-ին ադրբեջանական կողմը լայնամասշտաբ հարձակում մեկնարկեց Արցախի Հանրապետության հետ սահմանային շփման գծի ամբողջ երկայնքով, սակայն առավել ինտենսիվ ռազմական գործողությունները ծավալվում էին հյուսիսարևելյան և հարավարևելյան ուղղություններով: Գործի դրվեցին զինապահոցում ունեցած գրեթե ողջ զինատեսակները: Լայնորեն կիրառվեցին իսրայելական արտադրության հարվածային անօդաչու թռչող սարքեր: Վերջինիս կիրառումը նորություն էր և անակնկալի բերեց հայկական կողմին, քանի որ հայկական զինապահոցում չկային դրանց դեմ արդյունավետ պայքարելու զինատեսակներ:

Մակայն, մյուս կողմից էլ, հարց է ծագում, թե ինչու հայկական կողմը պատշաճ պատրաստված չէր այս կողմից, եթե վերջին տարիներին Ադրբեջանը միլիարդների հասնող անօդաչուներ էր գնել¹:

Երկու ուղղություններով էլ հայկական կողմը տարածքային որոշակի կորուստներ ունեցավ: Թեպետ պաշտոնական Երևանը հետագայում այդ կորուստները գնահատեց ոչ ռազմավարական, բայց չպետք է մոռանալ, որ ամեն դեպքում Արցախի Հանրապետությունը տարածքներ կորցրեց: 1994 թվականից ի վեր եղավ ստատուս քվոյի փոփոխություն ի դեմս Ադրբեջանի կողմից տարածքային նվաճման՝ որքան էլ որ թանկ լիներ Ադրբեջանի համար դրա դիմաց վճարված գինը: Ադրբեջանում պետական քարոզչությունը սկսեց ակտիվորեն աշխատել հասարակության մեջ պարտվածի հոգեբանության սինդրոմը կոտրելու ուղղությամբ: Այսպիսով, տարիներ շարունակ ինտենսիվորեն վերագինված և հսկայական քանակությամբ ռազմական տեխնիկա կուտակած Ադրբեջանի կողմից Արցախի և Ադրբեջանի միջև շփման գծում լայնամասշտաբ ռազմական գործողությունների սանձազերծումը կարելի է սպասված համարել, քանի որ բանակցություններում առաջընթացի բացակայության պայմաններում ռազմական ճանապարհին Ադրբեջանի համար մնում է ստատուս քվոյի փոփոխության միակ տարբերակը:

Այդ օրերին պաշտոնական Բաքուն ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի հարթակում շրջանառության մեջ դրեց 1994թ. հրադադարի մասին համաձայնագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ գաղափարը՝ դրանով իսկ ևս մեկ անգամ ցույց տալով Ադրբեջանի ապակառուցողական դիրքորոշումը հիմնախնդիրը խաղաղ կարգավորելու բանակցային գործընթացում²: Պաշտոնական Երևանն էլ սկսեց խոսել ավելի կոշտ և պահանջատերի լեզվով. ՀՀ նախագահն առաջադրեց երեք հիմնական նախապայման, որոնց կատարման դեպքում միայն կհամաձայնեի նստել բանակցությունների սեղանի շուրջ: Դրանք էին՝ պատերազմ չվերսկսելու երաշխիքներ, շփման գոտում հրադադարի կատարման մեխանիզմների ստեղծում, այդ թվում՝ միջադեպերի հետաքննության մեխանիզմների ներդրում, Ադրբեջանը՝ որպես ապրիլյան ռազմական էսկալացիայի համար ագրեսոր ճանաչում³:

Մայիսի 16-ին Վիեննայում Մինսկի խմբի համանախագահող երկրներ-

¹ Իսրայելական «Օրֆիտեր» անօդաչու թռչող սարքը՝ ադրբեջանական քարոզչության միջոց, <https://razm.info/27419>

² ՀՀ ԱԳՆ. ապրիլի 5-ի պայմանավորվածությունը չի կարող փոխարինել զինադադարի համաձայնագրին, <http://mamul.am/am/video/26598528/>

³ Նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը ինքնաթիռում, <https://www.youtube.com/watch?v=WcyRRYSJSw8>

րի արտգործնախարարների նախաձեռնությամբ կայացավ Սարգսյան-Ալիև հանդիպումը, որից առաջ կողմերը նախնական համաձայնություն էին ձեռք բերել Սերժ Սարգսյանի առաջադրած առաջին երկու սկզբունքների շուրջ: Իսկ Վիեննայում պայմանավորվածություն ձեռք բերվեց միայն սահմանային միջադեպերի հետաքննության և մոնիթորինգի մեխանիզմների ստեղծման մասով¹: Սակայն, որպես այդպիսիք, չդրվեցին հստակ կատարման ժամկետներ, ինչը թույլ տվեց եզրակացնելու, որ սրանց կատարման դեպքում ևս հետագայում Ադրբեյջանը կարող է մանևրել:

Հաջորդ խնդիրը Արցախի Հանրապետության՝ բանակցությունների սեղան վերադառնալու հարցի քննարկումն է: Վիեննայից հետո ռուսաստանցի համանախագահող Իգոր Պոպովը հայտարարեց, որ բանակցությունների ինչ-որ փուլում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները պետք է վերադառնան բանակցային սեղանի շուրջ. չէ՞ որ խոսքն այն մարդկանց մասին է, ովքեր ապրելու են այդ տարածքում²: Սակայն պաշտոնական Երևանին այդպես էլ չհաջողվեց օգտվել ստեղծված իրավիճակից՝ փոխելու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, թեպետ դեռ հարց է, թե արդյոք պաշտոնական Երևանն այդ ժամանակ իր առջև նման խնդիր դրեց: Պաշտոնական Երևանն ապրիլ-մայիս ամիսներին ակտիվ շրջանառության մեջ էր դրել Արցախի Հանրապետության ճանաչման, ինչպես նաև վերջինիս հետ ռազմական փոխօգնության պայմանագրի ստորագրման գաղափարները, սակայն վերջինս զգուշավորություն դրսևորեց այս հարցում ևս՝ խուսափելով նոր հնարավոր ռազմական էսկալացիայից: Գաղտնիք չէ, որ Արցախի կարգավիճակի միակողմանի դե յուրե ճանաչումը բանակցող երկրներից մեկի կողմից կոնտարկվի որպես բանակցային գործընթացի ավարտ և ռազմական նոր փուլի մեկնակետ:

Հունիսի 20-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի միջնորդությամբ կայացավ Սարգսյան-Ալիև հերթական հանդիպումը: Սպասելիքներն այս հանդիպումից մեծ էին, սակայն, ինչպես հետո պարզվեց, այս հանդիպումը համարվելու էր հերթական արարողակարգային հանդիպումների շարքը³: Պետերբուրգյան հանդիպումից ընդամենը 5 օր անց Ադրբեյջանի ղեկավարը

¹ Մինսկի խմբի համանախագահող երկրները Վիեննայի հանդիպման արդյունքներով հայտարարություն են տարածել, <https://armenpress.am/arm/news/847444/minski-khmbi-hamanakhagahox-erkrnery-viennayi-handipman.html>

² «Որոշակի փուլում Ղարաբաղը պետք է վերադառնա գործընթաց». Իգոր Պոպով, <http://www.lin.am/238655.html>

³ Սակալ Պետերբուրգում կայացել է եռակողմ հանդիպում Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեյջանի նախագահների միջև, <http://www.president.am/hy/press-release/item/2010/06/17/news-1059/>

հայտարարեց, որ սահմանային միջադեպերը հետաքննելու մեխանիզմ ստեղծելու կարիք չկա՝ դրանով իսկ գրոյացնելով նախորդ ամիսներին ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները: Մյուս կողմից էլ, ո՛չ ԵԱՀԿ Մինսկի խմբի, ո՛չ անվտանգության հարցերով պատասխանատու միջազգային կառույցների կողմից պատշաճ և հասցեական գնահատականներ չտրվեցին ապրիլյան ռազմական էսկալացիայի մեղավորների մասին: 2016թ. դեկտեմբերի 9-ին ԵԱՀԿ նախարարական գագաթաժողովի շրջանակներում Մինսկի խմբի համանախագահող երեք երկրների արտաքին գերատեսչությունների ղեկավարներն ընդունեցին համատեղ հայտարարություն¹, որով դատապարտում էին ապրիլյան ռազմական գործողությունները, դրանց ընթացքում ծանր զինտեխնիկայի կիրառումը՝ կոչ անելով հարգել Վիեննայում և Պետերբուրգում ձեռք բերված համաձայնությունները: Փաստորեն, բանակցային տարին ամփոփող այս հայտարարությունը ևս ուներ անհասցե բնույթ և արվում էր ընդհանուր մեսիջների ու կոչերի տեսքով:

Հակամարտության կարգավորման շուրջ 2017թ. բանակցային գործընթացը հենված էր այն նոր իրողությունների վրա, որոնք առաջ էին եկել ապրիլյան ռազմական գործողություններից հետո, ինչպես նաև այն հիմնական հարցերի վրա, որոնք առաջադրվել էին Վիեննայի և Պետերբուրգի հանդիպումների ժամանակ: Տարվա ընթացքում նախարարական մակարդակով և Մինսկի խմբի համանախագահների հետ հանդիպումները բազմաթիվ էին, սակայն դրանք բոլորն էլ համալրում են հերթական արարողակարգային հանդիպումների շարքը: Թերևս, մի պարզ պատճառով արարողակարգային կարելի է բնութագրել նաև երկու երկրների նախագահների միջև կայացած հանդիպումը. կարճատև դադարից հետո Ադրբեյջանը կրկին վերադառնում է դիվերսիոն գործողությունների տակտիկային: Բանակցող երկրների ղեկավարների միակ հանդիպումը կայացել է հոկտեմբերի 16-ին Ժնևում: Կայացած առանձնազրույցից հետո նախագահները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ²: Դրանում նշվում է, որ կողմերը պայմանավորվել են ակտիվացնել բանակցային գործընթացը և լրացուցիչ քայլեր ձեռնարկել սահմանային շփման գծում լարվածությունը թուլացնելու ուղղությամբ:

Կարծում ենք, որ 2017թ. ընթացքում բանակցային գործընթացում արձանագրված պասիվությունն ու սահմանային շփման գծում նախորդ իրողությունների ֆոնին հարաբերական խաղաղության պահպանումն առա-

¹ Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, - <http://www.osce.org/mg/287531>

² Joint Statement by the Foreign Ministers of Armenia and Azerbaijan and the Co-Chairs of the OSCE Minsk Group, - <http://www.osce.org/minsk-group/350091>

ջին հերթին պայմանավորված էին երկու երկրներում 2018թ. անցկացվելիք ղեկավարների ընտրության գործընթացին նախորդող աշխատանքներով:

Վերջին երկու տարիներին բանակցող կողմերն ավելի ու ավելի շատ են խոսում սեփական դիրքերի ամրապնդման մասին՝ դրանով իսկ փաստելով բանակցություններում զիջումների գնալու պատրաստակամության թուլացման կամ, ընդհանրապես, անկման մասին: Պաշտոնական Երևանը, ի դեմս հանրապետության երրորդ նախագահի, մեկ անգամ չի արձանագրել, որ Արցախի Հանրապետության կարգավիճակը կարող է սահմանվել միայն Ադրբեջանի կազմից դուրս և այն պետք է լինի ոչ ավելի ցածր, քան ներկայում է: 2017թ. աշնանը ՄԱԿ 72-րդ նստաշրջանում Գլխավոր ասամբլեայի հարթակից ելույթի ընթացքում անդրադառնալով Ղարաբաղյան հիմնախնդրին՝ Սերժ Սարգսյանը նշել է, որ հակամարտության կարգավորման ցանկացած ելքի դեպքում Լեռնային Ղարաբաղը չի կարող ավելի ցածր կարգավիճակ և ազատություն ունենալ, քան ունի այսօր, իսկ Արցախի ինքնորոշումը և անկախությունն արդեն իսկ կայացած փաստ են, և դրանից նահանջել չի լինի¹:

Ադրբեջանի ղեկավարն էլ ոչ միայն չի բավարարվում Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իր պահանջներով, այլև սկսել է մեծացնել հայկական կողմից իր պահանջների աշխարհագրությունը: Սույն թվականի փետրվարի 9-ին, ելույթ ունենալով «Նոր Ադրբեջան» կուսակցության համաժողովում, Իլհամ Ալիևն ասել է, որ պետք է վերադարձնել ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլ նաև Երևանը: Նա իր ելույթում ասել է, որ Երևանը պատմական ադրբեջանական տարածք է, որն Ադրբեջանի առաջին հանրապետության ստեղծումից հետո տրվել է հայերին²: Վերջինս ավելացրել է նաև, որ Ադրբեջանի ռազմավարական ու քաղաքական նպատակը պետք է դառնա քիչ-քիչ մոտենալ Ադրբեջանի «պատմական» տարածքները վերադարձնելուն, որոնց մեջ է մտնում ներկայիս Հայաստանի Հանրապետության մի մասը:

Փաստորեն, պաշտոնական Բաքուն ավելի շուտ բացեց խաղաթղթերը և սկսեց խոսել տարածքային նկրտումների մասին: Կարծում ենք, որ սրանով Ալիևը ևս մեկ անգամ ապացուցեց այն թեզի իրավացիությունը, համաձայն որի՝ Ղարաբաղյան հիմնախնդիրը հանդիսանում է հայ-ադրբեջանական հակամարտության մի մասը միայն, և հարևան ագրեսորն ավելի

¹Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանում, <http://m.president.am/hy/statements-and-messages/item/2017/09/20/President-Serzh-Sargsyan-speech-UN-General-Assembly/>

²Ալիևը սպառնում է՝ «Երևանն ու Ջանգեզուրը մեր պատմական հողերն են», <http://www.panarmenian.net/arm/news/251834/>

մեծ նվաճողական ձգտումներ ունի: Մյուս կողմից էլ, այս ամենը կարող է վկայել ընդամենը այն մասին, որ Ադրբեջանի ղեկավարը կտրվել է իրականությունից և անում է ամեն հնարք հասարակությանը շեղելու համար: Սակայն ինչ նպատակներով էլ որ Ադրբեջանի ղեկավարն այդ հայտարարությունն արած լինի, այն պետք է զգաստացնող ազդակի դեր ունենա մեր ինչպես դիվանագիտական, այնպես էլ ռազմական գործիչների համար:

Նշենք, որ դրանից ընդամենը օրեր առաջ Ադրբեջանի նախագահը ստորագրել էր հրամանագիր երկրում նախագահական ընտրություններն ընթացիկ տարվա հոկտեմբերից ապրիլ տեղափոխելու վերաբերյալ¹: Արդյո՞ք Ադրբեջանը նոր խրամատներ է փորում բանակցային ճակատում, թե՞ արտաքին լսարանին է զվարճացնում՝ ավելի պարզ կդառնա բանակցությունների հետագա փուլում: Ինչ էլ որ ընկած լինի Ալիևի հայտարարության հիմքում՝ կարծում ենք, անհրաժեշտ է դրան ավելի լուրջ վերաբերվել: չէ՞ որ արդեն առնվազն մեկ անգամ պաշտոնական Բաքուն ցույց է տվել հակամարտության կարգավորման իր նախընտրած սցենարը: Ուստի, պետք է պատրաստ լինել ամենաձայրահեղ զարգացումների, քանի որ հարևան երկրի ղեկավարությունը սեփական իշխանությունը պահելու համար ընդունակ է սանձազերծելու նոր պատերազմ:

Պաշտոնական Երևանի պատասխանը չուշացավ. նախագահ Սարգսյանը Մինսկի խմբի համանախագահների հետ հանդիպման ժամանակ նշեց, որ Ադրբեջանը հեռու է Ղարաբաղյան հիմնախնդիրը խաղաղ կարգավորելուց²: 2018թ. փետրվարի 17-ին Մյունխենի անվտանգության համաժողովում նախագահ Սարգսյանն իր ելույթում նշել է. «Նախագահ Ալիևը ոչ ավելի, ոչ պակաս տարածքային նկրտումներ է հայտարարում Հայաստանի մայրաքաղաք Երևանի հանդեպ՝ անվանելով այն պատմական ադրբեջանական տարածք: Չառանցանք է, իհարկե, բայց Եվրոպայի լրության պայմաններում այդպիսի անհեթեթությունները կարող են ունենալ շատ լուրջ հետևանքներ»³:

2018թ. մայիսի ընթացքում հետաքրքիր զարգացումներ ընթացան Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ ներհայաստանյան դիսկուրսում: Դա պայմանավորված էր Հայաստանի Հանրապետությունում ներքաղաքական զարգացումների հետ, որոնց արդյունքում կատարվեց իշխանափոխու-

¹ Ադրբեջանում՝ արտահերթ նախագահական ընտրություններ, <https://www.azatutyun.am/a/29019637.html>

² Ադրբեջանը հեռու է բանակցային ճանապարհով ԼՂ հիմնախնդրի կարգավորումից. Մերձ Մարգյան, <http://armtimes.com/hy/article/131002>

³ Նախագահը մասնակցել է Մյունխենի անվտանգության համաժողովին, <http://www.president.am/hy/press-release/item/2018/02/17/President-Serzh-Sargsyan-attended-Munich-security-conference/>

թյուն, և երկրի փաստացի ղեկավարումը ստանձնեց Նիկոլ Փաշինյանը: Չանդրադառնալով Հայաստանում կատարվող ներքաղաքական իրողությունների մանրամասներին՝ փորձենք ներկայացնել երկրի նոր իշխանությունների դիրքորոշումը Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ: Նախ՝ ավելորդ չենք համարում նշել, որ ի սկզբանե հայաստանյան քաղաքագիտական հանրություն կար մտավախություն, որ Նիկոլ Փաշինյանն ունի որոշակի տարբերվող դիրքորոշում Ղարաբաղյան հարցում, իսկ որպես հիմնավորում նշվում էին վերջինիս կողմից նախկինում արված որոշակի հայտարարություններ կամ առանձին մտքեր:

Սակայն այս հարցում ամեն ինչ իր տեղն ընկավ, երբ վարչապետը Շուշիի ազատագրման տարելիցի կապակցությամբ կազմակերպված տոնակատարությունների շրջանակներում այց կատարեց Արցախի Հանրապետություն: Նախագահ Բակո Սահակյանի հետ հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինյանն ընդգծեց այն փաստը, որ պատահական չէ իր առաջին պաշտոնական այցը հենց Արցախի Հանրապետություն¹: Փաստորեն, Հայաստանի վարչապետը հստակ մեսիջ է հղում միջազգային հանրությանն առ այն, որ Ղարաբաղյան հիմնահարցում պաշտոնական Երևանի արտաքին քաղաքական օրակարգը չի փոխվել. այն առնվազն չի թուլացրել իր նշանակությունը:

Ղարաբաղյան հարցում ՀՀ նոր վարչապետի ամբողջական դիրքորոշումն արդեն արտահայտվեց մայիսի 9-ին Ստեփանակերտում Արցախի, Հայաստանի ու միջազգային լրատվամիջոցներին տրված մամուլի ասուլիսի ժամանակ: Այստեղ հնչած այն հարցին, թե ինչպես է տեսնում վարչապետն Ադրբեջանի հետ փոխզիջումների ճանապարհով բանակցությունների ճանապարհը, վերջինս պատասխանեց. «Քանի դեռ Ադրբեջանը խոսում է ռազմական հռետորաբանությունով, փոխզիջումների մասին խոսել անիմաստ է: Մենք պատրաստ ենք քննարկել փոխզիջումների հարցը, երբ Ադրբեջանը ճանաչի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը»²: Կարող ենք փաստել, որ այս հայտարարությունով ՀՀ վարչապետը ոչ միայն ամբողջությամբ չեզոքացրեց մինչ այդ իր անձի մասին եղած զիջողական տրամադրությունների վերաբերյալ մեղադրանքները, այլև ավելի կոշտ դիրքորոշում արտահայտեց Ղարաբաղյան հիմնա-

¹ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Արցախի Հանրապետություն, <http://www.primeminister.am/hy/Artsakh-visits/item/2018/05/09/Prime-Minister-Nikol-Pashinyan-visited-Artsakh/>

² Նիկոլ Փաշինյանի մամուլի ասուլիսը Ստեփանակերտում, 09.05.2018թ., <https://www.youtube.com/watch?v=m-byrK9oZFo>

խնդրում, քան ՀՀ նախկին ղեկավարները: Վերջինս պաշտոնական Բաքվի՝ Ղարաբաղյան հարցում ՀՀ նոր ղեկավարությունից զիջումների ակնկալիքներին ի հակակշիռ, սկսում է խոսել հենց այն լեզվով, որով տարիներ շարունակ խոսում է Բաքուն, այն է՝ նախապայմանների լեզվով:

Կարևոր ենք համարում նաև ՀՀ վարչապետի շեշտադրումներն Արցախի Հանրապետության՝ բանակցությունների սեղան վերադառնալու անհրաժեշտության մասին: Վերջինս ստեղծված իրավիճակը, երբ Արցախի Հանրապետությունը դուրս է բանակցային գործընթացից, անհեթեթ համարեց, քանի որ, ըստ Փաշինյանի, Արցախի շահերը կարող է ներկայացնել միայն Արցախի Հանրապետությունը¹:

Փաստորեն, Նիկոլ Փաշինյանը, չսպասելով Ադրբեջանի ղեկավարի հետ հանդիպմանը, արդեն իսկ առաջ է քաշում հարցադրումներ, որոնք, թվում է, պետք է դառնան բանակցային սեղանին դրվելիք առանցքային հարցերը: Սակայն դժվար է պատկերացնել, որ պաշտոնական Բաքուն կընդունի այս խայծը: Մյուս կողմից էլ, արդյո՞ք ՀՀ վարչապետը հետագայում ևս կշարունակի պնդել այս հարցադրումների՝ որպես բանակցային գործընթացի շարունակության հիմք-նախապայմանների վրա: Չնայած Փաշինյանի առաջ քաշած հարցադրումներն անհրաժեշտ են և կարևոր, դրանք դրականորեն չեն տրամադրում Նիկոլ Փաշինյան-Իլհամ Ալիև հետագա երկխոսության կայացման հանդեպ: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով դարաբաղյան հարցում պաշտոնական Երևանի՝ մինչև այժմ վարվող քաղաքականությունում «կոշտ հարցադրումներ-հետքայլ» ձևաչափի բազմակի փորձը, չենք բացառում սցենարի կրկնություն նաև այս դեպքում:

Իսկ վերջում արդեն ՀՀ վարչապետը խոսեց Արցախի Հանրապետության միջազգային ճանաչելիության բարձրացման և ճանաչման ուղղությամբ կատարելիք քայլերի անհրաժեշտության մասին: Ելնելով այս, ինչպես նաև արդեն իսկ վերը նշված պնդումներից, կարծում ենք, որ վարչապետի մեսիջները տանում են դեպի Արցախի Հանրապետության՝ որպես միջազգային հարաբերությունների սուբյեկտի, ճանաչման հարցում ՀՀ դիրքորոշման ամրապնդմանը:

Փաստորեն, ականատես ենք լինում մի գործընթացի, երբ մի կողմից՝ Ադրբեջանը մեծացնում է լայնամասշտաբ ագրեսիա կիրառելու սպառնալիքները, մյուս կողմից էլ, պաշտոնական Երևանը խոսում է Արցախի Հանրապետության՝ կայացած պետություն լինելու մասին, ինչը նշանակում է, որ, փաստացիորեն, Երևանի համար հարցը գոնե Արցախի կարգավիճա-

¹Նույն տեղում:

կի մասով արդեն լուծված է: Կարծում ենք, որ բանակցային գործընթացում առաջընթացի բացակայության պայմաններում Արցախի Հանրապետության զարգացումը, պետականության ամրապնդումն ու միջազգային ճանաչումը շարունակում են մնալ հիմնախնդրի կարգավորման միակ ողջամիտ տարբերակը:

Եվ վերջապես, փորձելով պատասխանել մեր առջև ի սկզբանե դրված հարցին՝ կարող ենք անել հետևյալ եզրակացությունը. ներկայում ադրբեջանական կողմը, չունենալով ստատուս քվոն փոխելու այլընտրանք, պատրաստվում է ռազմական գործողությունների, որոնք, մեր կարծիքով, կարող են ավելի երկարատև ու լայնամասշտաբ լինել, քան 2016թ. ապրիլին էին: Հայկական կողմն էլ հիմնական շեշտադրումները կատարում է Արցախի Հանրապետության կայացման ու միջազգային ճանաչման ուղղությամբ քաղաքականության վրա՝ չմոռանալով պատրաստվել նաև հակառակորդի կողմից հավանական ռազմական ագրեսիային:

Մայիս, 2018թ.

**ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐ. ՍՏՍՏՈՒՍ ՔՎՈՅԻ ԱՍՐԱՊՆԴՈՒՄ,
ԹԵ՞ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ**

Ռոման Կարապետյան

Ամփոփագիր

Մույն հետազոտությունը ներկայացնում է Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման ներկա փուլի առանձնահատկությունները, մասնավորապես՝ բանակցող կողմերի դիրքորոշումները հակամարտության առարկա հանդիսացող հարցերի վերաբերյալ: Հիմնախնդրի մյուս առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ հակամարտության կարգավորման գործընթացում կան ներգրավված արտաքին ակտորներ, որոնք ունեն սեփական շահերն այստեղ:

Մեր քննարկման հաջորդ հիմնական հարցն է վերլուծել հակամարտության կարգավորման հեռանկարները՝ հենվելով ինչպես վերը նշված գործոնների ու բանակցային գործընթացի դինամիկայի ուսումնասիրությունների, այնպես էլ բանակցողների տակտիկական մոտեցումների որոշ փոփոխությունների վրա: Ներկայացրել ենք նաև ՀՀ նոր ղեկավարի՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի դիրքորոշումը Ղարաբաղյան հիմնախնդրում և որոշակի համեմատական եզրեր անցկացրել նախկինում պաշտոնական Երևանի ունեցած դիրքորոշման հետ:

КАРАБАХСКИЙ КОНФЛИКТ: УКРЕПЛЕНИЕ СТАТУС-КВО ИЛИ ПОДГОТОВКА К ВОЙНЕ?

Роман Карапетыан

Резюме

В статье представлены особенности нынешнего этапа процесса урегулирования Нагорно-Карабахского конфликта, в частности, позиции сторон переговоров по вопросам, которые являются предметом конфликта. Другая сторона проблемы – внутренние политические, экономические и внешние факторы, которые непосредственно влияют на процесс урегулирования конфликта.

Другим важным вопросом нашего исследования является анализ перспектив урегулирования конфликта, основанный как на вышеупомянутых факторах, так и на динамике переговорного процесса, но также на основе нескольких изменений в тактических подходах сторон. В заключение мы также представили позицию нового главы РА, премьер-министра Никола Пашиняна по карабахскому вопросу и провели определенные сравнения с позицией официального Еревана до смены власти.

NAGORNO-KARABAKH CONFLICT IN: ARE THE SIDES STRENGTHENING THE STATUS QUO OR GETTING READY TO WAR?

Roman Karapetyan

Resume

The article presents the peculiarities of the current stage of the Nagorno-Karabakh conflict settlement process, in particular the positions of the negotiating parties on the issues that are the subject of the conflict. The other side of the issue is that there are external actors involved in the conflict settlement process that have their own interests.

Another major issue of this study is the analysis of the conflict settlement prospects based on both the above mentioned factors and the dynamics of the negotiation process, as well as on several changes in tactical approaches of the parties. The study also presents the position of the new leader of the Republic of Armenia, Prime Minister Nikol Pashinyan on the Karabakh issue and compares it with the position of the official Yerevan before the change of power.

ԻՍԼԱՄԻ ԴԵՐՆ «ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Գայանե Չորանյան՝

Բանալի բառեր՝ «ադրբեջանական» ազգային ինքնություն, ադրբեջանցի, թաթար, էթնոնիմ, պանիսլամականություն, պանթուրանականություն, իսլամ, մուսուլման, կրոնական պատկանելություն:

Ներկայիս «ադրբեջանական» ազգային ինքնությունը խարսխված է թյուրքականության գաղափարախոսության և այսպես կոչված «մշակութային» կամ «ազգային» իսլամի միաձուլման վրա: Անկախ կրոնական սկզբունքների և արարողակարգերի իմացությունից և պահպանումից՝ ադրբեջանցիների ճնշող մեծամասնությունն իրեն համարում է մուսուլման՝ մեծ մասամբ նույնացնելով այդ հասկացությունը ոչ թե կրոնական պատկանելության, այլ էթնոմշակութային ինքնության հետ: Մակայն միշտ չէ, որ իսլամն Ադրբեջանում ստորադասվել է ազգային գաղափարներին՝ հանդիսանալով զուտ հասարակության կենսակերպը պայմանավորող գործոն կամ քաղաքական գործիք: Ոչ վաղ անցյալում իսլամականությունը եղել է այն միակ գաղափարախոսությունը, որի շուրջ համախմբվել և ինքնաստացվել է ներկայում «ադրբեջանցի» կոչվող համախառն հանրույթը, իսկ անցումն «ադրբեջանականության» ազգային գաղափարներին եղել է քաղաքական զարգացումների արդյունք՝ արտաքին ուժերի միջամտությամբ¹:

Միայն XX դարի սկզբին առաջ քաշվեց «ադրբեջանական» թյուրքերի՝ որպես առանձին էթնոսի գոյության գաղափարը՝ հանդիսանալով պան-

¹ Թուրքագետ:

¹ Սկզբնական փուլում «ադրբեջանական» պետության ստեղծման ակունքներում եղել է Օսմանյան կայսրությունը՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի օժանդակությամբ՝ որպես հակառուսական քաղաքականության դրսևորում, այնուհետև «ադրբեջանական» ազգի ձևավորման և պետականաշինության գործընթացը ստանձնել է Խորհրդային Միությունը՝ թուրքական, իրանական քաղաքական սպառնալիքներին հակադրելու և տարածքային ընդարձակումներ իրականացնելու նպատակով:

թյուրքական շովինիստական գաղափարախոսության անքակտելի մաս: Այդ գաղափարախոսության արդյունքում հնագույն Կովկասյան Աղվանքի տարածքի վրա 1918թ. առաջին անգամ պատմական թատերաբեմ դուրս եկավ Իրանի հյուսիսարևմտյան Ադրբեջան (Ատրպատական) շրջանի անվանումը կրող մի պետություն՝ հավակնություններ ներկայացնելով հարևան ժողովուրդների պատմական, մշակութային, հոգևոր ժառանգության և տարածքների նկատմամբ¹: Ինչպես նշում է ռուս գեներալ Անտոն Դենիկինը. «Կովկասյան Ադրբեջան պետությունը ստեղծումը թուրքական քաղաքականության արդյունք էր, որի նպատակն էր Կովկասում պանթյուրքականության և պանիսլամականության ֆորպոստի ստեղծումը»²:

Սակայն «ադրբեջանցի» հասկացությունը՝ որպես էթնոագգային հանրույթ, ձևավորվել և ընկալվել է ավելի ուշ՝ XX դարի երկրորդ կեսին: Պանիսլամականության դասական մոդելին հակադրվող պանթյուրքականության գաղափարախոսությունը, որն ուներ քաղաքական, ոչ թե էթնոպատմական հենք, հուժկու ազդակ հաղորդեց «ադրբեջանական» էթնիկ ինքնագիտակցության ձևավորմանը:

Ադրբեջանցիների ազգային ինքնության կերտման գործընթացը կարելի է պայմանականորեն բաժանել երեք փուլի: Առաջին փուլում (XIX դարի երկրորդ կեսից մինչև 1930-ական թթ.)՝ որպես ցարական Ռուսաստանի թյուրք-թաթար ժողովուրդների էթնիկ համախմբման գործընթացի մի մաս, Հարավային Կովկասի թյուրքախոս մուսուլմանների մեջ սկսում է ձևավորվել թյուրքական էթնոլեզվական ինքնագիտակցություն, սակայն դեռևս համիսլամական ինքնության համատեքստում, երկրորդ փուլում (1930-ական թթ. կեսից մինչև 1991թ.՝ Ադրբեջանի Հանրապետության հռչակումը) այն ամբողջովին առանձնացվում է թյուրքական ինքնությունից և վերաձևվում տարածաշրջանի բնիկ ժողովուրդների պատմամշակութային ժառանգությունը կրող «ադրբեջանական» ուրույն ինքնության, իսկ երրորդ փուլում (1991-ից մինչև այսօր) հանդես է գալիս «ադրբեջանական», թյուր-

¹ Կովկասյան Աղվանքի տարածքում հաստատված նորաստեղծ պետությունն Իրանի հյուսիսային շրջանի անունով կոչելն ուներ ծավալապաշտական նպատակներ. իրեն վերագրել իրանական պատմական Ադրբեջանի հազարամյա պատմությունը, լեզուն, մշակույթը, շրջանառել Իրանի և Ռուսաստանի միջև պառակտված ադրբեջանական պետության միջը (Հյուսիսային Ադրբեջան և Հարավային Ադրբեջան), ինչը հետագայում հնարավորություն կտար համաթյուրքական պետության սահմաններում Իրանի պատմական տարածքների ներառմանը: Ադրբեջանական պատմամշակութային կեղծարարության և գիտականորեն հիմնավորված հակափաստարկների մասին մանրամասն տե՛ս *Ռեզա Յ. օ., Աзербայդջան և Արան (Ադրպատական և Կավկասյան Ալբանիա)*, Մոսկվա, 2012, *Գալչյան Ք.*, *Ազերբայդջանի իստորիկո-գեոգրաֆիկական ֆալսիֆիկացիան*, Մոսկվա, 2013:

² Տե՛ս *Ասատրյան Գ.Ս.*, *Этюды по иранской этнологии*, Ереван, 1998, с. 26:

քական, իրանական, աղվանական, մարական, ինչպես նաև իսլամական ինքնությունների անհամադրելի խառնուրդի տեսքով:

«Ադրբեջանական» ինքնության զարգացման երեք ժամանակաշրջանում իսլամական գաղափարները՝ քաղաքական զարգացումներին զուգահեռ, կրել են ձևափոխումներ, անցել են ընդհատակ՝ որպես ազգային, մշակութային ինքնության մի շերտ, այնուհետև վերարժևորվել և քաղաքականացվել են՝ դառնալով հասարակության համախմբման ներքին և արտաքին քաղաքական լուրջ գործիք:

Մինչև 1930-ական թթ. վերջը Հարավային Կովկասի թյուրքախոս մուսուլման բնակչությունը, որն այժմ կոչվում է ադրբեջանցի, չունեւ ընդհանուր էթնոնիմ: Այն իրեն ասոցացնում էր բացառապես իսլամական ումմայի հետ, և պատասխանը «ո՞վ ես դու» հարցին մեծամասնության պարագայում եղել է՝ «ես մուսուլման եմ»: 1891թ. լրագրող և ակնառու հասարակական գործիչ Մ.Շահտախտինսկին այսպես է նկարագրում իրադրությունը. «Մինչև վերջերս անդրկովկասյան մահմեդական բնակչությանը ռուսերենով ասում էին մուսուլման՝ այդ հասկացության տակ նկատի ունենալով ոչ թե ընդհանուր իսլամի հետևորդներին, այլ ռուսական Անդրկովկասի թյուրքալեզու բնակչությանը: Կրոնի անունով ազգության նման անվանումը ռուսները փոխառել են հենց Անդրկովկասի մահմեդականներից, որոնք մինչ այժմ էլ անվանում են իրենց ազգությունը և լեզուն միայն մուսուլմանական՝ կորցնելով լեզվի հասկացությունը կրոնի հասկացության մեջ»¹: Կրոնական պատկանելության հետ լեզվի նույնացման հատկանշական օրինակներից է Ուզեիր Հաջիբեկովի «Լեյլա և Մեջնուն» օպերայի պրեմիերայի 1908թ. հունվարի 12-ի պաստառը, որի վրա գրված էր. «Օպերա մուսուլմանական լեզվով»²: Այսօր ադրբեջանցիներն այն համարում են ադրբեջանական առաջին ազգային օպերան:

Հարավային Կովկասի մուսուլմանների կիսաքոչվոր բնակչության շրջանում յուրայինի և օտարի կերպարները տարանջատելու համար երբեմն առաջնային պլան էր մղվում նաև ազգատոհմային պատկանելության գիտակցությունը, իսկ նաստալյաց հատվածի համար՝ տարածքայինը³: Մինչև «ադրբեջանցի» էթնոնիմի ի հայտ գալը, այլ ազգեր ներկայում ադրբեջան-

¹ Шахтахтинский Мухаммед Ага, Как называть закавказских мусульман? «Каспий» (Баку), 1891, N 93, 1 мая, մեջբերված է՝ Варданян Т., Азербайджанцы. История одного незавершенного этнопроекта, Москва, 2012, с. 22.

² Асатрян Г., Этническая композиция Ирана. От «Арийского простора» до азербайджанского мифа, Кавказский центр иранистики, Ереван, 2012, с. 72.

³ Մանրամասն տե՛ս Վարդանյան Т., Азербайджанцы: история одного незавершенного этнопроекта, Москва, 2012, с. 17-23:

ցի համարվող հանրային ընդհանրական անվանել են մուսուլման, կովկասյան մուսուլման, շիայադավաններին նաև կոչել են քզլբաշ, պերս, դաջար, իսկ հաճախ, ընդհանրական «մուսուլման» հասկացությունից տարանջատելու համար, առաջնային համարելով լեզվական ընդհանրությունը, անվանել են թաթար, անդրկովկասյան թաթար, թյուրք, անդրկովկասյան թյուրք և այլն¹: Անգամ 1926թ. ԽՍՀՄ մարդահամարի տվյալներում բացակայում է «ադրբեջանցի» հասկացությունը և օգտագործվում է հավաքական «թյուրք» էթնոնիմը, մինչդեռ լեզգիները, թաթերը և ներկայիս Ադրբեջանի Հանրապետության այլ բնիկ ազգեր նշվել են իրենց էթնիկ անվանումներով: Միայն 1930-ականների վերջերից է «ադրբեջանցի» էթնոնիմը պաշտոնական փաստաթղթերում փոխարինել «անդրկովկասյան թյուրք» կամ «մուսուլման» հասկացություններին: Ֆրանսիացի հայտնի արևելագետ Ալեքսանդր Բենիգսենը նշում է. «Մինչ հոկտեմբերյան հեղափոխությունը նստակյաց կամ քոչվոր մուսուլմանը, լինել թուրքմեն, ուզբեկ, կիրգիզ, դազախ կամ կարակալպակ, պատկերացում չունեի որևէ ազգությանը պատկանելու մասին: Նույնը կարելի է ասել նաև Վոլգայի թաթարների և ադրբեջանցիների վերաբերյալ: «Ազերի» կամ «թաթար» անվանումը անգամ չէր օգտագործվում: Վոլգայի թաթարներն անվանեցին իրենց «թաթար», «բուլդար» կամ ուղղակի «մուսուլման», իսկ «ազերիները» (որոնք բնակվում են ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքում) իրենց անվանում էին «թուրքեր»: Այնպես որ, պետության հասարակության միավորող ուժը հանդիսանում էր իսլամը»²:

Հարավային Կովկասի իսլամական ումման իր հերթին բաժանված էր մուսուլման շիաների և մուսուլման սուննիների, որոնց միջև կրոնական և աշխարհընկալման հակասություններն այնքան խորն էին, որ անկախ էթնոլեզվական ընդհանրություններից, վերաբերմունքը միմյանց նկատմամբ թշնամական էր: Շիաները մշակութային, պատմական, կրոնական ընդհանրություններով իրենց ասոցացնում էին Իրանի հետ, իսկ սուննիները՝ Օսմանյան կայսրության, ինչն էլ հիմք է հանդիսացել նրանց միջև պարբերաբար տեղի ունեցող արյունալի բախումների³: Այս հակամարտու-

¹ Նույն տեղում, էջ 23-29:

² Bennigsen A., Islam or Local Consciousness among Soviet Nationalities// Soviet Nationalities Problems, Allworth E., ed. New York, London, 1971, p. 175, մեջբերված է Գալչյան Ք., Азербайджанские историко-географические фальсификации, Москва, 2013, էջ 47:

³ Ռուս-օսմանյան պատերազմներում (1828-1829թթ., 1853-1856թթ., 1876-1878թթ.) սուննիադական թաթարները կոչվում էին օսմանյան բանակի կազմում, իսկ շիայադավանները՝ ռուսական բանակի: Կովկասի սուննիների և շիաների միջև պայքարի մասին մանրամասն տե՛ս Ե. Ս. Կոնստանտինով, Ислам в Азербайджане, Баку, 2004, с. 69-88:

թյան սրության և խորության վերաբերյալ քննարկումներն իրենց արտացոլումն են գտել ցարական Ռուսաստանի տարածքում լույս տեսնող առաջին թյուրքալեզու «Աքինջի» թերթի էջերում, որի հոդվածներից մեկում գրված էր. «Մեր մեջ չկա միասնություն, և ոչինչ չի կապում մեզ: Կովկասում բնակվող մուսուլմանների կեսը շիաներ են, մյուս կեսը՝ սուննիներ: Սուննիները չեն դադարում ատել շիաներին, իսկ շիաները՝ սուննիներին: Նրանք չեն ցանկանում միմյանց լսել»¹:

Էթնիկ ինքնության վերադասումը կրոնականից Հարավային Կովկասի թյուրքախոս մուսուլմանների շրջանում սկիզբ է առնում XIX դարի կեսից՝ մաս կազմելով ցարական Ռուսաստանի թյուրք-թաթար ժողովուրդների էթնիկ ինքնագիտակցության ձևավորման ընդհանուր գործընթացին: Այս երևույթը պայմանավորված էր ինչպես ներքին՝ բնականոն զարգացմամբ, այնպես էլ արտաքին՝ պատմաքաղաքական խթաններով: Ներքին գործոններն էին XIX դարի վերջին Ռուսաստանի սոցիալ-տնտեսական առաջընթացը, ինդուստրիալացումը, ուրբանիզացումը, կրթական մակարդակի բարձրացումը, աշխարհականացումը², իսկ արտաքին գործոնների շարքին կարելի է դասել պատմական երեք կարևոր իրադարձություն՝ 1. 1905թ. ռուսական հեղափոխությունը և հաջորդող էթնոկրոնական բախումները հայերի հետ, 2. 1906թ. իրանական սահմանադրական հեղափոխությունը և դրա տապալումը, 3. 1908թ. երիտթուրքական հեղափոխությունը, որն Օսմանյան կայսրությունում իշխանության բերեց պանթյուրքականներին³:

XIX դարի երկրորդ կեսից ցարական Ռուսաստանում սկիզբ առած սրընթաց ինդուստրիալ աճը, 1870-ական թթ. Բաքվի նավթային բումն իրենց ազդեցությունն ունեցան ցարական Ռուսաստանի մուսուլմանների վրա, ինչի արդյունքում կազմավորվեց նոր որակի մուսուլման մտավորականների սերունդ: Ձևավորվեցին աշխարհիկ կրթություն ստացած, օտար լեզուներին տիրապետող, առաջադիմական գաղափարների տեր անհատների խմբեր, որոնք առաջիններից էին, որ զարգացրին սեփական մշակութային և էթնիկ ինքնության գիտակցման անհրաժեշտությունը⁴: 1879թ. Ղրի-

¹ *Светоховский Т.*, Ислам и национальное самосознание на пограничных территориях: Азербайджан, Религия и политика на Кавказе, материалы международной конференции, ред. Искандарян А., Кавказский институт СМИ, Ереван, 2004, с. 10.

² Տե՛ս *Չոբանյան Մ.*, Ազգային քաղաքականությունը Խորհրդային Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղի խնդիրը, «21-րդ դար», թիվ 4 (18), 2007, էջ 30:

³ Տե՛ս *Yilmaz H.*, The Soviet Union and the Construction of Azerbaijani National Identity in the 1930s, Iranian Studies: Journal of the International Society for Iranian Studies, Vol. 46, No. 4, pb. by Routledge, 2013, p. 514.

⁴ Ժողովրդի շրջանում նրանք հայտնի էին *զիյալը* անվամբ (ադրբեջաներեն նշանակում է լուսավորված անձ):

մի թաթար Իսմայիլ Գասպրինսկին (1851-1914թթ.) Բախչիսարայում սկսեց հրատարակել «Թերջուման» թերթը, որը համարվում է առաջին նշանակալից տպագիր օրգանը՝ նվիրված Ռուսաստանի մուսուլմանների ազգային-կրոնական շահերին: Կովկասում թաթարների ազգային շարժման կենտրոնը Բաքուն էր: Այնտեղ նույնանման գործունեություն էին ծավալում Միրզա Ֆաթալի Ախունդովը (1812-1878 թթ.), Ահբեդ բեյ Ադաևը (1868-1939թթ.), Ալի Մարդան բեյ Թոփչիբաշևը (1863-1934թթ.), Ալի Հուսեյն-գադեն (1864-1940թթ.): Նրանք մի կողմից՝ պայքարում էին ռուսականացման ցարական քաղաքականության դեմ, մյուս կողմից՝ փորձում էին բարեփոխումներ իրականացնել իրենց ցեղակիցների հոգևոր-մշակութային կյանքում և նրանց շրջանում տարածել լուսավորչություն¹: Հարավային Կովկասի մուսուլմանների գրականության վերածննդի մեկնարկը կապված է հատկապես Միրզա Ֆաթալի Ախունդովի անվան հետ, որի գաղափարները մշակութային ոլորտից տեղափոխվելով քաղաքական դաշտ՝ կովկասյան մուսուլմանների շրջանում ազգային գիտակցության ձևավորման հիմք հանդիսացան: Նա առաջիններից էր, որ մուսուլմանների առջև ծառայած խնդիրների լուծման գործում կարևորեց աշխարհիկ կրթության անհրաժեշտությունը, խոսակցական լեզվի զարգացումը և օգտագործումը գրականության մեջ՝ արտահայտելով այս գաղափարներն իր թատերական, գրական ստեղծագործություններում, հողվածներում²: Ցարական Ռուսաստանի մուսուլման մտավորականների առաջին սերունդը գտնվում էր իրանական մշակույթի բացահայտ ազդեցության ներքո, իսկ հաջորդ սերունդը, որը եկավ 1870-ական թթ., կրում էր թյուրքական մշակութային ավանդույթների ազդեցությունը³: Նրանք հանդես էին գալիս իսլամական արժեքների վերարժևորման և զարգացման դիրքերից, այսինքն՝ ոչ թե իսլամն էր մեղավոր մուսուլմանների հետամնացության մեջ, այլ այն մոլլաները, որոնք իսլամական գաղափարները սխալ մեկնաբանությամբ են ներկայացնում ժողովրդին, և հենց իսլամական սկզբունքների ճիշտ գիտակցությամբ էլ հնարավոր է հասնել առաջադիմության: Մուսուլման թաթար լուսավորիչների աշխարհայացքը մեծապես կրում էր Ջամալ ադ-Դին ալ-Աֆղանիի (1839-1897թթ.) գաղափարների ազդեցությունը, որը համարվում է պանիսլամա-

¹ *Сваранц А.*, Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Москва, 2002, с. 39.

² Տե՛ս *Swietochowski T.*, Russian-Azerbaijan, 1905-1920: the shaping of national identity in a muslim community, Cambridge University Press, 2004, p. 24-26:

³ Գարելի է առանձնացնել Հասան բեյ Չարդաբիին (1837-1907թթ.), Մաիդ Ազիմ Շիրվանիին (1835-1888թթ.), Միրզա Ալեքբեյ Սաբիրին (1862-1911թթ.), Նեջեֆ բեյ Վեզիրովին (1854-1926թթ.), Ջալիլ Մահմեդովի-գադենին (1866-1932թթ.), Աբդուրռահիմ բեյ Հաքվերդիևին (1870-1933թթ.) և այլոց:

կանության գաղափարի հիմնադիրը: Նա գաղութատիրական ռեժիմի դեմ պայքարը և մուսուլմանական քաղաքակրթության զարգացման ուղին տեսնում էր ողջ մուսուլմանների միավորման մեջ՝ անկախ իսլամական տարբեր հոսանքների տարանջատումից: Աֆղանին կարծում էր, որ կրոնը և լեզուն այն երկու հիմնական տարրերն են, որոնք ծառայում են որպես հասարակության միավորող շղթա, և դրանցից առավել կարևորն է լեզուն¹: Հենց այդ գաղափարի վրա էլ հիմնվելով՝ Ռուսաստանի թյուրքախոս մուսուլման մտավորականները իսլամի երկու հակամարտող հոսանքների միջև պառակտումը վերացնելու նպատակով հանդես եկան հասարակության մեջ մշակութային բարեփոխումների անհրաժեշտության դիրքերից՝ շեշտը դնելով լեզվի, կրոնի, կրթության, տպագրության զարգացման, ինչպես նաև աշխարհիկ սովորույթների ամրապնդման վրա²: Անցումը պարսկերենից խոսակցական թյուրքերենի նշանակալից իրադարձություն էր, ինչը բավական թուլացրեց իրանական ազդեցությունը, իսկ ընդհանուր գրական թյուրքական լեզվի մշակման փորձերը պարարտ հող նախապատրաստեցին էթնոլեզվական ընդհանրությունների հիման վրա ազգային գաղափարների դրոշի ներքո համախմբվելու համար³: Բարեփոխումների կողմնակիցների մեծամասնությունը սուննի ուղղության հետևորդներ էին, որոնք, կարևորելով աշխարհիկ կրթության անհրաժեշտությունը, չէին ժխտում կրոնի մեծ դերն ազգային ինքնագիտակցության մեջ, իսկ նրանց ընդդիմադիրները, որոնք կողմնակից էին ավանդական կրոնական մեթոդ-

¹ Տե՛ս *Расулзаде М.Э.*, О пантуризме в связи с кавказской проблемой, с предисловием Жордания Н., Париж, 1930, с. 40, <https://freedocs.xyz/pdf-443488489>

² XIX դարի երկրորդ կեսին ցարական Ռուսաստանի մուսուլմանների շրջանում սկիզբ առած «լուսավորչական» շարժումն ընդհանուր տերմինով անվանում են «ջադիդականություն» նորարարություն (արաբերեն *ջադիդ* - նոր), ինչն առաջացել է «ուսուլ ի ջադիդ» (նոր կարգ) հասկացությունից: «Ուսուլ ի ջադիդ»-ի կողմնակիցները հանդես էին գալիս իսլամական դպրոցներում բարեփոխումներ կատարելու անհրաժեշտության դիրքերից, պահանջում էին անցում կատարել վանկայինից հնչյունային ուսուցման մեթոդի, դասավանդել մայրենի, այլ ոչ թե արաբական այբուբենով, աշխարհագրության, թվաբանության, օտար լեզուների ոլորտում երեխաներին տալ տարրական գիտելիքներ: Նրանց հակադրվում էին պահպանողական հոգևորականները՝ քաղիմականները (արաբերեն *քադիմ* - հին), որոնք «ուսուլ ի քադիմ»-ի (հին մեթոդի) կողմնակիցներն էին և սերտորեն համագործակցում էին ցարական կառավարության հետ:

³ Գրական թյուրքական լեզվի հիմնադիրն է համարվում ծագումով պարսիկ ռուսաստանցի արևելագետ Միրզա Մուհամեդ Ալի Քազիմ բեյը (Ալեքսանդր Կասիմովիչ, 1802-1870թթ.), որի «Թուրք-թաթարական լեզվի քերականություն» աշխատությունը (1839թ., Կազան) աշխարհում առաջին փորձն է թյուրքական լեզուների քերականությունը շարադրել օսմանյան թյուրքերենի և «թաթարական» լեզուների (Հարավային Կովկասի, Կազանի, Միբիբի, Օրենբուրգի թաթարների լեզուներ) համեմատական դիտանկյունից: Նրա աշխատությունները սկիզբ դրեցին պարսկերենի փոխարեն թյուրքերենի՝ որպես գրական լեզվի, օգտագործման միտմանը և հանդիսացան կրթական բարեփոխումների շարժիչ ուժը:

ների, շիաներն էին¹: Դա բացատրվում է ինչպես ումմայի սոցիալ-քաղաքական կյանքում սուննի ուլեմների ավելի սահմանափակ ազդեցությամբ, այնպես էլ գրականության վերածննդի մեջ պանթյուրքական երանգների առկայությամբ և մտավորականների քաղաքական հակվածությամբ դեպի Օսմանյան կայսրություն, որն այդ ժամանակահատվածում գտնվում էր 1856-1876թթ. թանզիմության բարեփոխումների շրջանում և բաց էր առաջադիմական գաղափարների համար²: Մշակութային վերածննդի գաղափարներն իրենց արտահայտությունը գտան մեծ մասամբ թատրոնի³ և լրատվության միջոցով: 1870-ականների երկրորդ կեսից Ռուսական կայսրությունում հրատարակվող թյուրքալեզու տպագիր պարբերականները հանդիսացան այն գաղափարական հենքը, որոնք առաջ քաշեցին հոգևոր վերածննդի ճանապարհով բարեփոխումներին հասնելու անհրաժեշտությունը⁴: Թերթերի հոդվածների միջոցով շրջանառության մեջ դրվեց «միլիոնների» (ազգայնականություն) տերմինը, ինչպես նաև կրոնականից բացի սկսեց քննարկվել էթնիկ ինքնության գաղափարը՝ ընթերցողներին դիմելով ոչ միայն «ուսուլմաններ», այլ նաև «կովկասյան թուրքեր» կամ պարզապես «թուրքեր» անվանումներով⁵: Հասունանում էին Ռուսաստանի թյուրքական բոլոր ցեղերի միավորման նախադրյալները, որոնք սկզբում պետք է համախմբվեին ընդհանուր գրական լեզվի և մշակույթի, իսկ հետագայում նաև քաղաքական կազմակերպությունների շուրջ՝ ազգային վերածննդի պայքարի համար⁶:

¹ *Swietochowski T.*, Russian-Azerbaijan, 1905-1920: The shaping of national identity in a muslim community, Cambridge University Press, 2004, p. 27.

² *Sattarov R.*, Islam, State, and Society in Independent Azerbaijan. Between Historical Legacy and Post-Soviet Reality with Special Reference to Baku and its Environs, Germany, 2009, p. 28.

³ Թատրոնը որպես բանավոր խոսքի միջոցով հանրությանն առաջադիմական գաղափարներին հաղորդակից դարձնելու գործիք առաջինն օգտագործեց Միրզա Ֆաթալի Ախունդովը, որի հետևորդներն էին Նեջեֆ բեյ Վեզիրովը (1854-1926թթ.), Ջալիլ Մահմեդովի-գադեն (1866-1932թթ.), Հաշիմ բեյ Վեզիրովը (1868-1916թթ.), Աբդուրահիմ բեյ Հաքվերդիևը (1870-1933թթ.), Սուլեյման Մանի Ախունդ-գադեն (1875-1939թթ.) և այլք:

⁴ Լեզվական վերափոխումների և էթնիկ համախմբման գործընթացներում մեծ դեր է խաղացել թյուրքալեզու մամուլը: Առավել նշանակալի էին ցարական Ռուսաստանի առաջին թյուրքալեզու տպագիր «Աքինջի» թերթը (1875-1877թթ.), հրատարակիչ՝ Հասան բեյ Ջարդաբի, «Թերջումեն» (1883-1918թթ.), հրատարակիչ՝ Իսմայիլ Գասպրիևսկի, «Զիյա» (1879-1880թթ.), այնուհետև հրատարակվել է «Զիյաի Քաֆքազիա» անվամբ (1880-1884 թթ.), հրատարակիչ՝ Աբդուռահման Ունսի-գադե, «Քեշքյուլ» (1883-1891թթ.), հրատարակիչներ Ջելալ և Սաիդ Ունսի-գադեներ, «Հայաթ» (1905-1906թթ.), հրատարակիչ՝ Ալի Մարդան բեյ Թոփչիբաշև, «Ֆուլուգաթ» (1906-1907թթ.), հրատարակիչ՝ Ալի բեյ Հուսեյն-գադե, «Մուլա Նասրեդդին» (1906-1931թթ.), հրատարակիչ՝ Մեհմեդ Գուլուգադե, «Շարքը ի Ռուս» (1903-1905թթ.), հրատարակիչ՝ Մեհմեդ Շահուախտինսկի, «Կասպիա», հրատարակիչ՝ Ալի Մարդան բեյ Թոփչիբաշև, «Իրշադ» (1905-1908թթ.), հրատարակիչ՝ Ահմեդ Ադաև) թերթերը:

⁵ *Swietochowski T.*, նշվ. աշխ, էջ 57:

⁶ Տե՛ս *Аршаруни А., Габидуллин Х.*, Очерки панисламизма и пантюркизма в России, Москва, 1930, с. 13:

Ակնհայտ է, որ սկզբնական փուլում ինքնության փնտրտուքները տեղի էին ունենում բացառապես իսլամականության գաղափարի շրջանակներում, քանի որ իսլամական աշխարհընկալումը և կրոնական ինքնագիտակցությունն իշխող էին թե՛ մուսուլման բնակչության և թե՛ մտավորականության շրջանում: Այնպիսի թաթար գործիչներ, ինչպիսիք են Ահմեդ բեյ Ադանը և Ալի բեյ Հուսեյն-գադեն, որոնք ոչ միայն Ադրբեջանում, այլև ողջ թյուրքական աշխարհում թյուրքականության գաղափարական հիմնադիրներից էին, ազգային գաղափարներին հարելուց առաջ հանդես են եկել Իրանի գլխավորությամբ իսլամական հովանու ներքո հակազաղութատիրական պայքարի համար մուսուլման ժողովուրդների համախմբման դիրքերից: Ալի բեյ Հուսեյն-գադեն գրում է. «Եթե մենք ցանկանում ենք առաջ գնալ և դառնալ կենսական ժառանգության տեր մի ազգ, ապա նախ և առաջ պետք է մնանք որպես մուսուլման»¹: Ինչպես նշում է Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետության ղեկավար Մեմեդ Էմին Ռասուլզադեն (1884-1955թթ.). «Մինչև վերջին ժամանակներն անգամ «ազգ» հասկացությունը չուներ հստակ իմաստ, քանզի ազգային շարժման առավել առաջադեմ առաջնորդները՝ Ահմեդ բեյ Ադաօղլուի գլխավորությամբ, այդքան էլ չէին տարանջատում իսլամականությունը թյուրքականությունից և պայքարում էին ոչ թե թյուրքականության, այլ մուսուլմանության համար»²: Մինչդեռ հենց ինքը՝ Ռասուլզադեն, որը համարվում է ադրբեջանական ազգային գաղափարի կերտողը, իր վաղ շրջանի հոդվածներից մեկում կոչ է անում մուսուլմանների տարբեր խմբավորումներին միավորվել իսլամի ընդհանուր դրոշի ներքո, որը չի հակասում ոչ սոցիալիզմի, ոչ էլ ժողովրդավարության գաղափարներին³:

1905թ. հեղափոխական ազատությունը, ռուսական հակաիսլամական քաղաքականության թուլացումը, մուսուլման այլ ազգերի հետ չձուլվելու անհրաժեշտությունը, ինչպես նաև 1905-1907թթ. հայ-թաթարական բախումները Հարավային Կովկասի թյուրքախոս մուսուլմանների համար նախադրյալներ ստեղծեցին իսլամականության կրոնական համակարգից թյուրքականության ազգային համակարգին անցելու և պայքարը մշակութային ոլորտից քաղաքական դաշտ տեղափոխելու համար: Հայկական

¹ Swietochowski T., նշվ. աշխ., էջ 57:

² Rəsulzadə M.Ə., İstiqlal məfkurəsi və gənclik, Azadlıq, 1990, 31 dekabr, մեջբերված է՝ Балаев А., Ислам и формирование национальной идеологии в Азербайджане: от уммы к нации, 01.02.2017, <http://1905.az/ru/ислам-и-формирование-национальной-ид/>

³ Багирова И., Политические партии и организации Азербайджана в начале XX века (1900-1917), Баку, 1997, с. 36, <http://tarix.gov.az/kitablar/Bagirova.pdf>

«սպառնալիքի» հանդեպ վախը ստիպեց մի կողմ դնել կրոնական հակասությունները սուննիների և շիաների միջև և էթնոլեզվական սկզբունքով միավորվել քաղաքական կառույցների շուրջ: Լեհ հայտնի պատմաբան Տ.Սվետոխովսկին նշում է, որ թեև միասնության խորհրդանիշը դեռ մարգարեի կանաչ դրոշմ էր, բայց կրոնը գլխավորապես ծառայում էր որպես էթնիկ հակամարտության մեջ մուսուլման բնակչությանը միավորող գործիք, և չնայած կոչերը հնչում էին «մահ անհավատներին», շեշտն ուղղված էր միայն հայերի, այլ ոչ թե ռուսների, վրացիների կամ այլ քրիստոնյաների դեմ¹: Հայերի դեմ առավել կազմակերպված հանդես գալու անհրաժեշտությունը հանգեցրեց Հարավային Կովկասի թաթարների առաջին քաղաքական կազմակերպությունների ստեղծմանը², որոնք թեև պանիսլամական գաղափարախոսության կրողներ էին և պայքարում էին համիսլամական արժեքների համար, սակայն նրանցում արդեն նկատելի էին թյուրքական ազգայնական տարրեր:

Հայկական սեպի և Ռուսաստանի դեմ պայքարում, որոնք խոչընդոտ էին թյուրքական ժողովուրդներին միավորող մեկ ընդհանուր պետության ստեղծման ճանապարհին, համախմբող գաղափարական դրոշմ դարձավ պանթուրանականության գաղափարախոսությունը³: Համաթյուրքական

¹ *Swietochowski T.*, Russian-Azerbaijan, 1905-1920: the shaping of national identity in a muslim community, Cambridge University Press, 2004, p. 42.

² Այդ ժամանակաշրջանի ամենաազդեցիկ քաղաքական կառույցներից կարելի է առանձնացնել «Իթթիֆազի մուսլիմին» («Մուսուլմանների միություն») կազմակերպությունը, «Գիֆաի» («Պաշտպանություն») ռազմաքաղաքական կազմակերպությունը, «Մուղաֆիե» («Պաշտպանություն») «Մուսավաթ» («Հավասարություն») կուսակցությունները, մանրամասն տե՛ս *Багирова И.*, Политические партии и организации Азербайджана в начале XX века (1900-1917), Баку, 1997, <http://tarix.gov.az/kitablar/Bagirova.pdf>

³ Ռուսաստանի թյուրք-թաթար պանթուրանականների համաձայն՝ ուրալ-ալթայյան լեզվաընտանիքի պատկանող բոլոր ազգերը պետք է միավորվեն մեկ ընդհանուր պետության թուրանի ներքո: Իսկ Թուրքիայի պանթուրանականները սահմանափակվում էին թուրանական ազգերի միայն թյուրքական խմբին պատկանող ազգերի բնակության տարածքների միավորմամբ և, հետևաբար, իրենց շարժումը գերադասում էին անվանել պանթյուրքական: Մանրամասն տե՛ս *Зареванд*, Турция и пантуранизм, введение Мандельштама А.Н., Париж, 1930, с. 71-73, *Сваранц А.*, Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Москва, 2002, с. 42-49: Թեև Ռուսաստանի թաթարներ Ահմեդ բեյ Աղանը, Յուսուֆ Աբչուրան, Ալի Հուսեյն-գաղեն, Իսմայիլ Գասպրիևսկին և այլք մեծ ներդրում են ունեցել պանթուրանականության գաղափարական զարգացման մեջ, սակայն սխալ է նրանց համարել այդ գաղափարախոսության հիմնադիրներ, քանզի պանթուրանականության և պանթյուրքականության ստեղծման տեսական և կազմակերպական հիմքերում կանգնած էին միջազգային սիոնիստական շարժման ներկայացուցիչները, մասնավորապես Արմինիուս Վամբերին, Մոիս Քոհենը, Լումիլ Դավիդը, Լեոն Քահոնը, Էմանուել Կառասոն, Պրիմո Լիին, Օսկար Շտրաուսը և այլք, որոնց աջակցում էին եվրոպական տերությունները: Պանթյուրքական ազգային գաղափարախոսության հաստատումն Օսմանյան կայսրությունում, ըստ սիոնիստների, հնարավորություն կտար Պաղեստինում ստեղծել հրեական ազգային համայնք, ինչն էլ հետագայում կվերածվեր Իսրայել պետության: Մանրամասն տե՛ս *Сваранц А.*, Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Москва, 2002, с. 20-42:

պայքարի առաջամարտիկի դերը պետք է ստանձներ Օսմանյան կայսրությունը, որն այդ ժամանակաշրջանում դեռևս անցում էր կատարում պանիսլամականությունից օսմանականության գաղափարախոսության¹: Ռուս դիվանագետ Ա. Մանդելշտամը նշում է, որ Թալեաթ փաշան 1909թ. տեղյակ էլ չէր Միջին Ասիայում բնակվող թյուրքական եղբայրների գոյության մասին²: Սակայն Բալկանյան պատերազմներում Օսմանյան կայսրության կրած պարտությունն ապացուցեց օսմանականության գաղափարախոսության անիրատեսականությունը, իսկ մուսուլման ժողովուրդների, մասնավորապես արաբների և ալբանացիների ապստամբությունները ստիպեցին վերջնականապես հրաժարվել պանիսլամականությունից: Արդյունքում՝ պանթուրանական քարոզչությունն ուժեղացավ ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ Ռուսաստանում՝ պանիսլամական-պանթուրքական միությունների միջոցով³:

Թեև հիմնային դրույթներով պանթուրանականությունը հակադրվում էր պանիսլամականությանը, սակայն այս երկու գաղափարախոսությունները միշտ էլ սերտորեն միահյուսվել են և գրեթե երբեք հանդես չեն եկել բացահայտ հակադրությամբ: Պանիսլամականությունն օգտագործվում էր որպես գործիք՝ մուսուլմանների շրջանում պանթուրանական գաղափարախոսության տարածման համար⁴, քանզի երևակայական Թուրանը բնակեցնող ժողովուրդների մեծամասնությունը նախ և առաջ մուսուլման էր: Այնուամենայնիվ, ինչպես իրավացիորեն նկատում է ադրբեջանցի պատմաբան Այդըն Բալանը, XX դարի առաջին տարիներին համաթյուրքական ինքնությունը որպես զանգվածային երևույթ գոյություն չունեցավ: Ընդհանուր թյուրքական ազգի գաղափարը գոյություն ուներ միայն թաթար մտավորականության որոշ հատվածի գիտակցության մեջ, մինչդեռ ժողովրդական զանգվածների համար կրոնական պատկանելությունը (մուսուլման) և տա-

¹ Օսմանականության գաղափարախոսությունը ենթադրում էր Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների իրավահավասարություն՝ անկախ կրոնական և ազգային պատկանելությունից, ինչը հանգեցնելու էր միասնական «օսմանյան ազգի» ստեղծմանը:

² *Зареванд*, նշվ. աշխ., էջ 11:

³ Ռուսաստանի տարբեր շրջաններում՝ ներկայիս Ադրբեջանի տարածքում, Դաղստանում, Աստրախանում, Թուրքեստանում, թուրքական գաղտնի ծառայությունների օժանդակությամբ ստեղծված իսլամական կազմակերպությունները («Իթթիհադ իսլամ» («Իսլամական միություն»), «Իթթիֆաք ուլ մուսլիմին» («Մուսուլմանների միություն»), «Իթիլաֆ» («Համաձայնություն») և այլն), օգտագործելով պանիսլամական կոչեր, քարոզում էին պանթուրքական գաղափարներ:

⁴ Տե՛ս *Реза Э. о.*, *Азербайджан и Арран (Атурпатакан и Кавказская Албания)*, Москва, 2012, с. 43-44:

րաձային ինքնությունը (դարաբաղյի, շիրվանցի և այլն) գերիշխող էր համաթյուրքական ինքնությունից¹:

«Ադրբեջանական» ազգային ինքնության կերտման հաջորդ փուլը թյուրքական էթնոսի հետ ծագումնաբանական առնչություն չունեցող «ադրբեջանական» առանձին ինքնության ստեղծումն էր: Թուրքիայի Հանրապետության հետ Խորհրդային Միության քաղաքական հարաբերությունների վատթարացմանը զուգահեռ՝ պանթյուրքական աշխարհաքաղաքական ձգտումները, որոնց մարմնացումն էր Ադրբեջանի առաջին հանրապետությունը, դիտարկվեցին ուղղակի սպառնալիք Խորհրդային Միության քաղաքական շահերին և տարաձային ամբողջականությանը: Արդյունքում՝ ադրբեջանցի պատմաբանները՝ խորհրդային իշխանության խիստ վերահսկողությամբ, Ադրբեջանի թյուրքերի համար մշակեցին թյուրքական ցեղերի հետ միայն լեզվական ընդհանրություններ ունեցող նոր՝ «մաքուր ադրբեջանական» ինքնություն²: Ստալինի 1936թ. հրամանով «ադրբեջանցի» հասկացությունը, որը մինչ այդ միայն նշանակում էր տվյալ երկրի քաղաքացի՝ անկախ ազգային պատկանելությունից, դարձավ էթնոսիմ, իսկ «ադրբեջանական» ազգը համարվեց Ադրբեջանի տիտղոսակիր ազգ³: Ադրբեջանցի խորհրդային ազգագրագետ, հնէաբան Ա.Ալեքսեյրովը գրում է. «...այդ անվանումը («ադրբեջանցի») լայն կիրառում գտավ ադրբեջանական

¹ Sté u Balayev A., Azerbaijani Turks: from Islamism to Turkism, “Azerbaijani” and beyond. Perspectives on the construction of national identity, edited by: Mammadli A., Braux A., Mahmudlu C., p. 58:

² Հակասություններ առաջացան նաև 1991թ. անկախություն ձեռք բերելուց հետո: Ադրբեջանի Հանրապետության նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը, հիմնվելով թյուրքականության սկզբունքի վրա, անհիմաստ էր համարում ժողովրդին կոչել բնակություն հաստատած տարածքի անունով՝ առաջնային համարելով էթնիկական ծագումը, ինչի արդյունքում «ադրբեջաներենը» վերանվանվեց «թուրքերենի», իսկ «ադրբեջանցի» էթնանունը՝ «թուրքի»: Հեյդար Ալիևի իշխանության գալով հաստատվեց և ամրապնդվեց թյուրքական ինքնության մաս կազմող, սակայն թյուրքականից անջատ «ադրբեջանական» ազգային ինքնությունը: Լեզուն վերանվանվեց «ադրբեջաներեն», իսկ ազգը՝ «ադրբեջանցի»: Ազգային պատմագրության մեջ էթնիկ ծագման տարբեր վարկածների և էթնոսիմների շահարկումը ևս փաստում է, որ մինչև այսօր ադրբեջանցիների ազգակերտման գործընթացն ավարտված չէ:

³ Ադրբեջանական ազգային համախմբմանը և էթնիկ ինքնագիտակցության ձևավորմանը մեծապես նպաստեց խորհրդային ազգային քաղաքականությունը, որի հիմքում դրվեց էթնոտարածքային սկզբունքը (յուրաքանչյուր էթնիկ հանրություն պետք է ունենար իր վարչական միավորը, որի սահմանները պետք է համապատասխանեին տվյալ էթնիկ հանրության բնակության սահմաններին) և «արմատականացման» քաղաքականությունը («կորենիզացիա». նեղ իմաստով «կորենիզացիա» նշանակում էր ոչ ռուսական, «բնիկ» ազգությունների ներկայացուցիչների ընդգրկում իշխանության մարմիններում և հասարակական կյանքի համար կարևոր ոլորտներում, իսկ լայն առումով՝ ազգային մշակույթների զարգացում): Մանրամասն տե՛ս Չորանյան Մ., Ազգային քաղաքականությունը Խորհրդային Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղի խնդիրը, «21-րդ դար», թիվ 4 (18), 2007թ.:

բնակչության շրջանում միայն 1936թ. սկսած: Իսկ մինչ այդ ադրբեջանցի անվանման փոխարեն օգտագործվել է թյուրք, ինչը կապված էր պանթյուրքականների, մուսավաթականների, պանիսլամականների և ադրբեջանական ազգի այլ թշնամիների հակահեղափոխական գործունեության հետ, որոնք երկար տարիներ ադրբեջանցիների համար օտար այդ անվանումների կողմնակիցն են եղել»¹:

Կրոնի դեմ ճնշումների հետևանքով իսլամական ինքնությունը պայմանավորող արարողակարգերը հասարակականից տեղափոխվեցին ընտանեկան մակարդակ, քանզի ընտանեկանն Ադրբեջանում, անկախ խորհրդային իշխանության ժամանակաշրջանում կրած զարգացման և աշխարհիկության սկզբունքների ազդեցությունից, ամենակայուն, պահպանողական, ավանդական սոցիալական համակարգն էր: Սակայն, հակառակ խորհրդային հակակրոնական քարոզչության, խորհրդային իշխանության ազատականացման տարիներին ադրբեջանցիների շրջանում նկատվում է իսլամական ինքնագիտակցության զարթոնք, ինչը վկայում է ստալինյան ժամանակաշրջանում արհեստածին «ադրբեջանական» ազգային ինքնության էթնոպատմական հենքի բացակայության և գաղափարական սնանկության մասին: Խոր արմատավորված իսլամական ավանդույթները և տոները (մասնավորապես՝ Նովրուզ և Աշուրա տոները) հանդիսացան անցյալի հետ կապող միակ օղակը՝ դառնալով էթնոքաղաքական համախմբման արդյունավետ գործիք: 1967թ. Ադրբեջանի կոմունիստական կուսակցության կենտկոմի քարտուղար Շիխալի Քուրբանովի ջանքերով Նովրուզի արարողությունը դուրս եկավ ընտանեկան նեղ շրջանակից և խորհրդային իշխանության ընթացքում առաջին անգամ տոնվեց հասարակական մակարդակով՝ հզոր ազդակ հանդիսանալով ազգային ինքնագիտակցության զարթոնքի համար: Այն ադրբեջանցիների մեծամասնության կողմից ընկալվեց որպես էթնիկ համայնքի սիմվոլ²: Այս տոնակատարությանն ուղեկցող կուլեկտիվ գործողությունները (հարազատների գերեզմաններին այցելություն, զանգվածային տոնախմբություններ) ձեռք բերեցին էթնիկ տարրեր և հանդիսացան ադրբեջանական հասարակության համախմբող գործոն: Նման համախմբող նշանակություն ունեցավ նաև 1990թ. հունվարի 20-ը, երբ շեյխ ուլ իսլամ Փաշազադեն Բաքվում հայերի ջարդերը դադար-

¹ *Алекперов А.*, Исследование по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с. 71.

² *Mammadli A.*, Peculiarities of the formation of Azerbaijanis' ethnic identity in the Soviet era, "Azerbaijani" and beyond. Perspectives on the construction of national identity, edited by: *Mammadli A., Braux A., Mahmudlu C.*, p. 73.

րեցնելու նպատակով խորհրդային զինվորականության գործողությունների արդյունքում մահացած «անմեղ զոհերի» հիշատակին, կրոնական ավանդույթի համաձայն, հայտարարեց 40-օրյա սուգ, ինչը վերածվեց քաղաքական բողոքի ընդդեմ Մոսկվայի կառավարության: Որոշ ուսումնասիրողներ հունվարի 20-ի իրադարձությունները բնորոշում են որպես Ադրբեջանում իսլամի վերածննդի և քաղաքականություն մտնելու սկիզբ¹:

Ազգակերտման երրորդ փուլում՝ Խորհրդային Միության փլուզումից հետո, թյուրքականությունը և իսլամը վերստանձնեցին իրենց կարևորությունն ազգային գաղափարախոսության և ինքնության վակուումը լցնելու գործում: Իսլամը հանդիսացավ պետականաշինական հիմնաքարերից մեկը, ստանձնեց սոսնձի դեր՝ որպես մշակույթի, ավանդույթների, սովորույթների ընդհանուր ժառանգության պահապան: Սակայն թյուրքականության գերակայությունն իսլամական գաղափարներին պայմանավորված էր աշխարհաքաղաքական մարտահրավերներով և տնտեսական-քաղաքական շահերով: Ադրբեջանում քաղաքական ազդեցության տարածման համար արտաքին ուժերի կողմից օգտագործվող իսլամական գաղափարներին դիմակայելու անհրաժեշտությունը, եվրոպական երկրների և Թուրքիայի հետ տնտեսական-ռազմական սերտ համագործակցությունը, արցախյան հակամարտության ընթացքում հայատյացության շուրջ ազգային համախմբման անհրաժեշտությունը ստիպեցին Ադրբեջանին թյուրքական և իսլամական ինքնության միջև ընտրությունը կատարել հօգուտ առաջինի: Դրան զուգահեռ, Ադրբեջանի քաղաքական գործիչները ներքին և արտաքին քաղաքականության մեջ շարունակեցին օգտագործել իսլամական սիմվոլիկան և հռետորաբանությունը, ինչը փաստում է բնակչության շրջանում իսլամական ինքնագիտակցության դեռևս խոր արմատների մասին: Հայ-ադրբեջանական էթնոտարածքային հակամարտությունը երբեմն ներկայացվում է նաև հայ-մուսուլմանական, քրիստոնեական և իսլամական քաղաքակրթությունների միջև հակամարտություն, ինչն ուղղված է ադրբեջանական հասարակության լայն շերտերի ներկայացուցիչներին՝ իսլամադավան տեղաբնիկ ազգերին, ազգային թույլ ինքնագիտակցություն ունեցող ադրբեջանցիներին, իսլամական տարբեր կազմակերպությունների անդամներին հակահայկական գաղափարախոսության շուրջ համախմբե-

¹ Trofimov D., Islam in the Political Culture of the Former Soviet Union: Central Asia and Azerbaijan, IFSH, Hmaburg, 1995, Sattarov R., Islam az a political factor in post-Soviet Azerbaijan, Central Asia and the Caucasus, 4(28), 2004.

լու, ինչպես նաև իսլամական երկրներից քաղաքական, ռազմական, տնտեսական օժանդակություն ստանալու համար¹:

Թեև էթնոլեզվական, պատմական, ազգային ինքնության ձևավորմանն ուղղված Ադրբեջանի Հանրապետության ղեկավարության ջանքերը տվել են իրենց պտուղները, սակայն այսօր էլ Ադրբեջանի հասարակության տարբեր շերտերի մեջ առկա են ազգային ինքնագիտակցության տարաբնույթ դրսևորումներ: Դա նկատվում է հատկապես գյուղական շրջաններում, որտեղ կարելի է հանդիպել մարդկանց, ովքեր իրենց ազգային ինքնությունը չեն տարանջատում տարածքային, ազգատոհմային կամ կրոնական պատկանելությունից: Հատկապես վերջին ժամանակաշրջանում Ադրբեջանում նկատվում է իսլամական գաղափարների տարածման առաջնահասցում, և ավելի ու ավելի շատ մարդիկ են համախմբվում իսլամական դրոշի ներքո՝ երկրում տիրող քաղաքական, սոցիալ-տնտեսական, գաղափարական ճգնաժամը հաղթահարելու համար:

Հունիս, 2018թ.

ԻՍԼԱՄԻ ԴԵՐՆ «ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Գայանե Չոբանյան

Ամփոփագիր

«Ադրբեջանական» ազգային ինքնությունը խարսխված է թյուրքականության գաղափարախոսության և այսպես կոչված «մշակութային» կամ «ազգային» իսլամի միաձուլման վրա: Անկախ կրոնական աստիճանից՝ Ադրբեջանի բնակչության ճնշող մեծամասնությունն իրեն համարում է մուսուլման՝ նույնացնելով այդ հասկացությունը ոչ թե կրոնական պատկանելության, այլ էթնոմշակութային ինքնության հետ: Այնինչ մինչև 1930-ական թթ. վերջը Հարավային Կովկասի թյուրքախոս մուսուլման բնակչությունը, որն այժմ կոչվում է

¹ Հակահայկական քաղաքականության մեջ իսլամական գաղափարախոսության օգտագործման մասին մանրամասն տե՛ս *Չոբանյան Գ.*, Ադրբեջանի հակահայկական քաղաքականությունը «Իսլամական համագործակցություն» կազմակերպության շրջանակներում, Արևելագիտության հարցեր (Գիտական հոդվածների պարբերական ժողովածու), N 9, Երևան, 2015, էջ 268-286, *Չոբանյան Գ.*, Իսլամական վարձկանները Ղարաբաղյան պատերազմում, «Վեմ» համահայկական հանդես, թիվ 3(43), հուլիս-սեպտեմբեր, 2013, էջ 163-173, *Tonoyan A.H.*, Religion and the conflict over Nagorno Karabakh, a Dissertation, Mentor: *Berger P.L.*, Submitted to the Graduate faculty of Baylor University in Partial Fullfilment of the requirements for the degree of doctor of philosophy, May 2012, pp. 229-234:

«ադրբեջանցի», չունենալով ընդհանուր էթնոնիմ: Պաշտոնապես նրանց անվանում էին «մուսուլմաններ», «անդրկովկասյան մուսուլմաններ», «թաթարներ», «անդրկովկասյան թաթարներ» և այլն: Այնուամենայնիվ, թյուրքախոս մուսուլմաններն իրենց ասոցացնում էին բացառապես իսլամական ումմայի հետ և նախընտրում էին կոչվել «մուսուլման»: Իսլամն առաջնային դեր խաղաց Ռուսական կայսրության թաթարների համախմբման գործում: Ոչ թե կրոնական, այլ ազգային ինքնության վերադասումը Կովկասի թաթարների մեջ սկիզբ է առնում XX դարի կեսերից, ինչը պայմանավորված էր մի շարք գործոններով՝ սոցիալ-տնտեսական առաջընթաց, ինդուստրիալացում, ուրբանիզացում, կրթական մակարդակի բարձրացում, աշխարհիկացում և աշխարհաքաղաքական մարտահրավերներ:

РОЛЬ ИСЛАМА В ПРОЦЕССЕ ФОРМИРОВАНИЯ «АЗЕРБАЙДЖАНСКОЙ» НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ

Գայե Չոբանյան

Резюме

«Азербайджанская» национальная идентичность основана на синтезе идеологии тюркизма и так называемого «культурного» или «национального» ислама. Независимо от уровня религиозности, подавляющее большинство азербайджанцев считает себя мусульманами, отождествляя это понятие не с религиозной принадлежностью, а с этнокультурной идентичностью. До конца 30-ых годов прошлого столетия тюркоязычное мусульмано-татарское население Южного Кавказа, которое в настоящее время именуется «азербайджанским», не имело общего этнонима. Они официально назывались «мусульманами», «закавказскими мусульманами», «татарами», «закавказскими татарами» и т.д. Однако тюркоязычные мусульмане идентифицировали себя как часть исламской уммы и предпочитали называться «мусульманами». Ислам играл ключевую роль в консолидации татар Российской империи. Преобладание национальной идентичности над религиозной у кавказских татар начинается со второй половины XX века, что было обусловлено наличием ряда факторов, таких как социально-экономический прогресс, индустриализация, урбанизация, повышение образовательного уровня, секуляризация, геополитические вызовы.

**THE ROLE OF ISLAM IN BUILDING
THE “AZERBAIJANI” NATIONAL IDENTITY**

Gayane Chobanyan

Resume

“Azerbaijani” national identity is based on the synthesis of the ideology of Turkism and the so-called “cultural” or “national” Islam. Most of the population of Azerbaijan identifies themselves as Muslim regardless of the low degree of religiousness. For them, being Muslim is not a religious affiliation, but an ethno-cultural identity. Till the end of the 1930s, Turkic-speaking Muslim-Tatar population of the South Caucasus that now is called “Azerbaijani”, did not have a common ethnonym. They were officially called “Muslims”, “Transcaucasian Muslims”, “Tatars”, “Transcaucasian Tatars”, etc. However, Turkic-speaking Muslims identified themselves as part of the Islamic Ummah and preferred to be called “Muslim”. Islam played a major role in consolidation of the Tatars in the Russian Empire. The predominance of national-Turkic identity over the religious one among the Caucasian Tatars began only in the second half of the 20th century. There were several factors that contributed to this process, such as the social-economic progress, industrialization, urbanization, increasing education, secularization and geopolitical challenges.

ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ ԲԱՂԱԴՐԻՉՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*Հայկ Մարգարյան**

Բանալի բառեր՝ Հայաստան-Իրան փոխհարաբերություններ, փափուկ ուժ, մշակույթ, կրոն, կրթություն, զբոսաշրջություն, ներդրումներ, Մփյուռք:

Խորհրդային Միության փլուզումից հետո Իրանի Իսլամական Հանրապետությունը տարածաշրջանի այն եզակի երկրներից էր, որն ի սկզբանե Հայաստանի Հանրապետության հետ հաստատեց բարիդրացիական հարաբերություններ: Իրանը պաշտոնապես ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը 1991թ. դեկտեմբերի 25-ին, իսկ 1992թ. փետրվարի 9-ին երկու երկրների միջև ստորագրվեց դիվանագիտական հարաբերությունների հաստատման արձանագրությունը: ԽՍՀՄ փլուզման և Հայաստանի նորանկախ Հանրապետության հռչակման այդ անկայուն ժամանակաշրջանը հատկապես կարևոր էր Հայաստան-Իրան փոխհարաբերությունների կայացման համար այն իմաստով, որ Հայաստանը փաստացիորեն գտնվում էր պատերազմական իրավիճակում, իսկ Իրանը, չնայած Ադրբեջանի հետ կրոնական ընդհանրություններին¹, արեց առավելագույնը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում պահպանելով չեզոքություն և կոչ անելով կողմերին լուծել խնդիրը միմիայն բանակցային և խաղաղ ճանապարհով: Ասվածը հատկապես կարևոր է այն համատեքստում, որ Ադրբեջանը Ղարաբաղյան հակամարտությունում առավելության հասնելու համար ջանք չէր խնայում կրոնական ընդհանրության սկզբունքով ներգրավելու այլ երկրների և կոչ անելով վերջիններիս ցուցաբերել աջակցություն (և մինչև այժմ էլ անում է): Պատերազմին Ադրբեջանի կողմից Չեչնիայից, Պակիստանից և մի շարք այլ երկրներից իսլամիստական խմբավորումների մասնակցությունն ասվածի ցայտուն

*ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասպիրանտ, ՀՀ ԱԳՆ սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության ՆԱՏՕ բաժնի աշխատակից:

¹Երկու երկրներում էլ բնակչության ճնշող մեծամասնությունը մահմեդականության շիա ուղղության հետևորդ է:

վկայությունն է [1]: Ի պատասխան Իրանի չեզոք և հավասարակշիռ կեցվածքի, Հայաստան-Իրան փոխհարաբերությունների շրջանակներում Հայաստանն իրեն հետագա տարիների ընթացքում դրսևորել է որպես հավատարիմ գործընկեր՝ Իրանի հանդեպ պատժամիջոցների ժամանակաշրջանում պահպանելով բացառիկ սերտ փոխհարաբերություններ այդ երկրի հետ:

Բնականաբար, երկու երկրների նման սերտ փոխհարաբերությունները չէին կարող բխել և չեն բխում պարզապես երկու երկրների հարևան լինելու հանգամանքից: Անշուշտ, երկու երկրների պատմական համատեղ անցյալը, ինչպես նաև ներկա ժամանակահատվածում փոխադարձ կենսական շահերը ստեղծեցին այն ամուր հիմքը, որի վրա խարսխված է հայ-իրանական ռազմավարական գործընկերությունը:

Այս համատեքստում հարկ է արձանագրել, որ Հարավկովկասյան տարածաշրջանը տնտեսական, աշխարհաքաղաքական, իսկ 20-րդ դարից սկսած՝ նաև էներգետիկ շահերի իմաստով պատմականորեն գտնվել է Իրանի և տարածաշրջանային ու համաշխարհային այլ դերակատարների ուշադրության կենտրոնում: Բնականաբար, Իրանը մշտապես մրցակցության մեջ է գտնվել այդ դերակատարների հետ՝ իրեն սահմանակցող անմիջական շահերի այս գոտու համար ազդեցության պահպանման և ընդլայնման համար: Ընդ որում, եթե ԽՍՀՄ գոյության տարիներին Խորհրդային Միության կազմում գտնվող երկրների անունից հանդես եկող գլխավոր դերակատարը պաշտոնական Մոսկվան էր, ապա ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային ամբողջ տարածքում, այդ թվում նաև Հարավկովկասյան տարածաշրջանում առաջացած անկայուն վիճակը և ուժային վակուումը բարենպաստ պայմաններ ստեղծեցին արտաքին ամենատարբեր դերակատարների ներգրավման համար: Իսկ կոնկրետ Իրանի համար խնդիրը դժվարացավ կրկնակի՝ հաշվի առնելով թուրք-ադրբեջանական՝ ֆորմալ առումով նորաստեղծ տանդեմին հակակշռելու կենսական խնդիրը:

Բնականաբար, երկու երկրների փոխադարձ հարաբերությունները, թերևս, այսչափ ամուր չէին լինի, եթե դրանցում չլիներ, այսպես կոչված, «փափուկ բաղադրիչը»: Փափուկ ուժ եզրը գիտական շրջանառության մեջ մտցրած Ջ.Նայի կարծիքով, փափուկ ուժը սեփական նպատակներին առավելապես գրավչության միջոցներով հասնելու ունակությունն է՝ ի հակադրություն բռնի/հարկադրական մեթոդների [2, p. 6]: Ընդ որում, եթե «կոշտ ուժը» հիմնվում է պետության բանակի, տարածքի, բնակչության և համանման այլ չափելի գործոնների վրա, ապա փափուկ ուժը, ըստ Ջ.Նայի, հիմնվում է մշակույթի (այնքանով, որքանով որ այն գրավիչ է մյուսների հա-

մար), արժեքների (այնքանով, որքանով որ տվյալ պետությունը հետևում է իր կողմից հռչակված արժեքներին ներքին և արտաքին խնդիրների լուծման համար) և արտաքին քաղաքականության (այնքանով, որքանով որ տվյալ պետության քայլերը լեգիտիմ են այլ դերակատարների աչքերում) վրա [3, p. 11]: Հենվելով վերոնշյալ սահմանման և դասակարգման վրա՝ մեր կարծիքով, երկկողմ հարաբերություններում «փափուկ բաղադրիչի» կամ «փափուկ համագործակցության» տակ կարելի է ներառել համագործակցությունը բոլոր այն ոլորտներում, որոնք առավելապես նպաստում են երկու երկրների հասարակություններում միմյանց հանդեպ համակրանքի և փոխըմբռնման մակարդակի բարձրացմանը՝ այդպիսով ստեղծելով բարենպաստ մթնոլորտ հարաբերությունների զարգացման համար: Բնականաբար, երկկողմ հարաբերություններում փափուկ ուժի կիրառման համար պետություններից յուրաքանչյուրն օգտագործում է գործիքների և մեխանիզմների իր զինանոցը: Միևնույն ժամանակ, «փափուկ համագործակցությունը» միմիայն պետության մենաշնորհը չէ և չի ընթանում բացառապես պետական մակարդակում, թեև հենց պետությունն է հաճախ հանդես գալիս որպես դրա նախաձեռնող: Փոխարենը «փափուկ համագործակցությունը» բարենպաստ մթնոլորտ է ստեղծում ավելի շատ հասարակական/հանրային շփումների մակարդակում: Այստեղ կարելի է հիշատակել նաև ամերիկացի հետազոտող Ջուլիո Գալարոտիի փափուկ ուժի սահմանումը, որն այն դիտարկում է որպես «մետաիշխանության» տարատեսակ, որի սահմանման համար չի կարելի օգտագործել իշխանության դասական սահմանումները: Նրա կարծիքով, փափուկ ուժը որևէ պետության համար որևէ այլ պետության հետ հարաբերություններում ապահովում է նպաստավոր «համատեքստ», համակրանքի անհրաժեշտ մակարդակ, որը կարող է օգտագործվել այլ նպատակների իրականացման համար [4, p. 11]:

Որպես հայ-իրանական հարաբերություններում «փափուկ համագործակցության» դրսևորումներ կարելի է առանձնացնել միջմշակութային, կրթական կապերը, տնտեսական գրավչությունը և ներդրումները, զբոսաշրջությունը, հայկական սփյուռքի առկայությունն Իրանում և մի շարք այլ գործոններ, որոնք լրացուցիչ, «սոսնձող» դեր են կատարում երկկողմ հարաբերություններում: Ավելին, հաշվի առնելով Հայաստանի և Իրանի պատմական անցյալի համատեղ էջերը՝ կարելի է ասել, որ փափուկ բաղադրիչը Հայաստան-Իրան փոխհարաբերություններում բազմադարյա շփումների և հաղորդակցման տրամաբանական շարունակությունն է ներկա իրողություններում:

Հայաստան-Իրան փոխհարաբերություններում փափուկ համագոր-

ծակցության կարևոր բաղադրիչներից են պատմականորեն գոյություն ունեցող միջմշակութային շփումներն ու համագործակցությունը: Հետաքրքրական է, որ ԻԻՀ-ն օգտագործում է մշակութային դիվանագիտության սեփական զինանոցը, որի շրջանակներում կենտրոնական դեր է խաղում Իսլամական մշակութային կապերի կազմակերպությունը (ԻՄԿԿ/*ICRO-Islamic Cultural Relations Organization*): Կազմակերպության նպատակն աշխարհում իրանական մշակույթի և լեզվի տարածումն է, Իրանի մշակութային հուշարձանների ներկայացումը [5]: Այն կարելի է համարել բրիտանական «*British Council*»-ի, ֆրանսիական «*Alliance Française*»-ի յուրատեսակ նմանակը: Այս կազմակերպության միջոցով Իրանի գերագույն առաջնորդը ներկայացուցիչներ է գործուղում այլ երկրներ և մշակութային կազմակերպություններ: Թեև տեղերում կազմակերպության մասնաճյուղերի գործունեությունը կրում է տեղայնացված բնույթ, սակայն բոլորն, ընդհանուր առմամբ, գործում են միևնույն համակարգի ներսում:

Երևանում 1992թ. ապրիլին բացված Իրանի դեսպանությունում ներկայում գործում է ԻՄԿԿ առանձին մասնաճյուղ, որն, ըստ էության, Հայաստանում իրանական մշակութային և կրթական ծրագրերը համակարգող հիմնական մարմինն է և զբաղվում է տարատեսակ ծրագրերի ու միջոցառումների իրականացմամբ:

Հայ-իրանական միջմշակութային հաղորդակցման իմաստով առանձնահատուկ նշանակություն ունի Երևանի Կապույտ մզկիթը: Դեռևս 18-րդ դարում կառուցված այս մզկիթը ներկայում Հայաստանի տարածքում գործող միակ մզկիթն է: Այն վերակառուցվել է 1990-ական թթ.՝ իրանական իշխանությունների ֆինանսավորմամբ, իսկ 1995-ից սեփականության իրավունքով տրվել է Իրանի Իսլամական Հանրապետությանը: Կապույտ մզկիթի հանդեպ հայկական իշխանությունները մշտապես դրսևորել են առանձնահատուկ հոգատար վերաբերմունք՝ ի նշան Իրանի և իրանցի ժողովրդի հետ համերաշխության և բարեկամության:

Հետաքրքրական է, որ սկսած 2016-ից, Կապույտ մզկիթում ամեն տարի տոնվող Աշուրայի փառատոնը բաց է հյուրերի համար: 2016թ. հոկտեմբերի 12-ին կայացած այդ տոնակատարության ժամանակ ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Սեյեդ Քազեմ Մաջադը նշել է, որ «այսօրվա միջոցառման նպատակն է ցույց տալ ամբողջ աշխարհին, որ շիա մուսուլմանները քրիստոնյա հայերի կողքին ապրում են բացառիկ խաղաղասիրության և միմյանց կրոնական ծեսերի հանդեպ փոխադարձ հարգանքի պայմաններում»: Դեսպանի խոսքով, այդուհետ կրոնական տոները պետք է նշվեն բաց՝ որպես քրիստո-

նյաների և մուսուլմանների համերաշխ կյանքի, տոները միասին տոնելու օրինակ [6, p. 67]: Մզկիթում պարբերաբար անցկացվում են պարսկերենի դասընթացներ, կրոնական ծեսեր, Ղուրանի ընթերցումներ և այլն:

2018թ. փետրվարի 9-ին նշվեց նաև Իրանի իսլամական հեղափոխության 39-ամյակը, որին մասնակցեց և ելույթով հանդես եկավ ՀՀ նախկին վարչապետ Կարեն Կարապետյանը [7]:

Մշակութային իմաստով հարկ է նշել նաև պարսկական նոր տարու՝ Նովրուզի տոնակատարության հետ կապված՝ Հայաստան այցելող իրանցի զբոսաշրջիկների թվի կտրուկ մեծացումը: Պաշտոնական վիճակագրության համաձայն, 2017թ. Իրանից Հայաստան է այցելել 220 հազար զբոսաշրջիկ, ինչը 16%-ով ավելի է, քան 2016թ. [8]: Նովրուզի տոնակատարությունը լայնորեն լուսաբանվում է հայկական և իրանական ՋԼՄ-ով՝ դրանով իսկ բարձրացնելով հանրային իրազեկման մակարդակը:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ Հայաստանում իրանական մշակութային քաղաքականության հիմնանպատակը Իրանի մշակույթի, կրոնի, ավանդույթների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացումն է և այդպիսով իրանական մշակույթի՝ որպես իր բնույթով տարբերվող, սակայն բարեկամական մշակույթի ներկայացումը:

Ի տարբերություն Իրանի մշակութային քաղաքականության՝ Իրանում Հայաստանի մշակութային քաղաքականությունն ունի ավելի ապակենտրոնացված բնույթ: Իրանում կան հայկական տասնյակ մշակութային կազմակերպություններ, միություններ, այդ թվում նաև առանձին բժիշկների, գրողների, արհեստավորների, ինչպես նաև ուսանողական միություններ [9, էջ 107-108]: Վերջիններս թեև իրենց հռչակած նպատակներով և քաղաքականությամբ շատ նմանություններ ունեն, սակայն տարբերվում են իրենց օրակարգային խնդիրներով: Թերևս, դա հիմնականում պայմանավորված է Իրանում հայկական բազմահազարանոց համայնքի ամկայությամբ, որը տեղաբաշխված է երկրի մի քանի քաղաքներում: Այդ կազմակերպություններից են «Արարատ»-ը, մշակութային «Միփան», «Նայիրի» միությունները և այլն:

Երկկողմ փոխհարաբերություններում առանձնահատուկ դերակատարություն ունի համագործակցությունը կրթության ոլորտում: Հարկ է նշել, որ ինչպես մշակույթը, այնպես էլ կրթությունը, ըստ Ջ.Նայի, համարվում են փափուկ ուժի դասական ռեսուրսներ (թեև Ջ.Նայը կրթությունը դիտարկում էր որպես մշակույթի բաղկացուցիչ մաս) [10, p. 13-14]: Կրթական բաղադրիչ ասելով նկատի են առնվում երկու երկրներում գործող կրթական հաստատությունների քանակը, այդ հաստատությունների՝ գի-

տական շրջանակներում ունեցած հեղինակությունը, կրթական ծրագրերով երկու երկրներում սովորող ուսանողների թիվը և այլն:

2017թ. հուլիսի տվյալներով՝ Հայաստանի համալսարաններում ուսանում է 444 իրանցի, որոնցից 216-ը՝ բժշկական համալսարանում [11]: Հայաստանում իրանագիտական հետազոտություններ իրականացնող հիմնական կենտրոններն են Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնը, Գիտությունների Ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի իրանագիտության բաժինը, Հայ-ռուսական սլավոնական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության բաժինը և այլն: Բացի այդ, Երևանում գործում է պարսկական թեքումով 2 դպրոց:

2017թ. հուլիսի 7-ին ԻԻՀ գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարար Մոհամադ Ֆարհադիի՝ Հայաստան այցի ժամանակ նրա և ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանի միջև հուշագիր ստորագրվեց Իրանի կողմից հայաստանցի 5 դասախոսի և 15 ուսանողի կրթաթոշակի տրամադրման վերաբերյալ՝ բնական գիտությունների ոլորտում Իրանում աշխատելու և սովորելու համար: Մ.Ֆարհադիի խոսքերով, «այս հուշագրի ստորագրումով ավելի կամրացնենք և կխորացնենք մեր համագործակցությունը: Բացի դասախոսների և ուսանողների փոխանակումից, նաև փորձի փոխանակում կիրականացնենք: Կհատկացնենք կրթաթոշակներ կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում: Բուհերից բացի, կհամագործակցեն նաև գիտատեխնոպարկերը» [12]: Հուշագրով կողմերը մտադիր են խթանել գիտական կազմակերպությունների, համալսարանների և հետազոտական հաստատությունների միջև համագործակցությունը, ինչպես նաև ամրապնդել երկու պետությունների գիտական համայնքների միջև կապերը: Մասնավորապես, կողմերը համակարգելու են համատեղ հետազոտական նախագծերի երկկողմ ֆինանսավորումը երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում՝ ֆիզիկա, բնագիտություն, կենսատեխնոլոգիա, նանոտեխնոլոգիա, ջրային գիտություններ, ճարտարագիտություն, բարձր արտադրողականության համակարգչային հաշվարկներ: Հուշագրի արդյունքներով ստեղծված գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների հայ-իրանական համատեղ կոմիտեի անդրանիկ նիստը կայացավ ս.թ. փետրվարի 8-ին:

Ինչ վերաբերում է Իրանում հայագիտության զարգացմանը, ապա պետք է նշել, որ այդ երկրում ներկայում գործում է երեք հայագիտական կենտրոն, որոնցից երկուսը՝ Թեհրանում և մեկը՝ Սպահանում: Երեք

հայագիտական կենտրոններն էլ համալսարանական ամբիոններ են: Թեհրանում գործող երկու հայագիտական կենտրոններից մեկը Թեհրանի պետական համալսարանի Հայագիտության ամբիոնն է, մյուսը՝ Թեհրանի Իսլամական ազատ համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնը: Երրորդ հայագիտական կենտրոնը Սպահանի համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնն է:

Այս համալսարանական ամբիոններից ամենահինը 1960թ. հիմնադրված Սպահանի համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնն է: Մյուս երկուսը՝ Թեհրանի Իսլամական ազատ համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնը և Թեհրանի պետական համալսարանի Հայագիտության ամբիոնը, հիմնվել են համապատասխանաբար 1995 և 2011թթ. [13]: Իրանում հայագիտությունը զարգանում է հիմնականում ակադեմիական շրջանակներում՝ համալսարաններում:

Իրան-Հայաստան փոխհարաբերություններում փափուկ համագործակցության յուրատեսակ դրսևորում են նաև տնտեսական գրավչությունը և ներդրումները: 2016թ. դեկտեմբերին ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանիի Հայաստան կատարած պաշտոնական այցի ժամանակ տեղի ունեցած Հայաստան-Իրան գործարար համաժողովի ընթացքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն իրանցի գործարարներին կոչ արեց ներդրումներ կատարել Հայաստանում՝ հավելելով, որ ինքն անձամբ վերահսկողություն կսահմանի այդ գործընթացի նկատմամբ: Իրանցի գործարարներին շահագրգռելու համար նախագահ Սարգսյանը շեշտադրեց ԵԱՏՄ-ին ու GSP+ համակարգին Հայաստանի անդամակցությունը, առանձնացրեց տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում Իրանի հետ համագործակցության հնարավորությունները [14]:

Տնտեսական սեզմենտում վերջին շրջանում նախաձեռնված կարևոր քայլերից է 2017թ. դեկտեմբերի 15-ին պաշտոնապես բացված «Մեդրի» ազատ տնտեսական գոտու (ԱՏԳ) և Իրանի «Արաս» ԱՏԳ-ի միջև գործակցությունը: «Մեդրի» ԱՏԳ-ն ոչ միայն ապահովեց այդ շրջանի բնակչության մի մասին աշխատանքով, այլև բարենպաստ պայմաններ ստեղծեց Հայաստանում իրանական կապիտալի ներդրման ծավալների ավելացման համար: Իրանի համար սա նաև Եվրասիական տնտեսական միության հետ հարաբերվելու յուրատեսակ մեխանիզմ է: Երկու երկրների միջև առևտրաշրջանառությունը 2017թ. կազմել է \$237 մլն, ինչը 7.8%-ով ավելի է 2016թ. գրանցված արդյունքից [15]: Ընդ որում, առևտրում շարունակում է առանցքային դեր խաղալ գազ-էլեկտրաէներգիա փոխանակությունը:

Իրան-Հայաստան փոխհարաբերություններում առանձնահատուկ

դերակատարություն ունի սփյուռքի գործոնը, որն, ըստ էության, կամրջող դեր է խաղում երկու երկրների շփումներում: Ընդ որում, եթե Հայաստանում իրանական համայնք, որպես այդպիսին, գոյություն չունի, ապա Իրանում պատմականորեն գոյություն է ունեցել հայկական բազմահազարանոց համայնք: Բհարկե, հայկական սփյուռքի առկայությունն ու խաղաղ կենսագործունեությունն Իրանում անհնար կլինեին առանց իրանական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի և հայ համայնքի իրավունքներն ու շահերը պաշտպանելու պատրաստակամության: 1979թ. իսլամական հեղափոխությունից հետո ընդունված սահմանադրությամբ, նախորդ՝ 1906թ. ընդունված սահմանադրության օրինակով, երկրի ոչ մահմեդական ազգային փոքրամասնությունները ճանաչվեցին կրոնական փոքրամասնություններ: Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրությունը բացառում է կրոնական փոքրամասնությունների նկատմամբ ռասայական կամ խտրական դրսևորման որևէ քայլ [16, էջ 42]:

Իրանի հայկական համայնքը պատմականորեն քաղաքական, կրոնական և մշակութային պաշտպանվածություն է ունեցել իրանական իշխանությունների կողմից: Իրանահայերի իրավական կարգավիճակի հիմքը կրոնատեղեցական ինքնավարությունն է՝ հաստատված Իրանի սահմանադրությամբ: Պատահական չէ, որ Իրանի տարածքում առկա է մոտ 200 հայկական եկեղեցի [6, p. 65]: Ընդ որում, հայկական համայնքը նաև քաղաքական ներկայացվածություն ունի Իրանի խորհրդարանում, տեղական ինքնակառավարման մարմիններում և այլն: Այսպես, Իրանի խորհրդարանի՝ մեջլիսի 290 պատգամավորական մանդատներից 5-ը, ըստ երկրի սահմանադրության, հատկացված է պաշտոնապես ճանաչված «կրոնական փոքրամասնություններին», որոնցից 2-ը զբաղեցնում են հայ պատգամավորները: Մյուս երեքը բաշխված են 1 զրադաշտական, 1 հրեա և 1 ասորի («նեստորական» և «քաղղեացի»՝ կաթոլիկ համատեղությամբ) պատգամավորների միջև:

Ընդհանուր առմամբ, Իրանի հայկական համայնքի թիվը մշտապես տատանվել է՝ կախված Իրանում տեղի ունեցող գործընթացներից և տարածաշրջանային իրավիճակից: Նորագույն ժամանակներում իրանահայության խոշոր արտագաղթ է տեղի ունեցել 1979թ. իսլամական հեղափոխության տարիներին ու նրան հաջորդող շրջանում, ինչպես նաև 1980-1988թթ. Իրան-իրաքյան պատերազմի շրջանում: Ներկայում համայնքը հիմնականում ինքնակազմակերպված է երեք թեմերի շուրջ, որոնք են՝ 1) Հյուսիսային կամ Թավրիզի թեմը, 2) Սպահանի հայոց թեմը, 3) Թեհրանի կամ Կենտրոնական թեմը:

Թեև հայերն Իրանում պաշտոնապես դիտարկվում են որպես երկրի կրոնական փոքրամասնություն, սակայն նրանք իրավունք ունեն մասնակցելու երկրի համապետական ընտրություններին, ձեռք բերելու սեփականություն և օգտվում են սահմանադրական այլ իրավունքներից:

Ներկայում իրանահայ համայնքի առջև կանգնած ամենամեծ մարտահրավերը երկրի քաղաքական և տնտեսական անկայունությամբ, տարածաշրջանում ստեղծված լարված իրավիճակով պայմանավորված արտագաղթն է: Մասնավորապես, Իրանի հայկական համայնքն իր վրա կրում է սիրիական իրադարձությունների ազդեցության կնիքը, քանի որ Իրանը, առավել քան տարածաշրջանի որևէ այլ երկիր, ներքաշված է իր անմիջական հարևանությամբ ընթացող գործընթացներում: Այս իրողությունն առաջիկա տարիներին լրջագույն վնաս կարող է հասցնել համայնքի թվաքանակին: Բարեբախտաբար, արտագաղթի մի շոշափելի հոսք ուղղված է դեպի Հայաստան, որտեղ զգալի թվով հայեր ձեռք են բերում բնակարան և մշտական բնակություն հաստատում հայրենիքում: Այլ կերպ ասած՝ տեղի է ունենում փոքր մասշտաբներով ներգաղթ:

Իրանական իշխանությունների կողմից տեղի հայկական համայնքի հանդեպ հոգատար և կշռադատված վերաբերմունքը, հայ համայնքի ինքնակազմակերպման իրավունքի ընձեռումը վկայում են այն մասին, որ Իրանը ևս գիտակցում է համայնքի գործոնի դերը երկկողմ հարաբերությունների ամրապնդման գործում:

Այսպիսով, կարելի է ասել, որ հայ-իրանական փոխհարաբերություններում «փափուկ բաղադրիչը» բարձրացնում է երկու երկրների հասարակություններում միմյանց նկատմամբ փոխըմբռնման, համակրանքի և հանրային իրազեկման մակարդակը՝ դրանով իսկ նպաստավոր մթնոլորտ և պայմաններ ստեղծելով ռազմաքաղաքական և տնտեսական շահերի բավարարման համար: Աշխարհում կրոնական ծայրահեղականության և աճող անհանդուրժողականության պայմաններում հայ-իրանական «փափուկ համագործակցությունը» կարելի է համարել կրոնական և քաղաքակրթական առումով միմյանցից էականորեն տարբերվող հասարակությունների բացառիկ բարիդրացիական հարաբերությունների յուրատեսակ մոդել:

Մարտ, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *МГДЕСЯН А.*, Чеченский след в Нагорном Карабахе, 16.05.2013, [HTTP://WWW.BIGCAUCASUS.COM/EVENTS/TOPDAY/16-05-2013/83302-CHECHEN_WAR_KARABAKH-0/](http://WWW.BIGCAUCASUS.COM/EVENTS/TOPDAY/16-05-2013/83302-CHECHEN_WAR_KARABAKH-0/)

2. *Nye, Joseph Jr.*, Bound to Lead: The Changing Nature of American Power, NY: Basic Books, 1991.
3. *Nye, Joseph Jr.*, Soft Power: The Means to Success in World Politics, New York: Public Affairs, 2004.
4. *Gallarotti, Giulio M.*, Soft Power: What it is, why it's important, and the conditions under which it can be effectively used, Division II Faculty Publications, Paper 57, 2011.
5. Իսլամական մշակութային կապերի կազմակերպության պաշտոնական կայք, <http://en.icro.ir/>
6. *Mkrtchyan T.*, Iran's Soft Power Policy In Armenia: Cultural Diplomacy and Religion, Religion and Soft Power in the South Caucasus, Conference paper, March 2017, https://www.researchgate.net/publication/315119752_Religion_and_Soft_Power_in_the_South_Caucasus
7. ՀՀ վարչապետ. «Իրանը տարածաշրջանում մեր վստահելի հարևանն է», Feb. 10, 2018, <http://parstoday.com/hy/news/armenia-i83843>
8. Իրանցի զբոսաշրջիկները բողոքում են, թե Հայաստանում քչերն են խոսում անգլերեն, 23.03.2018, <https://www.azatutyun.am/a/29119886.html>
9. *Բայբուրդյան Վ.*, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, <http://www.mindiaspora.am/res/Hratarakumner/2014/bayburdyan%20nor.pdf>
10. *Nye, Joseph Jr.*, Soft Power and Higher Education, Harvard University, 2005.
11. Իրանի գիտության նախարարը հանդիպեց Հայաստանում իրանցի ուսանողներին, 09.07.2017թ., <http://parstoday.com/hy/news/armenia-i66768>
12. Իրանը հայ 15 ուսանողի կրթաթոշակ է տրամադրել՝ իրենց երկրում սովորելու համար, 07.07.2017, <https://www.panorama.am>
13. *Հովյան Վ.*, «Հայագիտությունը ժամանակակից Իրանում», «Նորավանք» ԳԿՀ, 03.11.2014, http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=12983
14. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Հայաստան-Իրան գործարար համաժողովում, 21.12.2016, <http://www.president.am/hy/press-release/item/2016/12/21/President-Serzh-Sargsyan-attended-Armenian-Iranian-Business-Forum/>
15. *Հերզնյան Ս.*, «Հայաստան-Իրան. առևտրի, ներդրումների ու ժամանումների միտումները 2017-ին», 09.01.2018, <http://hetq.am/arm/news/84817/hayastan-iran-arevtri-nerdrumneri-u-zhamanumneri-mitumnery-2017-in.html>
16. Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրություն (Հիմնական օրենք), Թեհրան, 2005:

**ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ ԲԱՂԱԴՐԻՉԸ ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ
ՓՈՆԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Հայկ Սարգսյան

Ամփոփագիր

Չնայած փափուկ ուժի հայեցակարգը սկզբնապես ձևավորվել և մշակվել է Արևմուտքում, այդուհանդերձ, ներկայում այն ներթափանցել է աշխարհաքաղաքական ամենատարբեր դերակատարների արտաքին քաղաքական գործիք-

ների զինանոց: Այս իմաստով բացառություն չեն հայ-իրանական հարաբերությունները, որտեղ փափուկ ուժն ունի յուրատեսակ «սուսնձող» դերակատարություն՝ բարենպաստ մթնոլորտ և պայմաններ ստեղծելով հարաբերությունների զարգացման համար: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել փափուկ ուժի դրսևորումներն ու «փափուկ համագործակցությունը» հայ-իրանական փոխհարաբերություններում և ցույց տալ դրանց ազդեցությունն ու նշանակությունը երկկողմ հարաբերությունների զարգացման համար:

КОМПОНЕНТА МЯГКОЙ СИЛЫ В АРМЯНО-ИРАНСКИХ ВЗАИМООТНОШЕНИЯХ

Այկ Տարկիսյան

Резюме

Несмотря на то, что концепция мягкой силы была сформирована и разработана на Западе, тем не менее в настоящее время она проникла в арсенал внешнеполитического инструментария самых разных акторов геополитических процессов. В этом смысле не составляют исключения также армяно-иранские взаимоотношения, в контексте которых мягкая сила имеет особое интегрирующее значение, создавая благоприятную атмосферу и соответствующие условия для всестороннего и глубокого развития межгосударственных отношений. Цель данной статьи заключается в изучении проявлений мягкой силы, а также «мягкого сотрудничества» в армяно-иранских отношениях и в выявлении значения этих проявлений в развитии двухсторонних отношений.

THE COMPONENT OF SOFT POWER IN ARMENIA-IRAN RELATIONS

Hayk Sargsyan

Resume

Despite the fact that the concept of “soft power” was initially formed and developed in the West, since then it has been incorporated into the arsenal of foreign policy tools of various geopolitical actors. Armenia-Iran relations are not an exception in this sense: soft power has played a unique “gluing” role in them - creating favorable conditions to further deepen these relations. The article aims at exploring manifestations of soft power and “soft cooperation” in Armenia-Iran interactions and to demonstrate the importance of those in development of bilateral relations.

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈՐՁ

Վահրամ Հովյան՝

Բանալի բառեր՝ սփյուռք, հայկական և հունական համայնքներ, թվաքանակ, առավելություն, համագործակցություն, համակարգում, սփյուռքի ինքնակազմակերպում, համադաշնություն:

Հայկական և հունական սփյուռքերն այսօր

Քանակական առումով հայկական և հունական սփյուռքերը միմյանց հետ համեմատելի են: Հայկական սփյուռքի թվաքանակը տարբեր հաշվարկներով կազմում է 7-10 մլն: Արտերկրում բնակվող հույների թիվը, ըստ Հունաստանի ԱԳ նախարար Ն.Կոձիասի, կազմում է 8 մլն¹:

Առաջացման տեսակետից հունական սփյուռքը ևս հայկականի նման ձևավորվել է ինչպես Օսմանյան կայսրությունում ջարդերի ու ցեղասպանության², այնպես էլ Հունաստանի ներքին քաղաքական և տնտեսական ճգնաժամերի հետևանքով այդ երկրից հույների արտագաղթի արդյունքում³:

Աշխարհագրական սփռվածության առումով հայկական և հունական սփյուռքերն ունեն որոշակի նմանություններ: Սակայն կան նաև էական տարբերություններ: Եթե համեմատական դիտանկյունից վերլուծենք հայ-

¹ «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ:

² Թեև այլ աղբյուրներ ավելի համեստ թվեր են մատնանշում: Համաձայն Արտերկրի հույների գլխավոր քարտուղարության՝ հունական սփյուռքի թվաքանակը կազմում է 5 մլն, <http://www.ggae.gr/frontoffice/portal.asp?cpage=node&cnode=16&clang=1>;

Մեկ այլ աղբյուր նշում է 7 մլն ցուցանիշը: The Greek diaspora - Greeks outside Greece, <http://www.hellenism.net/greece/greek-culture/greek-diaspora/>.

³ Այստեղ արժե հիշատակել նաև հանրապետական Թուրքիայում հույների նկատմամբ իրականացված հալածանքները (ընդհանուր քրիստոնեության հետ միասին), ինչպես նաև 1974թ. Թուրքիայի կողմից Կիպրոսի հյուսիսային հատվածի գրավումը, որը հանգեցրեց մեծ թվով հույների հեռանալուն իրենց բնակավայրերից:

³ Տե՛ս The Greek diaspora - Greeks outside Greece, <http://www.hellenism.net/greece/greek-culture/greek-diaspora/>

կական և հունական առավել խոշոր համայնքներն ըստ տարածաշրջանների, ապա կստացվի հետևյալ պատկերը.

1. *Հյուսիսային Ամերիկայի* երկրներից խոշոր հայկական և հունական համայնքներ կան ԱՄՆ-ում և Կանադայում: Սակայն եթե ԱՄՆ-ում հայկական և հունական համայնքները քանակապես համեմատելի են¹, ապա Կանադայում հունական համայնքը (350-400 հազ.) մի քանի անգամ գերազանցում է հայկականը (մոտ 80 հազ.): ԱՄՆ-ում հույները կենտրոնացած են Նյու Յորքում, Բոստոնում և Չիկագոյում², մինչդեռ հայերը՝ հիմնականում Լոս Անջելեսում:

2. *Հարավային կամ Լատինական Ամերիկայի* երկրներում քանակական ցուցանիշների առումով առավելությունը հայ համայնքների կողմն է: Այս տարածաշրջանի երկրներից միայն Չիլիում է, որ հույները (5 հազ.) քանակական առավելություն ունեն հայերի (1.2 հազ.) նկատմամբ: Բրազիլիայում և Վենեսուելայում հայկական և հունական համայնքների քանակական ցուցանիշները համադրելի են, թեև հայերը երկու երկրներում էլ (համապատասխանաբար՝ 40 հազ. և 4 հազ.) մի փոքր առավելություն ունեն հույների (համապատասխանաբար՝ 30 հազ. և 2 հազ.) նկատմամբ: Արգենտինայում և Ուրուգվայում հայկական համայնքները (համապատասխանաբար՝ 100 հազ. և 15 հազ.) բազմապատիկ առավելություն ունեն հունականի նկատմամբ (համապատասխանաբար՝ 5 հազ. և 2 հազ.):

3. *Եվրոպայում* խոշորագույն հայ համայնքը գտնվում է Ֆրանսիայում (450-500 հազ.): Այստեղ հունական սփյուռքի թվաքանակը կազմում է 55 հազ.: Այս իրավիճակի գրեթե լիովին հակապատկերն է Գերմանիան, որտեղ հույների թվաքանակը կազմում է 400-450 հազ., մինչդեռ հայերինը՝ 50 հազ.: Բացի Գերմանիայից, Եվրոպայում հունական սփյուռքը քանակական բացահայտ առավելություն ունի հայկականի նկատմամբ նաև Մեծ Բրիտանիայում՝ համապատասխանաբար 400 հազ. և 16 հազ. հարաբերակցությամբ:

Որոշ երկրներում, թեև հայկական և հունական համայնքները համեմատաբար փոքրաթիվ են, այնուամենայնիվ, հունական համայնքը բացահայտ առավելություն ունի հայկականի նկատմամբ: Այդ երկրներն են. Իտալիան՝ համապատասխանաբար 45 հազ. և 3 հազ., Նիդերլանդները՝ 30

¹ ԱՄՆ-ում հունական համայնքի թվաքանակը գնահատվում է 3 մլն: Սակայն այս ցուցանիշը ոչ պաշտոնական է: Պաշտոնական տվյալներով՝ ԱՄՆ-ում բնակվող հույների թիվը կազմում է մոտ 1.3 մլն (Greek diaspora, https://en.wikipedia.org/wiki/Greek_diaspora), ինչը համադրելի է հայ համայնքի թվաքանակի հետ (1.2 մլն):

² Greek diaspora, https://en.wikipedia.org/wiki/Greek_diaspora; The Greek diaspora - Greeks outside Greece, <http://www.hellenism.net/greece/greek-culture/greek-diaspora/>

հազ. և 10 հազ., Շվեդիան՝ 26 հազ. և 5-6 հազ., Շվեյցարիան՝ 11 հազ. և 4.5 հազ., Ռումինիան՝ 10 հազ. և 2.5 հազ.: Որոշ երկրներում էլ հայկական սփյուռքը, թեև լինելով համեմատաբար փոքրաթիվ, ունի էական քանակական առավելություն հունականի նկատմամբ: Այդ երկրներն են. Իսպանիան՝ համապատասխանաբար 40 հազ.¹ և 6 հազ., Լեհաստանը՝ 25-30 հազ. և 3 հազ., Հունգարիան՝ 15 հազ. և 5 հազ.: Եվրոպայում հայկական և հունական համայնքները համադրելի են Բելգիայում՝ համապատասխանաբար 20 հազ. և 38 հազ., Ավստրիայում՝ 5 հազ. և 8 հազ., Բուլղարիայում 30 հազ. և 25 հազ., Չեխիայում 5-6 հազ. և 2.4 հազ., Դանիայում՝ 3 հազ. և 4 հազ.:

4. *Հետխորհրդային* երկրներում նույնպես հայ համայնքները քանակական գերակայություն ունեն հունականների նկատմամբ: Այս տարածաշրջանի ամենամեծ հունական համայնքները Ռուսաստանում և Ուկրաինայում են՝ համապատասխանաբար՝ 100 հազ. և 92 հազ. ցուցանիշներով: Հայերի թիվն Ուկրաինայում կազմում է 400 հազ., իսկ Ռուսաստանում, ոչ պաշտոնական տվյալներով՝ 2-2.5 մլն: Քիչ թե շատ նշանակալի հունական համայնքներ կան նաև Վրաստանում և Ղազախստանում՝ 12 հազարական: Հայերի թիվը Վրաստանում կազմում է 170 հազ., իսկ Ղազախստանում՝ 20-25 հազ.: Հայկական և հունական համայնքների՝ որոշ չափով համադրելի թվեր կան Բելառուսում՝ համապատասխանաբար 8.5 հազ. և 4.5 հազ.: Այլ երկրներում հունական համայնքները փոքրաթիվ են: Հայ համայնքները նույնպես համեմատաբար փոքրաթիվ են, թեև գերակշռում են հունականների (մանրամասն տե՛ս *Հավելված*): Այլ երկրներից ամենամեծ հայ համայնքը գտնվում է Ուզբեկստանում (80 հազ.): Հունական համայնքի թիվը այդ երկրում 4 հազ. է:

5. *Մերձավոր ու Միջին Արևելքի և Ծոցի* երկրներից միայն Իսրայելում է, որ հունական սփյուռքը (13 հազ.) քանակական գերակշռություն ունի հայկականի նկատմամբ (2.4 հազ.): Հայկական և հունական սփյուռքերի համադրելի քանակական ցուցանիշ կա միայն Եգիպտոսում՝ համապատասխանաբար 7-8 հազ. և 4 հազ., թեև հայկական համայնքը քանակապես գերակշռում է հունականը:

Հետաքրքրական է, որ Եգիպտոսում հայկական և հունական համայնքները (թերևս, քրիստոնյա համայնքներ լինելու ընդհանրությամբ պայմանավորված) ենթարկվել են միևնույն գործոնների ազդեցությանը և կրել

¹ Իսպանիայի հայկական «Արարատ» միության նախագահ, «Հայրենիք» շաբաթաթերթի խմբագիր Արարատ Ղուկասյանի տվյալներով՝ Իսպանիայի հայության թվաքանակը կազմում է մոտ 10 հազ.: Ա.Ղուկասյանի հարցազրույցը Հայաստանի հանրային ռադիոյի «Հայկական գաղթօջախներ» ծրագրին, <https://soundcloud.com/armradio/jdxxsanb3evdx>

գրեթե նույն հետևանքները: 1950-ական թթ. սկսած՝ նախագահ Գամալ Արդալ Նասերի ավտորիտար իշխանությունը՝ զուգակցված արաբական ազգայնականության, ինչպես նաև հակաքրիստոնեական դիմագիծ ստացող իսլամականության վերելքի հետ, հանգեցրել է մեծ քանակությամբ հայերի [մանրամասն տե՛ս 1, էջ 89; 2, էջ 44] ու հույների արտագաղթին այդ երկրից, որն էլ, իր հերթին, հանգեցրել է երբեմնի ծաղկուն հայկական և հունական համայնքների եթե ոչ իսպառ քայքայմանը, ապա խիստ թուլացմանը, այն աստիճան, որ դրանք այսօր ունեն հիմնականում խորհրդանշական կշիռ հայկական և հունական սփյուռքերի ընդհանուր համատեքստում: Մինչդեռ, նախքան 20-րդ դարի 50-ական թթ., օրինակ, Ալեքսանդրիան անտիկ ժամանակներից ի վեր եղել է հունական մշակութային և տնտեսական կյանքի կարևոր կենտրոն¹:

Մնացած երկրներում հունական համայնքները փոքրաթիվ են և համեմատելի չեն հայկականի հետ (մանրամասն տե՛ս *Հավելված*): Ընդհանրապես, Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքները, չնայած 20-րդ դարի կեսից առայսօր կրած ահռելի վնասներին, շարունակում են մնալ հայկական սփյուռքի ավանդական և ուժեղ օջախներ:

6. *Աֆրիկյան մայրցամաքում* միայն հունական սփյուռքն է, որ ունի մեկ խոշոր համայնք: Հարավաֆրիկյան Հանրապետությունում հույների թվաքանակը կազմում է 50 հազ.: Այլ երկրներում ո՛չ հայկական, ո՛չ հունական նշանակալի ներկայություն չկա²:

7. *Հեռավոր Արևելքի երկրներում* ինչպես հայկական, այնպես էլ հունական համայնքները նոր-նոր են ձևավորվում: Չինաստանում երկու համայնքների ներկայացուցիչների թվաքանակը կազմում է շուրջ հազարական մարդ:

8. Եվ վերջապես, *Օկեանիայի* երկրներում՝ Ավստրալիայում և Նոր Զելանդիայում, հունական սփյուռքը քանակական բացահայտ առավելություն ունի հայկականի նկատմամբ: Ավստրալիայի հունական համայնքը քանակապես ավելի քան տասն անգամ գերազանցում է հայկականը: Նրա թվաքանակը կազմում է 650-700 հազ., մինչդեռ հայկականինը՝ մոտ 60 հազ.: Ինչ վերաբերում է Նոր Զելանդիային, ապա այստեղ երկու համայնքներն էլ փոքրաթիվ են: Այնուամենայնիվ, եթե հույների թվաքանակը կազմում է 5 հազ., ապա հայերինը՝ ընդամենը 200 (ասել է թե՛ հայկական համայնքը նոր է ձևավորվում):

¹ Greek diaspora, https://en.wikipedia.org/wiki/Greek_diaspora

² Այստեղ հաշվառված չէ Եգիպտոսը, քանի որ այնտեղի հայկական և հունական համայնքները դիտարկվեցին Մերձավոր և Միջին Արևելքի երկրների սփյուռքերի համատեքստում:

Ամփոփելով՝ նշենք, որ հայկական և հունական սփյուռքերի քանակական հարաբերակցությունն աշխարհում ունի հետևյալ պատկերը: Հայկական սփյուռքն առավելություն ունի հետխորհրդային, Մերձավոր ու Միջին Արևելքի և Ծոցի երկրներում, Լատինական Ամերիկայում: Հունական սփյուռքը գերակշռում է Հյուսիսային Ամերիկայում, Աֆրիկայում և Օկեանիայի երկրներում: Եվրոպայում ընդհանուր առմամբ երկու սփյուռքերը քանակական առումով համադրելի են: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ հունական սփյուռքը կենտրոնացած է անգլոսաքսոնական աշխարհում՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում և Կանադայում¹:

Սույն քանակական վերլուծությունն ինքնանպատակ չէ: Գործնական քաղաքականության տեսանկյունից այն առնչվում է սփյուռքում երկու բարեկամ ժողովուրդների փոխօգնության և փոխլրացման, այն է՝ համագործակցության խնդրին, որը հրատապություն է ստացել վերջին շրջանում [տե՛ս 3, էջ 12-21]: Օրինակ՝ այն երկրներում, որտեղ համեմատաբար ուժեղ է հայկական սփյուռքը (օր.՝ Ֆրանսիա) հույները կարող են ապավինել հայերի օժանդակությանը: Եվ հակառակը՝ հունական ստվարաթիվ համայնքներով երկրներում (օր.՝ Գերմանիայում և Մեծ Բրիտանիայում) վերջիններս կարող են անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերել հայերին: Հայկական և հունական սփյուռքերի համագործակցության սույն եղանակը պայմանականորեն կարող ենք անվանել *փոխլրացնող համագործակցության մոդել*:

Օրակարգային հարցերի առումով նույնպես հունական և հայկական սփյուռքերն ունեն որոշակի ընդհանրություններ: Քաղաքականության տեսանկյունից, օրինակ, երկուսն էլ, հասկապես՝ ԱՄՆ-ում, ակտիվ լոբբիստական աշխատանք են ծավալում՝ ի նպաստ իրենց երկրների:

Հունական սփյուռքի համար նույնպես հրատապ է ձուլման վտանգը: Հայկական սփյուռքի առջև ծառայած անվտանգության հոգևոր մարտահրավերները՝ խառնամուսնությունները, ինքնության բաղադրիչների (լեզվի, մշակույթի և այլն) կորուստը, բնորոշ են նաև հունական սփյուռքին: Դրանք, մի կողմից, վկայում են իրենց հասարակություններում հայկական և հունական համայնքների ինտեգրման մասին, ինչը դրական երևույթ է, սակայն, մյուս կողմից, սրում են ազգային ինքության պահպանման խնդիրը երկու համայնքներում էլ:

Օրակարգային խնդիրների ընդհանրությունը լուրջ նախադրյալ է նաև երկու սփյուռքերի համագործակցության համար, քանի որ շատ դեպ-

¹ Տե՛ս Greek diaspora, https://en.wikipedia.org/wiki/Greek_diaspora; The Greek diaspora - Greeks outside Greece, <http://www.hellenism.net/greece/greek-culture/greek-diaspora/>

քերում առկա է շահերի համընկնում: Այդպիսի համագործակցության օրինակ է Ամերիկայի հելլենական առաջնորդության խորհրդի (*Hellenic American Leadership Council*) և Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի (Հայ դատի հանձնախումբ) համատեղ արշավը՝ ԱՄՆ Սենատի վրա ճնշում գործադրելու նպատակով, որպեսզի վերջինս արգելափակի Թուրքիային F-35 կործանիչներ վաճառելու գործարքի իրականացումը¹:

Ինքնակազմակերպման խնդիրներ

Հունական սփյուռքի ինքնակազմակերպման մոդելը հիմնված է բազմաստիճան (քառաստիճան) կոնֆեդերալիզմի (համադաշնայնության) սկզբունքի վրա, որտեղ.

1. *Առաջին* աստիճանի վրա գտնվում են տեղական համայնքները և կազմակերպությունները, որոնք գործում են տվյալ երկրի որևէ քաղաքի կամ վարչատարածքային միավորի (մարզ, նահանգ, շրջան և այլն) շրջանակներում:
2. *Երկրորդ* աստիճանի վրա գտնվում են տեղական համայնքների և հաստատությունների ֆեդերացիաները (դաշնությունները), որոնք իրենց գործունեությունը ծավալում են տվյալ երկրում՝ համապետական մակարդակով:
3. *Երրորդ* աստիճանի վրա տարբեր տարածաշրջանների երկրների հունական համայնքների համադաշնություններն են, որոնք գործում են միջազգային՝ տարածաշրջանային մակարդակով: Այդ տարածաշրջանները 7-ն են՝ ա) Կանադա, բ) ԱՄՆ², գ) Կենտրոնական և Հարավային Ամերիկա, դ) Եվրոպա, ե) հետխորհրդային տարածք, զ) Օկեանիա և Հեռավոր Արևելք և է) Աֆրիկա և Մերձավոր ու Միջին Արևելք:
4. Եվ վերջապես, *չորրորդ* աստիճանի վրա է գտնվում Արտերկրի հույների խորհուրդը (*The Council of Hellenes Abroad*), որն աշխարհի մակարդակով միավորում է վերոհիշյալ կառույցները՝ հանդիսանալով նրանց ընդհանուր «հովանոցը»: Սույն կազմակերպությունը խորհրդակցական մարմին է Հունաստանի Հանրապետության հետ հարաբե-

¹ Տե՛ս Greek and Armenian Americans Press U.S. Senators to Block F-35 Sale to Turkey, <http://www.armenianlife.com/2018/02/14/greek-and-armenian-americans-press-u-s-senators-to-block-f-35-sale-to-turkey/>

² Չնայած ԱՄՆ-ը և Կանադան ոչ թե տարածաշրջաններ, այլ առանձին երկրներ են, այնուամենայնիվ, հաշվի առնելով այդ երկրների մեծության, դրանցում հունական համայնքների ստվարաթվության, այդ երկրների միջազգային դերի ու կշռի և այլ գործոնների համադրությունը՝ դրանք դիտվում են որպես տարածաշրջաններ:

ություններում և ներկայացնում է հունական սփյուռքը (արտահայտում է վերջինիս կարծիքը)¹:

Հունական սփյուռքի ինքնակազմակերպման մոդելն ուշագրավ է նրանով, որ մի կողմից՝ աստիճանակարգային (հիերարխիկ) կառուցվածքի հիման վրա միավորում է բոլոր համայնքներն ու հաստատությունները՝ ապահովելով միասնական կառավարման կենտրոն, իսկ մյուս կողմից՝ առանձին համայնքներն ու հաստատությունները պահպանում են իրենց ինքնուրույնությունը, քանի որ միավորումը հիմնված է համադաշնության սկզբունքի վրա: Այլ կերպ ասած՝ հունական սփյուռքի պարագայում առկա է ապակենտրոնացված միավորման մոդելը, որը հիմնված է «բազմազանություն միասնության մեջ» սկզբունքի վրա:

Հայկական սփյուռքի պարագայում մինչև այժմ եղել են դաշնային կամ համադաշնային հիմունքներով միավորման որոշ տարրեր: Դա հատկապես բնորոշ է եվրոպական երկրների հայ համայնքներին: Օրինակ՝ Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը (ՖՀԿՀԽ) կամ Շվեդիայի հայկական միությունների համակարգող մարմինը (ՇՀՄՀՄ) կարելի է դիտել որպես այդ երկրների հայկական կազմակերպությունների համադաշնություն: Հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիայի (ՀՀԿՖ) անվանումն ավելի է համապատասխանում դաշնայնության սկզբունքին: ՌԴ-ում նման գործառույթ է իրականացնում Ռուսաստանի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը (ՌՀԿՀԽ): Տարածաշրջանային մասշտաբով հայկական կազմակերպությունները միավորող կառույց է Եվրոպայի հայկական միությունների ֆորումը (ԵՀՄՖ), որի նպատակն է «պայմաններ ստեղծել Եվրոպայի հայկական կազմակերպությունների միջև մշտական հաղորդակցություն ապահովելու, համագործակցություն հաստատելու և ամրապնդելու, համատեղ խնդիրներ ու ծրագրեր քննարկելու և դրանք միասնաբար լուծելու համար» [4, էջ 661]:

Մի կողմից՝ վերոհիշյալ կառույցները միավորում են Ֆրանսիայի, Շվեդիայի, Հոլանդիայի, ավելի լայն մասշտաբով՝ Եվրոպայի հայկական կազմակերպությունները և համակարգում նրանց գործունեությունը, իսկ մյուս կողմից՝ յուրաքանչյուր հայկական կազմակերպություն ինքնուրույն է և պահպանում է անկախ գործելու հնարավորությունները: Դրա լավագույն վկայությունը դրսևորվեց Ֆրանսիայի վերջին նախագահական ընտրու-

¹ Greek Diaspora and the General Secretariat for Greeks Abroad, <http://www.ggae.gr/frontoffice/portal.asp?cpage=node&cnode=16&clang=1>

թյունների գործընթացում, երբ ՖՀԿՀՆ-ն և Ֆրանսիայի Հայ դատի հանձնախումբը միմյանցից անկախ արտահայտեցին իրենց դիրքորոշումն այդ ընտրությունների կապակցությամբ՝ սատարելով Էմանուել Մակրոնի թեկնածությունը¹ (վերջինս քվեարկության արդյունքներով ընտրվեց Ֆրանսիայի նախագահ):

Վերոհիշյալ օրինակները, սակայն, դաշնային/համադաշնային հիմունքներով սփյուռքի միավորման միայն առանձին դեպքեր կամ տարրեր են: Իսկ առհասարակ, որևէ մոդելով ողջ հայկական սփյուռքի ինստիտուցիոնալ միավորման խնդիրը, չնայած Սփյուռքի ավելի քան հարյուրամյա գոյությանը, դեռևս շարունակում է մնալ օրակարգային:

Պետական քաղաքականություն

Ի տարբերություն Հայաստանի, որտեղ Սփյուռքի հետ հարաբերությունների համար ստեղծված կառույցն ունի պետական գերատեսչության՝ նախարարության կարգավիճակ, Հունաստանում այդ նպատակով գործող կառույցը կոչվում է Արտերկրի հույների գլխավոր քարտուղարություն (ԱՀԳՔ): Այն «կառավարության համակարգող մարմինն է՝ Սփյուռքի հույների նկատմամբ պետական քաղաքականության իրականացման համար»²: ԱՀԳՔ առաջնահերթությունն է հայրենիքի հետ հունական սփյուռքի, ինչպես նաև հունական համայնքների միջև կապերի ամրապնդումը³:

ԱՀԳՔ-ն կոչված է ոչ միայն իրականացնելու հունական պետության քաղաքականությունը Սփյուռքի նկատմամբ, այլև այլ հաստատություններին նույնպես ներգրավելու այդ քաղաքականության մշակման և իրականացման մեջ: Քարտուղարության նպատակներից է հունական հիմնադրամների և հաստատությունների, հատկապես հունական խորհրդարանի, համալսարանների, ակադեմիական հանրության և տեղական կառավարման մարմինների մասնակցության ապահովումը սփյուռքի նկատմամբ քաղաքականության ձևավորման մեջ⁴: Ասել է թե՛ քարտուղարությունն ինչ-որ տեղ կոչված է համակարգելու Հունաստանի պետական և ոչ պետական զանազան մարմինների գործունեությունը սփյուռքի նկատմամբ: Այդ պատճառով էլ այն բնութագրվում է որպես համակարգող մարմին:

¹ Տե՛ս ՀՅԴ-ն Ֆրանսիայում կաջակցի Մակրոնին, <http://www.1in.am/2135643.html>

² Greek Diaspora and the General Secretariat for Greeks Abroad, <http://www.ggae.gr/frontoffice/portal.asp?cpage=node&cnode=16&clang=1>

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

Հայաստանում նույնպես Մփյուռքի նախարարությունն ունի սփյուռքի նկատմամբ այլ մարմինների գործունեությունը համակարգելու գործառույթ: Մասնավորապես, նախարարության կանոնադրությամբ որպես վերջինիս գործառույթներից մեկը սահմանվում է. «Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի միջև հարաբերությունների ոլորտում գործող հանրապետական գործադիր և տարածքային մարմինների գործունեության համակարգում և Հայաստանի Հանրապետությունում գործող համահայկական ու սփյուռքի հասարակական կազմակերպությունների հետ գործակցություն» [5]: Ուստի, պատահական չէ, որ նախարարությունը ձևավորումից ի վեր համագործակցում է բազմաթիվ պետական և ոչ պետական (հասարակական և այլն) հաստատությունների հետ՝ որոշ չափով նաև համակարգելով նրանց գործունեությունը: Իսկ Հայաստանում հաստատված սիրիահայերին աջակցության խնդրում նախարարության հիշյալ գործառույթը ստացավ էլ ավելի վառ արտահայտություն ու ինստիտուցիոնալացված բնույթ: ՀՀ նախագահի որոշմամբ Հայաստան տեղափոխված սիրիահայերի աջակցության ծրագրերի համակարգումը ստանձնեց ՀՀ Մփյուռքի նախարարությունը: ՀՀ Մփյուռքի նախարարն է ղեկավարում ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովը [6]:

ԱՀԳՔ նպատակներից է նաև հունական սփյուռքի ակտիվ գործունեությանը նպաստելը, այն է՝ համայնքների, կազմակերպությունների, ազգային-տեղական միությունների և հոգևոր-աշխարհիկ ժողովների կողմից ցանկացած տեղին նախաձեռնության խրախուսումը¹:

Ուշագրավ է հունական պետության քաղաքականությունը հայրենադարձության և խառնամուսնությունների դեպքում սփյուռքյան նոր սերնդի ազգային ինքնության պահպանման հարցում: Այս երկու հարցերում էլ որպես գործիք պետության համար ծառայում է քաղաքացիության ինստիտուտը: Ըստ քաղաքացիության մասին Հունաստանի օրենսդրության՝ արտասահմանում ծնված էթնիկ հույնը կարող է ստանալ Հունաստանի քաղաքացիություն հպատակագրման (նատուրալիզացիայի) միջոցով, եթե ապացուցի, որ իր ծնողներից կամ մեծ ծնողներից (տատ, պապ) մեկը ծնվել է որպես Հունաստանի քաղաքացի: Դրա համար անհրաժեշտ է որպես փաստաթուղթ ներկայացնել այդ նախնու (նախնիների) ծննդյան և ամուսնության վկայականները²:

¹ Նույն տեղում:

² Greek diaspora, https://en.wikipedia.org/wiki/Greek_diaspora

Հետևություններ և առաջարկություններ

Համեմատական քննության ենթարկելով հայկական և հունական սփյուռքերը, ինչպես նաև Հայաստանի և Հունաստանի պետական քաղաքականությունը սփյուռքի նկատմամբ՝ կարելի է հանդես գալ հայ իրականության համար երկու գործնական առաջարկությամբ՝ հետևյալի մասին.

1. Սփյուռքի նկատմամբ քաղաքականություն իրականացնող կառույցների գործունեության համակարգում: ՀՀ-ում, բացի Սփյուռքի նախարարությունից, կան ինչպես պետական (օրինակ՝ Միգրացիոն պետական ծառայություն, Հայաստանի զարգացման հիմնադրամ և այլն), այնպես էլ հասարակական (Միրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն ՀԿ, «Հալեպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ և այլն) բազմաթիվ կառույցներ, որոնց գործունեությունը նույնպես որոշակիորեն ուղղված է Սփյուռքին (կամ վերջինիս հետ աշխատանքը հանդիսանում է նրանց գործունեության մի մասը): Կարծում ենք, այդ հաստատությունների կողմից Սփյուռքի նկատմամբ տարվող քաղաքականության և աշխատանքների համակարգումը կօգնի խուսափել կրկնություններից և ավելի արդյունավետ կդարձնի գործադրվող ջանքերը:

Ինչպես նշվել է վերը, ՀՀ Սփյուռքի նախարարությունը համակարգում է Սփյուռքի հետ աշխատանքներ տանող այլ կառույցների գործունեությունը: Այդ նպատակով անգամ համագործակցության հուշագրեր են ստորագրվել այլ գերատեսչությունների՝ կրթության և գիտության, առողջապահության, մշակույթի նախարարությունների հետ: Կարծում ենք, Սփյուռքի նախարարության այս գործառույթն ավելի ինստիտուցիոնալ մակարդակի վրա բարձրացնելու նպատակով կարելի է ստեղծել Սփյուռքին ուղղված գործունեություն ծավալող հաստատությունների խորհուրդ՝ ՀՀ Սփյուռքի նախարարության ղեկավարությամբ: Խորհուրդը կգլխավորի սփյուռքի նախարարը:

2. Սփյուռքի ինքնակազմակերպում: Հունական փորձից կարելի է վերցնել սփյուռքի ինքնակազմակերպման համադաշնային մոդելը: Հայկական սփյուռքի պարագայում նույնպես այն կարող է լինել քառաստիճան.

- Առաջին աստիճանում կլինեն որևէ երկրի տարբեր քաղաքների կամ շրջանների հայ համայնքները: Սփյուռքի ինքնակազմակերպման այս ինստիտուցիոնալ «բջիջները» կարելի է կոչել տվյալ քաղաքի կամ շրջանի անունով: Օրինակ՝ Հալեպի հայ համայնք:
- Երկրորդ աստիճանում կլինեն այդ համայնքների դաշնությունները՝ տվյալ պետության մակարդակով: Այս դեպքում ինստիտուցիոնալ

կառույցը կարելի է կոչել տվյալ երկրի անունով: Օրինակ՝ Սիբիրայի հայ համայնք, Սիբիրայի հայ համայնքների միություն կամ Սիբիրայի հայերի միություն:

- Երրորդ աստիճանում կլինեն այդ դաշնությունների կոնֆեդերացիաները՝ տարածաշրջանային մակարդակով: Այս դեպքում ինստիտուցիոնալ կառույցը կարելի է կոչել տվյալ տարածաշրջանի անունով: Օրինակ՝ Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների միություն: Ի տարբերություն հունական սփյուռքի՝ հայկականի պարագայում տարածաշրջանային համադաշնությունները կարելի է ձևավորել հետևյալ կերպ. ա) Հյուսիսային Ամերիկա և Ավստրալիա¹, բ) Հարավային կամ Լատինական Ամերիկա, գ) Եվրոպա, դ) հետխորհրդային երկրներ, ե) Մերձավոր և Միջին Արևելք, զ) Հեռավոր Արևելք:
- Եվ վերջապես, չորրորդ աստիճանում կլինի վերոհիշյալ համադաշնությունները միավորող համաշխարհային մարմինը, որը պայմանականորեն կարելի է կոչել Սփյուռքահայերի խորհուրդ կամ Արտերկրի հայերի (ինչպես ընդունված է այլ ժողովուրդների, մասնավորապես՝ հունական, ռուսական և այլ սփյուռքերի պարագայում) խորհուրդ:

Համադաշնային հիմունքներով հայկական սփյուռքի միավորման որոշ դրսևորումների մասին խոսք գնաց վերը: Այնուամենայնիվ, դրա լավագույն օրինակը տալիս է Հայ Ավետարանական եկեղեցին՝ որպես համազգային կառույց: Վերջինս չունի միասնական նվիրապետություն: Փոխարենն ունի հինգ տարածաշրջանային միություններ (Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միությունը, Ֆրանսիայի և Եվրոպայի Հայ Ավետարանական միությունը, Հյուսիսային Ամերիկայի Հայ Ավետարանական միությունը, Հայաստանյայց Ավետարանական եկեղեցու միությունը, Եվրասիայի Հայ Ավետարանական միությունը), որոնք ներառում են համապատասխան տարածաշրջանների հայ ավետարանական եկեղեցիները: Որպես հիշյալ տարածաշրջանային միությունների գործունեությունը համակարգող ինստիտուցիոնալ մարմին 1978-ից գործում է Հայ Ավետարանական համաշխարհային խորհուրդը²: Այնպես որ, սփյուռքի ինքնա-

¹Նկատի ունենալով, որ Ավստրալիան ԱՄՆ-ի և Կանադայի հետ միասին գտնվում է միևնույն անգլոսաքսոնական քաղաքակրթական տիրույթում: Նույն հիմնավորմամբ՝ սկզբունքորեն այս տարածաշրջանի մեջ կարելի է ներառել նաև Մեծ Բրիտանիայի հայ համայնքը եվրոպական տարածաշրջանի մեջ թողնելով միայն մայրցամաքային Եվրոպայի երկրները հայ համայնքները:

²Տե՛ս <http://eca.am/about/who-we-are01>

կազմակերպման համադաշնային մոդելը՝ տարածքային սկզբունքով, հայ իրականության պարագայում լիովին անձանոթ երևույթ կամ նորություն չէ: Դրա համար արդեն իսկ կա որոշակի փորձ:

Մայիս, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Հովյան Վ., Եզիպտոսի հայ համայնքը, 21-րդ ԴԱԸ, թիվ 3, 2015:
2. Հովյան Վ., Եզիպտոսի հայ ավետարանական համայնքը, Գլոբուս. Ազգային անվտանգություն, թիվ 3, 2011:
3. Հովյան Վ., Սփյուռքում հայ-հունական համագործակցության խնդիրները, Գլոբուս, 2017, թիվ 5:
4. «Հայ սփյուռք» հանրագիտարան, գլխ. խմբ.՝ Հ.Այվազյան, Ե., «Տիգրան Մեծ», 2003:
5. ՀՀ Սփյուռքի նախարարության կանոնադրություն, կետ 9, ենթակետ 23, www.mindiaspora.am
6. Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարություն, Համառոտ տեղեկանք սիրիահայերի հիմնախնդիրների մասին, հունիս, 2014թ., նյութը՝ էլեկտրոնային տարբերակով, մեզ է տրամադրել ՀՀ Սփյուռքի նախարարությունը:
7. Մահակյան Մ., Չինաստանի հայկական համայնքը մեր օրերում, Գլոբուս, թիվ 5, 2014:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈՐՁ

Վահրամ Հովյան

Ամփոփագիր

Քանակական առումով հայկական և հունական սփյուռքերը համեմատելի են միմյանց հետ: Աշխարհագրական սփռվածության տեսանկյունից կան ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Գրեթե նույնն են երկու սփյուռքերի օրակարգային հիմնախնդիրները, ինչը լուրջ հիմք է արտերկրում երկու բարեկամ ժողովուրդների համագործակցության համար: Հունական և հայկական սփյուռքերի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ. ա) սփյուռքի հետ աշխատանքներ տանող պետական և հասարակական հաստատությունների գործունեության համակարգումն էլ ավելի բարձր ինստիտուցիոնալ մակարդակի հասցնելու համար նպատակահարմար է ստեղծել սփյուռքին ուղղված գործունեություն ծավալող հաստատությունների խորհուրդ՝ ՀՀ Սփյուռքի նախարարության գլխավորությամբ, բ) կարելի է հայ իրա-

կանություն մեջ տեղայնացնել բազմաստիճան (քառաստիճան) կոնֆեդերալիզմի (համադաշնայնության) վրա հիմնված սիյունքի ինքնակազմակերպման հունական մոդելը:

КОМПАРАТИВНОЕ ДИАСПОРОВЕДЕНИЕ: ГРЕЧЕСКИЙ ОПЫТ

Ваграм Овян

Резюме

Армянская и греческая диаспоры сопоставимы друг с другом по количественному признаку. В плане географического распространения есть как черты сходства, так и различия. У обеих диаспор практически совпадают вопросы повестки дня, что создает серьезные предпосылки для сотрудничества двух братских народов за рубежом. Сравнительное изучение греческой и армянской диаспор показывает, что: а) для повышения институционального уровня государственной и общественной работы, проводимой с диаспорой, целесообразно создать совет учреждений, осуществляющих адресованную диаспоре деятельность, во главе с Министерством диаспоры РА; б) можно имплементировать в Армении греческую модель самоорганизации диаспоры, основанную на многоуровневом (четырёхуровневом) конфедерализме.

COMPARATIVE DIASPORA STUDIES: THE GREEK EXPERIENCE

Vahram Hovyan

Resume

The Greek and Armenian Diasporas are comparable in size. Geographically, there are both commonalities and differences between them. The agenda problems of the both Diasporas are almost the same, which provides a common ground for cooperation between the two brotherly people. The comparative study of Greek and Armenian diasporas shows that: a) in order to bring the activities of the government and non-government organizations working with diaspora to a higher institutional level, it is worth creating a council of such organizations under the leadership of the Ministry of Diaspora, b) the Greek model of diaspora self-organization based on a multi-level (four-level) confederacy can be localized in Armenian realities.

Հավելված

Հայկական և հունական համայնքների թվաքանակն աշխարհում

ԵՐԿԻՐ	ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՈՔ ¹	ՀՈՒՆԱԿԱՆ ՍՓՅՈՒՈՔ ²
Հյուսիսային Ամերիկա		
ԱՄՆ	1.200.000	3.000.000
Կանադա	81.500	350-400.000
Հարավային կամ Լատինական Ամերիկա		
Արգենտինա	100.000	5.000
Բրազիլիա	40.000	30.000
Չիլի	1.500	5.000
Ուրուգվայ	15.000	2.000
Վենեսուելա	4.000	2.000
Եվրոպա		
Ֆրանսիա	450-500.000	55.000
Գերմանիա	50.000	400-450.000
Իսպանիա	40.000	6.000
Բուլղարիա	30.000	25.000
Լեհաստան	25-30.000	3.000
Բելգիա	20.000	38.000
Մեծ Բրիտանիա	16.000	400.000
Հունգարիա	15.000	5.000
Նիդերլանդներ	10.000	30.000
Չեխիա	5-6.000	2.400
Շվեդիա	5-6.000	26.000
Ավստրիա	5.000	8.000
Շվեյցարիա	4.500	11.000
Դանիա	3.000	4.000
Իտալիա	3.000	45.000
Ռումինիա	2.500	10.000
Նորվեգիա	1.000	1.700
Սլովակիա	500	120
Իռլանդիա	-	1.500
Լյուքսեմբուրգ	-	2.000

¹ Հայկական համայնքների վերաբերյալ տվյալները, բացառությամբ այն տվյալների, որոնց համար կա առանձին հղում, վերցվել են ՀՀ Արտաքին գործերի նախարարության կայքից (www.mfa.am), ՀՀ Սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականից (www.hayernaysor.am) և «Հայ սփյուռք» հանրագիտարանից [4], որոնցում համապատասխան համայնքի մասին առկա է առանձին հոդված:

² Հունական համայնքների վերաբերյալ տվյալները վերցվել են Արտերկրի հույների գլխավոր քարտուղարության (ԱՀԳՔ) կայքից, հետևյալ հղմամբ՝ www.ggae.gr/appdata/Content/Greek_Diaspora_Population.xls

ԵՐԿԻՐ	ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ	ՀՈՒՆԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ
Պորտուգալիա	-	200
Սլովենիա	-	30
Հետխորհրդային երկրներ		
Ռուսաստան	2-2.500.000 ¹	100.000
Ուկրաինա	400.000	92.000
Վրաստան	170.000 ²	12.000
Ուզբեկստան	80.000 ³	4.000
Ղազախստան	20-25.000	12.000
Մոլդովա	12.000	3.000
Բելառուս	8.500	4.500
Լատվիա	4.500	100
Լիտվա	2.100	180
Էստոնիա	1.800	150
Ղրղզստան	1000	700
Մերձավոր ու Միջին Արևելք և Օսցի երկրներ		
Լիբանան	150.000	3.500
Սիրիա	25.000 ⁴	1.400
Իսրայել	2.400	13.000
ԱՄԷ	10.000 ⁵	3.500
Եգիպտոս	7-8.000 ⁶ [1, էջ 90]	4.000
Քուվեյթ	5000	500
Հեռավոր Արևելք		
Չինաստան	1000 [տե՛ս u 7, էջ 48]	1.040
Աֆրիկա		
Հարավային Աֆրիկա	300	50.000
Զիմբաբվե	-	1.500
Օկեանիա		
Ավստրալիա	60.000	650-700.000
Նոր Զելանդիա	200	5.000

¹ Ոչ պաշտոնական տվյալներ:

² Грузия в цифрах – последняя перепись населения, <http://sputnik-georgia.ru/georgia/20160429/231405303.html>

³ Ուզբեկստանի հայ համայնք. Մեզ անհրաժեշտ է զգալ հայրենիքի ջերմությունը, <https://news.am/arm/news/74715.html>

⁴ Ըստ ՀՀ Սփյուռքի նախարարության տվյալների:

⁵ ԱՄԷ ավելի քան 10 հազարանոց հայկական համայնքը համախմբվում է ազգային կառույցների շուրջ, <http://hayernaysor.am/archives/219430>

⁶ Վերջին օրերի ցույցերն ավելի գոտեպնդեցին եգիպտահայերին, <http://www.lin.am/196946.htm>

«21-ԴԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 13.07.2018թ.
Թիվ 3 (79), 2018թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 7 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում